



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1920

3685

III month

49199-8  
L-61

Y-4-WM

096 5/21/58

5/2002

2011

Ընդունած է որպես դասագիրք պետական դպրոցների համար

1491.99 - 8

L-91  
My.

# L U T U U F E R

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

Կազմեցին

ԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆ, ՑՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

۱۷۰




ՏԱՄՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴԻ ՏԻԳ



Մեր ինքնուրոյն եւ փոխադրած յօդածների, ինչպէս եւ մեր նկարների  
արտատպութեան իրաւոնքը վերապահած է:

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Տալարան «Պողոսի և Ա. Պօղոսի անի, Արքիս. Մելիքեան փ. № 1.  
1920



## 1. Ամենից լաւ տունը

Այնտեղ, ուր հովք խաղում է ազատ  
ու ջուրն աղմբկով անվերջ փըրփըրում,  
այնտեղ իր բարի, իր սիրող մօր հետ  
մի շատ անհանգիստ տղայ էր ապրում  
մի հին խըրճիթում,  
մի գորշ խըրճիթում,  
գետի եղերքին,  
ծառերի տակին:

Մի օր էլ եկաւ անհանգիստ տղան,  
կանգնեց իր բարի, իր սիրող մօր դէմ.  
«Մայրիկ, այստեղից պէտք է հեռանամ.  
միակ ձանձրալի տեղը, որ դիտեմ,

էս հին խըրճիթն է,  
էս գորշ խըրճիթն է,  
գետի եղերքին,  
ծառերի տակին:

«Թնդ գիտմ, շրջեմ աշխարհից աշխարհ,  
ձամբորդեմ լաւ-լաւ տեսնելու,  
ամենից լաւը ընտրեմ մեզ համար,  
զամ քեզ էլ առնեմ ու փախչենք հեռու

Էս հին խըրճիթից,  
Էս գորշ խըրճիթից,  
զետի եղերքին,  
ծառերի տակին»:

Ու պնաց, երկար թափառեց տղան,  
մեծ ու հոյակապ շատ տըներ տեսաւ,  
բայց միշտ, ամեն տեղ պակաս  
էր մի բան...

Ու հառաչելով ետ վերադարձաւ  
Էն հին խըրճիթը,  
Էն գորշ խըրճիթը,  
զետի եղերքին,  
ծառերի տակին»:

«Գըտար, զաւակս», հարցրեց մայրը,  
ուրախ նայելով իր տղի վըրա:  
«Ման եկայ, մայրիկ, աշխարհից աշխարհ,  
ամենից սիրուն, լաւ տունը որ կայ,

Էս հին խըրճիթն է,  
Էս գորշ խըրճիթն է,  
զետի եղերքին,  
ծառերի տակին»:

- 1) Գորշ ու հին խըրճիթը ինչո՞ւ էր ամենից լար նրա համար:  
2) Մեծ ու հոյակապ տներում ի՞նչ բան էր պակաս նրա համար:

Գրիր՝ ո՞րտեղ էր ապրում անհանգիս տղան, ո՞ւր զիաց եւ վերադարձն ի՞նչ ասաւ մօրը:

Եղերք—ափ:  
Մըկել—ման կալ, պտըտել:  
Թափառել—ման գալ գէս ու դէն, առանց որոշ նպատակի:  
Հոյակապ—մեծ ու զեղեցիկ, փառաւոր:  
Հառաչ—ախ, հառաչել—ախ քաշել:

## 2. Առաջին դասը

ա

Առաջին դասին եկաւ մեր նոր վարժապետը: Բարձրահասակ, անմօրում մի մարդ, երկար ու սկզբով ճակատի մէջտեղը՝ մի խոր կնձիու:

Երբ մենք գրքերն ու տետրակներն էինք հանում ու պատրաստում էինք գրիչները, նա լուռ կանգնել էր՝ մի ձեռքով յենւած ամբիոնին: Նա լուրջ ու մոայլ դիտում էր պատուհանից դուրս, դիմացի տան կտուրը:

Յետոյ սկսեց ման գալ նստարանների մէջ և թելադրել: Մոտեցաւ աշակերտներից մէկին, բանեց նրա կզակը, հարցրեց՝ ինչո՞ւ է այդպէս դժգոյն, ու ձեռքը դրաւ ճակատին իմանալու համար՝ արդեօք ջերմ չունի:

Այդ միջոցին մի ուրիշ տղայ ուսուցչի ետևից սկսեց ծամածութիւններ անել: Վարժապետը յանկարծ շուռ եկաւ, տղան վախեցած նստեց տեղը ու զլուխը կախ սպասում էր, թէ հիմա ինչ է լինելու:

Վարժապետը ձեռքը դրաւ նրա զլխին ու տսաւ հանգիստ, —Միւս անգամ այդ տեսակ բան չանես:

Ուրիշ ոչինչ, և շարունակեց թելադրելը:

բ

Երբ մեր աշխատանքը վերջացրել էինք, վարժապետը բարձրացաւ ամբիոն, նստեց, լուռ նայեց մեզ ամենքիս, ապա հանդարտ ու մեզմ ձայնով ասաւ:

—Լսեցէք, տղերը: Ամբողջ մի տարի մենք միասին աշխատելու ենք. ջանանք, որ լաւ անցնեն մեր օրերը: Ես ընտա-

նիք չունիմ: Աւնէի մի մայր, նա էլ այս տարի մեռաւ: Մենակ եմ. ձեզնից զատ աշխարհիս երեսին ոչ ոք չունիմ: Դուք էք իմ զաւակները: Ես սիրում եմ ձեզ. դուք էլ սիրեցէք ինձ: Յոյց տւէք որ լաւ ու բարի տղերք էք: Բառերով խոստում չեմ ուզում ձեզնից. Ես վստահ եմ, որ արդէն «այս» ասացիք ձեր սրտերում... Շնորհակալ եմ:

Հնչեց զանգը. անձայն հաւաքեցինք տետրակները ու լուս դուրս էինք զալիս իրար ետևից, երբ չարութիւն անող աշակերտը մօտեցաւ վարժապետին ու դողդոջուն ձայնով ասաւ.

—Ներեցէք ինձ, պարոն:

Վարժապետը բռնեց նրա գլուխը, ճակատը համբուրեց ու ասաւ.

—Գնա, տղաս:

- 1) Ո՞րը եղաւ նոր վարժապետի առաջին դասը:
- 2) Վարժապետը ինչո՞ւ այդպէս լուրջ էր ու մույլ:

Պատմի՞ր՝ ձեր գպրոցի առաջին դասն ի՞նչպէս էր:

Գրի՞ր՝ ի՞նչ արաւ չար տան, ուսուցիչը ի՞նչպէս վարեց եւ ի՞նչ արաւ տան, երբ զանգը տիմ:

Կնճիռ—կաշուի ծալք, գլխաւորապէս դէմքին:  
կզակ—ներքնի ծնոտի սուր մասը:  
ծամածութիւն—դէմքի ծրմուլը, սովորաբար ծաղրելու համար:  
մեղմ—հանգիստ ու անուշ:  
ջանալ—աշխատել, ճիգ թափել:  
խոստում—տւած խօսք:  
վստահ—հաստատ հաւատացած:

1. Բարձրահասակ մարդ. իսկ ինչպէս ենք ասում կարճ հասակ ունեցողին, միջին հասակ ունեցողին:
2. Հիւանդը ջերմ ունի. ուրիշ ինչպէս կասես:
3. Անմօրուս—մօրուք չունեցող. ինչպէս կասես բեխ չունեցող, մաղ... ատամ... ձեռք... ոտք չունեցողին:

### 3. Վեր կաց

Վեր կաց, մանուկ, խորունկ քնից,  
արևն արդէն ծագել է.  
Վեր կաց փափուկ քո անկողնից,  
հաւը փաղուց խօսել է:  
Դէ, շուտ, վեր կաց, էլ մի քընի,  
ծոյլ ու անհոգ՝ անկողնում.  
առ գրքերդ, դպրոց զիմի,  
որ բախտ գտնես դու կեանքում:

1. Մանուկը վեր կացաւ, մանուկը զարթնեց. Բնչ տարբերութիւն կայ:

2. Փափուկ անկողին, փափուկ բարձ. Ինչպէս կը լինի հակառակը:

3. Հաւը խօսեց. ուրիշ կերպ ինչպէս կասես:

### 4. Փոքրիկ ձիավար

Դեռ մանկութիւնից ձի նստելու սաստիկ սէր ունէի. Հեծնում էի մի փայտի վրա ու ժամերով վազվզում էի բակում:

Յետոյ երբ մի քիչ մեծացայ՝ փայտի նժոյզին փոխարինեցին կենդանի արարածները. Հորթերը հանգիստ չունէին ձեռքիցս, մինչև անզամ գայլի նման մեր ահազին շունը. Բոնում էի նրա երկար ականջներից ու թռչում մէջքին. բարի շունը ներում էր իմ չարութիւնները ու գնում էր այն կողմը, ուր ես շուռ էի տալիս:

Երբ տասը տարեկան դարձայ, ամեն երեկոյ անհամբեր սպասում էի նախրի արօտից գառնալուն. Հենց որ հեռակց

Նկատում էի մեծ ճամբի վրա փոշու բարձրանալը, վազում էի տաւարի առաջ, բռնում էի աւանակներից մէկին ու ցատկում մէջրին. Ի՞նչ ուրախութիւն էր, երբ նա վազում էր հեռու դաշտերի մէջ...

Աւանակներից յետոյ հերթը եկաւ մատակ ձիերին. Պինդ բռնած վայրենի մատակի բաշից, մըրկի պէս պարտեցնում էի մերկ ու առանց սանձի ձիուն. Հովիւները բարկանում էին, զգուշացնում, բայց ովք էր ականջ գնողը:

Քանի՞-քանի անգամ վեր եմ ընկեր քանի անգամ կոտրել եմ ձեռս, ոտս, քանի անգամ տուն են տարել ինձ երեսս ջարդւած ու արիւնլւայ...

Մայրս լաց էր լինում, ասում էր, որ ես «սատանի ծընունդ եմ» և գնում գանգատուում էր վարժապետիս:

Ոչինչ չէր օգնում:

Աւելի հասուն տարիքում ի՞նչ պարապմունք կը սիրէ այդ տղան:

Պատմի՞ր դու ի՞նչ բանի սէր ունեիր մանկութեանդ:



Նժոյգ—հեծելու լաւ տեսակի ձի:  
Փոխարինել—մի բանի տեղը, մի բանի փոխարէնը բռնել, յաջորդել:  
արարած—Աստծու ստեղծած, կենդանի արարած—անասուն:

**մատակ—էդ ձի:**  
բաշ—ձիու վզի երկար մազերը:  
մըրկիկ—սաստիկ քամի, փոթորիկ:  
արիւնլւայ—երեսը արիւնոտած, արիւն և լւանալ ամառներից, այսինքն՝ արիւնով լւացած:  
սատանի ծնունդ—սատանից ծնւած, սատանի ծուտ:

1. Զիավար, մերենավար. Էլի ի՞նչ վարող: Ի՞նչ ասել է վարել արմատը:
2. Նստել և հեծնել. Ի՞նչ տարբերութիւն ունի: Օրինակներ բեր:
3. Շան գլուխը շուռ էի տալիս. ուրիշ ի՞նչպէս կասես:
4. Ո՞րն է նախիրը. ո՞րն է հօտը:
5. Հերթը եկաւ. ուրիշ կերպ:

## 5. Այգեկութ

Աշունը սարից որ այգի հասաւ,  
այգու ծառերը բեռնւած տեսաւ,  
զէմքը խոժոռեց ու չեկաւ դուրը.  
«Էտ պտուղները ցած առէք, ասաւ,  
էտ զեղձն ու խնձոր, խաղողն ու նուռ,  
ու վատ չի լինի, եթէ փակէք դուռը»:

Աշնան պատւէրը հէնց որ լսեցին,  
մարդիկ շտապով այգի վազեցին.  
ի՞նչ բէֆ, ի՞նչ խնդում, շատ ուրախացան...  
Քաղլակ ու կթոց իսկոյն ուսեցին,  
կրեցին մառան, կրեցին հնձան.  
ծառն ու որթերը ձեռաց մերկացան:

Աշունը ի՞նչ է սիրում: Իսկ մենք ի՞նչ ենք սիրում աշնանը:


Գրի՞ր մարդիկ ի՞նչ արին այգում, երբ աւանը եկաւ:

այգեկութ—այգեքաղ:  
զէմքը խոժոռել—խիստ ու դժգոհ զէմք շինել:  
քաղլակ—փոքրիկ կողով, որի մէջ քաղած պտուղը գնում են:

կթոց—մեծ կողով: Ո՞րն է արմատը:  
որթ—խաղողի թուփ, վազ:

- Ի՞նչ ասել է՝ ուսել, խնդում, պատւէր, ձեռաց:
- Ի՞նչ են անում մառանում. ի՞նչ են անում հնձանում:
- Ծառերը բեռնւած են. ուրիշ ի՞նչպէս կասես:

## 6. Դեղձ



Արուսեակը երկու կարմիր դեղձ  
ձեռքին՝ ուրախ-ուրախ վաղեց խո-  
հանոց:

Խոհանոցում կանգնած էր լւացք  
անողի փոքրիկ, գունատ աղջիկը  
պատուած շորերով: Յանկարծ  
դեղձերից մէկը դուրս պրծաւ Արուսեակի ձեռքից ու գլորւեց  
աղջկայ կողմը: Արուսեակը շտապով կոացաւ, բռնեց դեղձը,  
ինքն էլ չէր իմանում ինչու՝ կարմրեց ու փախաւ խոհանո-  
ցից դուրս:

Երկար մտածում էր: Վերջն ինքն իրան ասաւ.

—Էս մէկը կուտեմ, միւսը կը տանեմ նրան:

Ու մէկը կերաւ: Մնաց մի մեծ, փափուկ, կարմիր դեղձ,  
թաւիշի նման:

Շուտով դրանից էլ միայն կորիզը մնաց:

Արուսեակը շփոթւած վագեց մօր սենեակը:

—Մայրիկ, դու հօ ինձ էիր տւել այն դեղձերը:

—Այն, աղջիկս:

—Տւել էիր որ ուտեմ:

—Այն:

Արուսեակը ոչինչ չը պատասխանեց,  
բայց անհանգիստ էր:



—Տւել էր ու կերայ: Ի՞նչ վատ բան եմ արել որ...  
Բայց ինչ էլ որ անում էր՝ լւացք անողի աղջիկը աչքից  
չէր հեռանում:

Ի՞նչն էր, որ Արուսեակին հանգիստ չէր տալիս,  
Գր ի՞ր՝ ի՞նչ պատահեց, երբ Արուսեակը մտաւ խոհանոց եւ ին-  
չո՞ւ կարմրեց:

Առաջ.—Կուշտը քաղցածին մանր կը բրդի:

Թաւիշ—մախմուր, մետաքսէ խաւոտ կտոր:

1. Ի՞նչ տարբերութիւն կայ այս բառերի մէջ. պատռել ու  
պատռել, կտրել—կտրտել, կոտրել—կոտրտել: Ի՞նչ աւելա-  
ցրինք և որտեղ՝ այդ տարբերութիւնն ստանալու համար:

2. Լւացք անողին մէկ բառով ի՞նչ կասենք: Իսկ ներկ անո-  
ղին, կոիւ անողին... Ո՞րն է մասնիկը և ի՞նչ է նշանակում այդ  
մասնիկը:

## 7. Գիւղացին եւ ծառը

Փայտհատ Մոսին

Կացինն ուսին

մտաւ անտառ:

«Հոգիս», ասաւ  
նրան մի ծառ.

«Դալար մնան քո կոները,  
կացինդ առ, էս ծառերը  
չորս բոլորս ջարդիր զատ-զատ.  
ինձ չեն թողնում բուսնեմ ազատ:  
Տես՝ կապել են գլխիս կամար,  
արև չըկայ խեղճիս համար:  
Ոնց կարող եմ ես զօրանալ,  
շրջակայրիս զարդը դառնալ»:  
Կացինն առաւ փայտհատ Մոսին,

մէկ էս ծառին, մէկ միւսին,  
ծառի շուրջը լայն ու արձակ  
մի տեղ բացեց շատ ընդարձակ:  
Բայց խնդումը շատ չըտևեց.  
Էն լաւ/օրին վատն հետևեց:  
Հա արևը ծառը մրկեց.  
Հա կարկուտը ճիւղքից զրկեց,  
ու մի օր էլ քամին սաստիկ  
կոտրեց ծառը չարաբաստիկ:  
Գրի՞ր ի՞նչ անբախտութիւն պատահեց ծառին եւ ինչո՞ւ:

փայտհատ — փայտ կտրող:  
գալար — կանաչ, ջանէլ: Դալար մնան կռներդ — թարմ և ու-  
ժով մնան, չչորանան քո կռները:  
կամար կապել — կամար շնել:  
մրկել — այրել, խանձել:  
չարաբաստիկ — անբախտ:

1. Շրջակայք — շուրջը եղած տեղերը: Փակ մօտակայք:
2. Փայտը ջարդում են. ուրիշ ինչ են անում և ինչո՞վ:
3. Շատ չտևեց. ուրիշ ինչ կերպ կատես:

## 8. Չախորդ Փանոս

Փամանակով մի աղքատ մարդ է լինում, անունը Փանոս:  
Ինքը մի բարի մարդ է լինում, բայց ինչ գործ որ բռնում է,  
ձախ է գնում: Դրա համար էլ անունը գնում են Չախորդ  
Փանոս: Ունեցած-չունեցածը մի լուծ եղն է լինում, մի  
սայլ ու մի կացին:

Մի օր եղները սայլում լծում է, կացինը առնում գնում  
անտառը փայտի: Անտառում էս Փանոսը միտք է անում, թէ  
մի բան որ ծառը կտրելուց յետոյ մին էլ նեղութիւն պէտք է  
քաշեմ, ահագին գերանը գետնից բարձրացնեմ զցեմ սայլի

մէջ, աւելի լաւ է՝ արի հէնց սայլը լծած բերեմ ծառի տա-  
կին կանգնեցնեմ, որ ծառը կտրեմ թէ չէ ուղղակի ընկնի մէջը:  
Ասածն արած է:

Եղներով սայլը բերում է մի մեծ ծառի ներքեւ կանգնե-  
ցնում, ինքը անցնում վերի կողմը, կացինը քաշում — թըրը իսկ  
հա թըրը իսկ. Շատ է քաշում թէ քիչ, էտ էլ ինքը կիմանայ,  
ծառը ճրճուալով զալիս է զարկում, տակովն անում, սայլը  
ջարդում, եղներն էլ հետք: Փանոսը մնում է ապշած: Ի՞նչ  
պէտք է անի: Նոր կացինը վերցնում է ու ծոծրակը քորելով  
ճամփա է ընկնում դէպի տուն:

### Բ

Ճամփին մի լճի ափով անց կենալիս է լինում, տեսնում  
է մէջը վայրի բաղեր են լողում: Ասում է՝ զլուխը քարը,  
չեղաւ չեղաւ, արի գոնէ մի բադ սպանեմ, տանեմ տամ կնկանա:

Ասում է ու կացինը պտըտում, շպըրտում դէպի բաղերը,  
որ մինը սպանի: Բագերը ճղճղալով ցրւում են, փախչում՝  
որը եղէգնուան է մտնում, որը թոչում գնում, կացինն էլ  
ընկնում է լճի խոր տեղը, կորչում:

Փանոսը մնում է լճի ափին կանգնած միտք անելիս՝ ինչ  
անի, ինչ չանի: Շորերը հանում է գնում լճի ափին, ինքը  
մտնում մէջը, որ կացինը հանի:

Գնում է, գնում, քանի առաջ է գնում, ջուրն էնքան  
խորանում է. տեսնում է՝ կարող է խեղդւել, դէ ինքն էլ խե-  
լօք մարդ, ետ է դառնում, զուրս զալիս:

Դու մի ասիկ Փանոսը որ լիճն է մտնում, էտ ժամանակ  
լճափով մի անց կենող է լինում: Տեսնում է էտեղ թափած  
շորեր կան, եղէգնուատի մէջ խորը գնացած Փանոսին էլ չէ  
նկատում, շորերը հաւաքում է, առնում գնում:

### Գ

Փանոսը լճից զուրս է զալիս, տեսնում՝ շոր չկայ: Մնում  
է տկլոր կանգնած:

Տկլոր կանգնած միտք է անում «ի՞նչ անեմ, Տէր Աստւած, Էսպէս տկլոր ուր գնամ»:

Սպասում է մինչև մութն ընկնի: Մթան հետ վեր է կենում գնում զիւղը: Որ զիւղին մօտենում է, ասում է՝ «Էսպէս տկլոր որ գնամ մեր տուն, տանըցիք ի՞նչ կասեն: Արի գնամ, ախալօրիցը շոր առնեմ հագնեմ, Էնպէս գնամ տուն»:

Ճամփէն ծոռում է դէպի ախալօր տունը:

Դու մի ասիլ էտ գիշեր էլ ախալօր մօտ մեծարք կայ, քէֆի էլ էն տաք ժամանակն է: Դուռը ծերպ է անում, տեսնի՝ ով կայ, ով չկայ. հիւրերից մինը կարծում է թէ շունն է, ձեռի կրծած ոսկորը շպըրտում է դէպի դուռը, ոսկորը դիպչում աչքին, աչքը հանում:

Փանոսը ցաւից՝ վայ-վայ անելով ետ է դառնում. շներն էս ձայնի վրա վեր են կենում, տեսնում են, օհօ, մթնումը հրէս մի տկլոր ոքմին, ու չորս կողմից վրա են տալիս:

Շների հաջոցի վրա մարդիկ դուրս են թափում, տեսնում են մի տկլոր մարդ փախած գնում է, շները ետևից. Առանց երկար ու բարակ մտածելու վճռում են, որ կայ թէ չկայ՝ սա սատանայ է: Բաւական տեղ հայհոյելով, հարա-հրոցով ընկնում են ետևից, հալածում, տանում զցում անտառները. Շներն էլ ետևիցը մի ճուռը պոկում են, ու էսպէս տկլոր, աչքը հանած, կաղին տալով խեղճ Փանոսը գնում է կորչում:

Դ

Միւս օրը զիւղում տարածւում է, թէ հապա չէք ասիլ՝ «Փանոսը կորել է: Գնացել է անտառը փայտի ու ետ չի եկել: Գեղահաւան հաւաքւում են գնում. գնում են անտառը, ման գալիս, սայլն ու եզները գտնում են ծառի տակին ջարդւած ու ինքը չկայ:

Դէս Փանոս, դէն Փանոս. հարց ու փորձով հագուստն էլ գտնում են մէկի մօտ:

— Այ մարդ, էս հազուսար նրանեղից է ընկել քեզ մօտ: — Թէ՝ ախալօր, էս հազուսար էսպէս մի լճի ափին վէր ածած էր, հաւաքեցի բերի:

Գնում են լճի չորս կողմը պարտում, կանչում «Փանոս, Փանոս», Փանոսը չկայ:

Վճռում են, որ Փանոսը խեղդւել է:

Գալիս են ժամ ու պատարագ են անում, քելէխը տալիս: Կնիկն էլ մի քիչ սուգ է անում, Փանոսին գովում, ափսոսում, յետոյ մի ուրիշ մարդ է ուզում, հետը պսակւում գնում:

Հիմի կը հարցնէք թէ՝ հապա Փանոսը ի՞նչ եղաւ:

Ճշմարիտն ասեմ, ես էլ չպիտեմ՝ ի՞նչ եղաւ. էն գնալն էր, որ գնաց, էլ ետ չեկաւ:

Բայց երբեմ-երբեմն մտածում եմ խեղճ Փանոսի մասին, մտքումս ասում եմ՝ դու ասա՝ ի՞նչիցն է, որ կեանքում մէկ-մէկ մարդու էսպէս ձախորդութիւնը պատահում է: Ի հարկէ, կարող է մարդու իրեն յիմարութիւնիցն էլ լինել, բայց միթէ մեր խեղճ Փանոսն էտքան յիմար էք:

Գ Ի Ի՛ Ր՝ ՔԷ Ինչպէս Փանոսը ծառ էր կը ուրում կամ քէ ինչպէս կորցրեց իր հազուսը:

Ճոծրակ—զիսի ետևի մասը, զզից բարձր:

Եղէզնուտ—մի տեղ ուր շատ եղէգ (դամիշ) է բունած: մեծարք—հրաւերք, պատիւ տալ:

Պոան ծերպ—դուն արանք, դուն նեղ բացւածք:

Ոքմին—մի մարդ, մէկը:

Հալածել—ետևից ընկնել:

Ճուռը—ոտի ներքեմի կէսը, աղոթից մինչև սրունքը:

Գեղահաւան—ամբողջ զիւղով միասին:

Քելէխ—հոգեհաց, մեռելի յիշատակին տւած ճաշ:

1. Ի՞նչ ասել է՝ գործը ճախ է գնում... զլուխը բարը... բէֆի տաք ժամանակ... կուի տաք ժամանակ:

2. Սայլը տակովն անել. ուրիշ ի՞նչպէս կասես:  
 3. Ի՞նչ տարբերութիւն կայ՝ կաղալ և կաղին տալ:

## 9. Տերեւարակի

«Այ փոքրիկներ, սիրունիկներ»,  
ասաւ քամին տերեներին, —  
«աշունն եկաւ, մօտ է ձմեռ,  
ինչ էք դողում ծառի ծէրին:  
Ոսկի զեղին, վառ ծիրանի  
գոյներ հագէք խայաբղէտ  
ու ճիւղերից ձեր մայրենի  
եկէք ինձ հետ, փախէք ինձ հետ...  
Եկէք տանեմ թեթև-թեթև,  
անհետ ճամփով, անյայտ տեղեր.  
չէք իմանայ այսուհետեւ  
էլ ինչ է դող, ինչ է ձմեռ...»:  
Տերեները հէնց լսեցին,  
նախշուն-նախշուն գոյներ հագան,  
սըւսըւալով տխուր երգեր՝  
քամու թեին թուան, փախան:

Քամին նրանց ուր է տանելու:

խայտաբղետ—զանազան, խառն գոյներ ունեցող:  
անհետ ճամփա—ճամփա, որի վրա հետք չի մնում:  
ծիրանի գոյն—պայծառ կարմիր:

1. Ի՞նչ ասել է՝ տերևաթափ. որոնք են արմատները։ Ի՞նչ  
ասել է սակի գեղին։

2. Վառ ծիրանի, վառ կարմիր, վառ կանաչ: Ի՞նչ մտքով  
է դործ ածւում վառ բառը գոյների հետ:

## 40. Կօշիկ սրբող Թումանը

Վաղ առաւօտ է. ահազին քաղաքի կէսը քնած է զեռ:  
Բայց թումասը ոտի վրայ է վաղուց, ու շըւշըւացնելավ գնում  
է պործին՝ ուսից կախած իր առևիր, որի մէջ խողանակներն  
են ու կօշկի ներկերը:

Փոստի շէնքի դէմը, գլխաւոր մուտքից ոչ հեռու, անձրկից պաշտպանւած մի անկիւնն է նրա աշխատանոցը. այդտեղ նստած է նա ամբողջ օրը իր տուփի ու խոզանակների առջև. Ամառւայ շոքին, ձմեռւայ ցրտին միշտ հնչում է նրա քնքուշ ձայնը.

«Համեցէք, պարոն, մարդիմ ձեր կօշիկները. ազամանդի պէս  
փայլեն, հայելու պէս տես-  
նէք մէջը ձեր պատկերը...  
Թանգ չէ, պարոն, միայն  
հինգ կոպէկ»...

Ասում է ու այնպէս քաղ-  
ցըր ժպտում, այնպէս կա-  
տակով, որ անցորդը ակա-  
մայ կանգ է առնում:



փողոցի խորքումն է նրանց զած վիկ հին տունը:

Թումասը գատարկում է զբանի սև փողերը մօր գովնոցի  
մէջ, արագ ընթրում ու շտապում է դուրս:

Ուզիկ ժամը ութին սկսւում են երեկոյեան դասերը։ Այս

երկրորդ ձմեռն է, որ Թոմասը կանոնաւոր գնում է զիշերները զպրոց: Յերեկւայ այն ժամերին, երբ յաճախորդներ չեն լինում, Թոմասը փողոցի անկիւնում, իր տուփի առջև միշտ մի փոքրիկ զիրք ունի ձեռքին:

Այդ փոքրիկ զրբերը ասում են նրան, թէ քանի՞-քանի մեծ մարդիկ իր նման են եղած իրանց կեանքի սկզբին. քանի՞-քանի մեծ մարդիկ հետզհետէ առաջ են գնացել ու բարձրացել են միայն իրանց աշխատանքով և յամառ կամքով:

Եւ Թոմասը վճռել է որ ինքն էլ պէտք է դառնայ անպատճառ մի մեծ մարդ. ի՞նչ տեսակ բաներ պիտի հնարի մարդկանց համար, ի՞նչպէս պէտք է պահի մայրիկին ու քոյրիկներին...

Այո՛, մի մեծ մարդ. անպատճառ:

Ի՞նչ էր կարծում՝ Թոմասի ուզածը պիտի աշողի՞։ Եւ ինչո՞ւ։

Պատմիր՝ ու ծանօթերի սէջ կա՞յ մէկը, որ իր աշխատանքով մարդ է դառել. Նա առաջ ի՞նչ է եղել եւ ինչո՞վ է առաջ գնացել:

Դրիր՝ ի՞նչ է Թոմասը, ո՞րտեղ է նրա աշխատանոցը եւ պնտել նա ի՞նչ է անում, երբ լաճախորդներ են լինում. ի՞նչ է անում ազատամանակ։

Ի ու լ փողոց—ետ ընկած փողոց։

յաճախորդ—մուշտարի (թուրք.) գնորդ։

1. ցած—ցածլիկ, կաղ—կաղլիկ, հաստ—հաստլիկ, փափուկ—փափիկ. — ինչի՞ համար է աւելանում լիկ մասնիկը։

2. սև փող, սպիտակ փող—ի՞նչ ասել է... ելի ի՞նչ տեսակ փող է լինում։

## 41. Առուն

Աշուն. գորշ երկինք, մերկ դաշտեր, ուզի, աշխարհն է թաղւել մէկ-մառախուղում. դատարկ են զեղնած բակերը զիւզի, էլ դուրսը ոչ ոք, ոչ ոք չի խաղում։



Սարից իջնում է տուն հօտը վերջին, հանդումն էլ չը կայ շարժում, շառաչիւն,

մարգարտէ ցօղն է պաղել կանաչին,

լեռների վըրա բարակ շաղ ու ձիւն։

Լալկել է գետը. ոչ ճղփիւն, ցնցուղ, ոչ ուրախ քրքիջ, ոչ լող ու ճիչ կայ. ամեն տեղ զանդաղ քաղւող կապոյտ ծուխ, մահւան լոռութիւն, զաժան պարզըկայ։

գորշ—մոխրագոյն։

ուղի—ճանապարհ։

պաղել—սառչել։

լալկել—հոմրանալ, լոել։

ճղփիւն—ալիքի թեթև ձայն։

ցնցուղ—ջրի մանր կաթիներ։

դաժան—խստասիրտ, անգութ։

պարզըկայ—ցուրտ և պարզ զիշեր։

1. Ե՞րբ ենք ասում ծուխը քաղւում է և ե՞րբ ծուխը փըռում է։

2. Բացի ճղփիւնից՝ գետի ի՞նչ ձայներ զիտես։

## 42. Հերոսը

ա

Մայրիկ, արի երևակայենք, որ մենք ճափորդ ենք ու անցնում ենք մի վտանգաւոր անապատ աշխարհով։

Դու գնում ես կառքով, իսկ ես ըս կողքից դալիս եմ ձիով.  
Արդէն երեկոյ է և արել մայր է մտնում: Մեր առջե  
փռած է տխուր ու գորշ անապատը: Զորս կողմը մերկ է ու  
տափարակ:

Դու վախենում ես ու մտածում.  
«Չգիտեմ՝ էս ուր ենք ընկել»:  
իսկ ես ասում եմ քեզ,  
—Մայրիկ, մի՛ վախի:

Բ

Ամբողջ դաշտը ծածկւած է թփերով ու կոշտ խոտերով.  
Նրանց միջով անցնում է միայն մի նեղ, ծուռումուռ  
արահետ:

Թուխպը աւելի թանձրանում է և ծածկում երկինքն  
ու երկիրը. և մենք էլ չենք կարողանում ջոկել, թէ ուր  
ենք գնում:

Դու ինձ կանչում ես ու շշնջալով հարցնում.  
—Այն ի՞նչ լոյս է, այ, ցածը, ափի մօս:  
իսկ ես ասում եմ քեզ  
—Մայրիկ մի՛ վախի:

Գ

Մէկ էլ սոսկալի աղմուկ է լսում և ամեն կողմից մեզ  
դրա են յարձակում սեսե մարդիկ:  
Դու կուչ ես եկել կառքի մէջ և Աստւած ես կանչում:  
Կառապանն ու ծառան ահից դողալով թագնւում են  
թփերի մէջ:

Ես ձայն եմ տալիս.  
—Չգիտես, մայրիկ, ես այստեղ եմ:

Դ

Երկար նիզակները ձեռքներին ու մազները գղղուած  
նրանք աւելի ու աւելի են մեղ մօտենում:

Հ

Ես գոռում եմ՝ «Զգնւշ, չարագործներ. Էլի մի քայլ՝ և  
դուք կորած էք:»

Նրանք նորից մի զարհուրելի աղմուկ են հանում ու  
առաջ նետում:

Դու բռնում ես ձեռքից ու ասում. «Աստծու սիրուն,  
տղաս, մի՛ մօտենար նրանց:»

Ես ասում եմ.

—Մայրիկ, դու տե՛ս հիմա, թէ ես ի՞նչ եմ բերում  
նրանց գլուխը:

Ե

Ես ասպանդակում եմ ձիս. նա սլանում է. վահաններն  
ու նիզակները շաշումով իրար են զիպչում:

Կոփւը տաքանում է, զանում է կատաղի և դու, մայրիկ,  
եթէ տեսնէիր քո կառքից այդ կոփւը՝ սարսուռ կըզզայիր:

Ահա թշնամին փախչում է, մեծ մասը կտոր-կտոր եղած  
փռած է զետնին:

Ես գիտեմ, դու նստած ես մենակ ու կարծում ես, թէ  
քո տղան սպանւած է արդէն:

Բայց ես արիւնոտ շորերով, գալիս եմ և ասում.

«Մայրիկ, կոփւը վերջացաւ:»

Դու կառքից գուրս ես թռչում, համբուրում ես ինձ ու  
սեղմելով կրծքիդ շշնջում ես քեզ ու քեզ.

—Ի՞նչ պիտի անէի, եթէ տղաս ինձ հետ չլինէր:

Դու էլ քեզ հերոս երեսակայել ես:

Պատմի՞ ի՞նչ հերոսութիւններ որ արել ես:

Պրի՞ թէ ինչպէս մի համբորդ պատապաննեց աւագակներից  
իր մօրը:

հերոս—քաջութիւն անող մարդ:

Երկար նիզակները մտքի մէջ պատկերացնել, մտքի մէջ ներկայա-  
ցնել:

Հ

արահետ—լայն, բանուկ ճանապարհ:

Նիզակ—զէնք—երկար փայտ՝ ծայրը սուր երկաթ:

Վահան—տախտակ՝ կաշւէպատ կամ երկաթապատ, սովորաբար

կլոր. բռնում են ձեռքին՝ կռւի ժամանակ հարւածից պաշտպանուելու  
համար:

շաջում—զէնքերի իրար դիպչելու ձայն:

սարսուռ—դող:

սոսկալի—բնչ ասել է. յօդւածի մէջ ուրիշ բնչ բառեր կան  
նոյն միտքն ունեցող:

## 13. Մայրը

Սենեակի միջին  
կանթեղն է ցոլում.  
գաղաղած քամին  
դռանն է սուլում:

Անքուն մայրիկը  
ընկած զոյդ ծնկան,  
օրօր է ասում,  
օրօրում մանկան:

—Ե՞հ, հե՛րիք, հե՛րիք,  
մրրիկ ու քամի,

թողէք՝ մանկիկս  
իր տեղում քնի:

Էլ մի՛ որոտայ  
դու, ահեղ որոտ,  
իմ անուշ բալէն  
քնի է կարօտ:

Քնի՛ր, բա՛լիկս,  
աղօթքով քո մօր.  
քամի և որոտ  
կը լոեն, օրօր:

Կանթեղ—մի աման ձէթ, մէջը պատրոյգ, որ վառում են՝  
լուսաւորելու համար. Սովորաբար վառում են սուրբերի պատկեր-

բալա (թուրք.)—երեխայ, զաւակ:  
գաղաղել—կատաղել:

գաղաղել—ուրիշ բնչ կերպ կասես:

## 14. Գգւանիքի կարօտ

ш

Մայրաքաղաքի հեռաւոր թաղում ծերունիների ապաստա-  
րանի կողքին կար մի որբանոց. Մի առաւօտ ընդարձակ բակի  
միջով ապաստարանից անցնում էի որբանոցը:

Ծառի տակ, ուրիշներից հեռու տեսայ մի գանդրահեր,  
կարմրաթշիկ մանուկ. Դէմքն այնքան դուրեկան էր, որ կանգ  
առայ ու շոյելով վլուխը՝ քաղցրութեամբ հարցրի.

—Անունդ բնչ է, պստիկ:

Նա պատասխանեց և աւելացրեց՝ «Եօթը տարեկան եմ,  
ոչ հայր ունիմ, ոչ մայր, ոչ էլ մէկ ուրիշը աշխարհիս երեսին:  
Դրա համար էլ ինձ բերել են որբանոց», վերջացրեց նա իր  
կենսագրութիւնը:

Կարեկցութեամբ ու մտերմօրէն շոյեցի թշերն ու մտայ  
որբանոց: «Խեղճ երեխայ»—մտածում էի գնալիս:

բ

Երբ միքիչ յետոյ վերադառնում էի նոյն ընդարձակ  
բակով, յանկարծ մէկը քաշեց փէշից:

Ետ նայեցի, տեսնեմ՝ նոյն փոքրիկ ծանօթ դէմքը:

Սաստիկ յուզուած էր ու այտերը շառագոյն. լուռ աղեր-  
սող աչքերով նայում էր ինձ:

—Ի՞նչ է, սիրելիս,—հարցրի նրան:

—Ես ուզում եմ...—սկսեց նա ու կմկմաց:

—Ի՞նչ ես ուզում, ասա, —քաջալերեցի ես:

—Ուզում եմ... որ ինձ համբուրես...

—Քեզ համբուրեմ, —զարմացայ ես:

—Այս, —ասաւ նա՝ աչքերը ցած զցելով — դեռ ինձ ոչոք  
չի համբուրել, ոչ-ոք...

Քեզ ամենից շատ ո՞վ է սիրում։ Մտածիր՝ ի՞նչ կը լինի քո կեսնքը,  
եթէ քեզ ամենից շատ սիրողները ըմնէին աշխարհին երեսին։

Գրի՝ պարոնը ո՞րտեղ հանդիպեց մանկան, ի՞նչ հարցրեց եւ  
ի՞նչ պատասխան ստացաւ։

գգւել—շոյել։ գգւանք—շոյանք։

ապաստարան—առաստանելու, պահելու տեղ։ Ծերունիների  
ապաստարան—ծերունիներին պահելու տեղ։

դանգրահեր—գանգուր մազեր ունեցող։ Ուրեմն ի՞նչ ասել է հեր։  
կենսազրութիւն—կեանքի պատմութիւն։

մտերմօրէն—շատ մօտիկ, սիրող մարդու պէս։

կարեկցել—խղճալ, մեղքանալ։

շառագոյն—խիստ կարմրագոյն։

աղերսել—խնդրել, աղաչել։

մտերիմ մարդ—շատ մօտիկ, բարեկամ մարդ։

Մայր քաղաք—մը քաղաքին ենք ասում։

## 15. Պառակի կատուն

ա

Միշտ միասին էին պառաւ Շողերն ու իր ոհ, ահազին  
կատուն։

Երբ պառաւ Շողերը տունն էր հաւաքում, կերակուր եփում կամ նստում գուլպայ գործելու, միշտ կողքին էր և  
կատուն։ Պառաւը նրան էր գանդատւում, թէ ինչպէս մատ-  
ները գողում են գուլպայ գործելիս։ Կատուն մռում էր, ճկուն  
մէջը ուղցնում ու քուտում պառաւի ոտներին ու ծնկներին։

Երբ պառաւ Շողերը անց էր կենում փողոցով, կատուն  
խիկի միքայլ ետ չէր մնում նրա խունացած շրջազգեստի փէ-  
շից ու պոչը վեր ցցած հանգիստ հետևում էր իր տիրուհու  
գանգաղ քայլւածքին։ Դրացի տղերը նրանց տեսնելիս՝ զեռ  
հեռից կանչում էին կըս լուրջ, կըս կատակ։

—Ճամփա՛, ճամփա տւէք Շողեր ու Փիսօ խաթուններին։  
—Իսկ երբ մինում էր ու աղքատիկ տնակի մէջ համգչում  
էր աղօտ ճրագը, ցած ու խարխուլ պատուհանի արանքից  
պարզ լսում էր կատւի մըմոցը պառաւ Շողերի խոմփոցի  
հետ։ Երկուսն էլ պառկում էին միկնոյն անկողնում։ ձմեռ-  
ները կատուն էր պառաւի մըսկան ոտների աաքացնողը։

բ

Այսպէս անբաժան ապրում էին նրանք շատ տարիներ։  
Պառաւ Շողերի մէջը աւելի ու աւելի էր կունում։ կատւի  
աշքերին լոյսը աւելի ու աւելի էր մարում և բուրդը թափւում։



Մի օր էլ հարևանները տեսան,  
որ պառաւ Շողերը նստել է  
տնակի առջև ու դառն լաց է  
լինում։ Նրա ծնկանը ձգւել  
պառկել էր կատուն... սատկած։

Դրացիներից շատերը նայում  
էին ու ժպտում. ահազին կնիկը  
լաց էր լինում կատւի վրա։

Այո՛, պառաւ Շողերը լաց էր  
լինում ու կամաց, շրթունքների  
միջով, կրկնում էր անընդհատ։

«Էլ պրծաւ, էլ հիմա ոչո՞ք  
չունեմ այս աշխարհում։ գնա-  
ցին որդիս, հարսս, թուներս,  
հիմի էլ կատուն, որին այսքան սիրում էին թունիկներս. մնա-  
ցի մենակ, բոլորովին մենակ այս աշխարհում»...

Կրկնում էր պառաւը կամաց, շրթունքների միջով, ու  
անմիթար հեկեկում...»

Ինչո՞ւ պառաւը այդպէս սիրում էր իր կատին։

Պատմի՞ր՝ ի՞նչպէս էր ապրում պառաւը մի ժամանակ եւ  
ինչպէս էր կեանքը այն ժամանակ նրա սնակում.

Գրի՞ր՝ ի՞նչպէս էր ապրում պառաւը իր կատի հետ տանը.

Ճկուն—հեշտ ծուռղ. օրինակ՝ ճկուն ճիպոտ,  
խունանալ—գոյնը թափել, գոյնը կորցնել,  
աղօտ—թոյլ, տկար լոյս ունեցող, զրւում է օ-ով.  
խարխուլ տուն—քանդւող, հազիւ կանգնած տուն,  
մխիթարել—աշխատել մէկի ցաւը մեղմել, թուլացնել.  
Անմխիթար մարդ, որի ցաւը չի կարելի մեղմել, պակսեցնել,  
մոռացնել:

1. Տունը հաւաքել—ուրիշ ինչ կերպ ենք ասում:
2. Որոնք են արմատները—շըջաղկեստ:
3. Ի՞նչ տարբերութիւն կայ մոմի, ճրագի, կանթեղի, լամպի  
և լապտերի տէջ:
4. Ի՞նչ տարբերութիւն կայ դռան ճեղքի, դռան արանքի և  
ծերպի մէջ:
5. Ի՞նչ տարբերութիւն կայ լալու, հեկեկալու և հեծկտալու մէջ:
6. Մըսկան, լալկան—ուրիշ ինչ կերպ կասես:

## 16. Կոյրերի կարծիքը

Օրը ցերեկով  
երեք-չորս հոգով  
կրյորել եկան  
վըղին դէմ ընկան:  
Մինը, որ մարմնին դիպաւ հաստ, ահեղ՝  
—չէյ, զգիյշ, կանչեց, մի պատ կայ էստեղ:  
Միւսը, որ ոտն էր շօշափել իր դէմ՝  
—ի՞նչ պատ, ծիծաղեց, էս կոճղն է կարծեմ,



—Օձ է, օձ, գոռաց, էլ ի՞նչ էք կանգնել:  
Մինչդեռ չորրորդը՝ պոչիցը բըոնած  
քահ-քահ ինդալով ծաղրում էր նրանց.

—Վահ, ճիշտ որ կոյր էք. չիմացաւ ոչ ոք.  
ոչ էս է, ոչ էն, այլ կախած մի թոկ:  
—Չէ—պատ է, չէ—կոճղ, չէ—օձ է, չէ—թոկ...  
Ու աղմկելով ամեն մինը ջոկ,  
ինչպէս որ եկել  
դէմ էին ընկել,  
էնպէս էլ կոյր-կոյր ետ դարձան կրկին,—  
սարի պէս փեղը պարզ լուսի տակին:

ահեղ—սարսափելի, ահ, վախ պատճառող:  
կողմ—ծառի բունի տակի մասը՝ կտրած. նաև առհասսրակ  
ծառի բունի կտոր՝ շատ ուռողքներ ունեցող, քոթուկ  
կնձիթ—փղի երկար, օձանման քիթ:

1. Թոկ—ուրիշ ինչ կերպ կասես:
2. կոյր-կոյր, ուրախ-ուրախ, շուտ-շուտ—բառերը ինչու  
ենք կրկնում:

## 17. Ռորինզոն

Մըրիկը ժայռերին էր զարկել նաւն ու խորտակել: Զէր  
փրկւել ոչ մի նաւաստի, ոչ մի ճամփորդ. միայն մոքինզոնին  
ալիքները դուրս էին նետել ցամաք:  
Երբ ուշի եկաւ, նրա առաջին միտքն էր.  
«Այս նւր եմ արդեօք:»  
Ընկած էր խիտ անտառի մօտ ծովաւազի վրա: Տերեների  
սոստիիւնի ու ալիքների շառաչիւնի միջից նրա ական-

Ջին գաղանների ոռնոց էր հասնում: Նա սոսկաց ու ստքի ելաւ. անզէն էր և անպաշտպան: Ունէր միայն այն, ինչ հազին մնացել էր—շապիկ, բաճկոն, վարտիք, գուլպաներ ու կօշիկներ:

Այդ օրը ծովափից չհեռացաւ, կերակրւելով ոստրեներով ու խեցգետիններով. իսկ երբ մութը կոխեց, ելաւ ծառերից մէկը և քնեց մի հաստ ձիւղի վրա՝ վախենալով գաղաններից:

Մի քանի օր Ռոբինզոնը անց կացրեց ծովափին՝ միշտ աշքը հեռուն: Զուր յոյսեր. ոչ նաւ, ոչ իսկ մակոյկի մի նըշոյլ:

Վերջը նա որոշեց բարձրանալ մօտակայ սարի գագաթը այնտեղից գիտել: Սարի գագաթից նա աշքը չորս կողմը ածեց, շուրջը միայն ծովն էր, անծայր ծով, իսկ ստքի տակ մի կտոր ցամաք, և ոչ մի տանիք, և ոչ մի ծուխ:

— Ուրեմն ես մի անմարդաբնակ կղզի եմ ձգւած,— բացականչեց նա յուսահատ. — մենմենակ, աշխարհից կտրւած. առանց տուն ու տեղի, առանց որևէ զէնքի, առանց պաշտի: Ի՞նչ պիտի անեմ:

Բ

Սարից իջնելով նա գտաւ մի կոկոսի ծառ: Ընկոյզի միջուկը կերաւ, կճեպն էլ պահեց որպէս ջրաման: Այդուղից ոչ հեռու նա նկատեց մի այր, ու վճռեց այդ այրի մէջ ընակւել:



Այրը ցածր էր ու յատակը մի կոյտ հող լցւած: Ռոբինզոնը կրիայի պատեանից ձեռքի թիակ պատրաստեց ու հողը այրից դուրս թափեց: Յետոյ սկսեց առաստաղից կախ ընկած քարերը պնկել. ապա մուտքի առջև պատ շարեց և ճիւղերից գոնակ հիւսեց:

Մէջտեղը մի քարէ սեղան յարմարացրեց, կողքին էլ քարէ նստարան. իսկ մի անկիւնում ծովախոտից պատրաստեց անկողին:

Պ

Արեւ անտանելի կիզում էր: Ռոբինզոնը լայն տերևները ձկան վշերով իրար հետ ամրացրեց ու գլխարկ կարեց: Նոյն տերևներից շուտով նաև մի հովանոց շինեց: Մի մեծ ոստրէի սուր պատեանը նրա համար գանակ էր. ձկան սուր փուշը՝ բեզ, իսկ մի յարմար քար՝ փայտին ծառի դալար ճիւղերով կապած, թէ մուրճ էր և թէ կացին:

Ռոբինզոնը արդէն լաւ ճանաչում էր իր այրի մօտ եղած ամեն ծառի ու թփի պտղի համը: Նա տրդէն իր յոյսը կտրել էր շուտով տուն վերագանակու: Օրերի հաշիւը չկորցնելու համար՝ նա ընտրեց երկու ծառ. մէկի վրա օրերն էր գծում, այն է՝ լի օրերը կարճ, կերակի օրերը երկար խաղեր, միւսի վրա նշանակում էր ամիսները: Այդ նրա օրացոյցն էր:

Պ

Մի օր զրօննելիս այծի մկկոցի նման մի ձայն ընկաւ նրա ականջը: Զգոյշ գնաց ձայնի կողմը և ծառերի ետեկից նկատեց վայրի այծերի հօտ, որոնք հանգիստ արածում էին: Ռոբինզոնը փորսող մօտեցաւ միամիտ հօտին և կացնի ուժեղ

հարւածով ջախջախեց մի այծի զլուխ։ Կենդանին անշնչապատ գետին տապալւեց։

Ռոբինզոնը ուրախ-ուրախ ուսեց իր՝որսը և շտապեց գէպի իր այրը։ Սուր քարով մաշկելով այծին՝ նա կաշին կախ արաւ ծառից չորանալու, իսկ միւսը մի կլոր քարով երկար ծեծեց ու սկսեց մեծ ախորժակով ուտել, թէ և հում էր և անալի։

— Ա՛խ, — մտածում էր նա—մեր է թէ մի կրակ լինէր, միսը խորովէի…

Յիշեց դպրոցում սովորածը՝ որ փայտը փայտին քսելով կարելի է կրակ ստանալ։ Մի ամբողջ օր չարչարւեց, բան դուրս չեկաւ։ Այն ժամանակ նա սկսեց քարը քարին զարնել կայծեր հանելու համար. քարերը կայծաքարի տեսակից չէին, կայծերը շատ թոյլ էին և նա անձարացած թողեց իր փորձերը։

Այծերը արդէն վախենում էին Ռոբինզոնից. նրան տեսնելուն պէս փախչում էին. հետզհետէ դժւարանում էր նրանց որսալը։ Այն ժամանակ Ռոբինզոնը շինեց նետ ու աղեղ։ Լարի փոխարէն գործածեց այծի աղիքը ոլորած, իսկ նետի ծայրին ամրացրեց մի սուր քար։

Սղեղով նա կարողանում էր թէ այծերին սպանել հեռւից և թէ թոշուններ որսալ։ Այժմ նա ճաշին ունենում էր զանազան տեսակի միս։

Մի գիշեր սաստիկ փոթորիկ բարձրացաւ։ Ծովի ալիքները կարծես ուզում էին կլանել կղզին. Ռոբինզոնը քնած չէր. փայլատակները ամեն րոպէ պայծառ լուսաւորում էին այրի ներսը. սաստիկ որոտմունքը սարսուռ էր ազդում։ Յանկարծ կարծես երկինքը պատռեց, սարը դղրդաց, այրի առաստաղից քարեր պոկւեցին ու փայր թափւեցին. Ռոբինզոնը սարսափահար դուրս փաղեց իր բնակարանից ու ինչ տեսաւ։

Ամբողջ ըրջակայքը լուսաւորւած էր. սարի գաղաթին կայծակից փառւում էր մի բարձր ծառ և հրդեհը մօտեցել էր հարկան ծառին

Զնայելով յորդ անձրեին, Ռոբինզոնը կոկոսի ամանը, ձեռին վազեց դէպի վառւող ծառը, շտապ-շտապ լցրեց ամանը կրակով և անմիջապէս վերադարձաւ տուն։

Մի ժամ չանցած այրի առջև վառւում էր մի մեծ խարոյկ, որի վրա նա շամփրով խորովում էր այծի միսը. Իր կեանքում այնպէս երջանիկ չէր եղել, ինչպէս այդ ըսպէին։

Այդ օրւանից կրակը երբէք չէր հանգչում նրա այրում. տանից հեռանալիս նա կրակի շեղճը ծածկում էր մոխրով ու անշէջ պահում։

## Ե

Մէկ անգամ Ռոբինզոնին աջողւեց ոտքից վիրաւորել մի այծ, որին երկար հալածեց ու վերջը կենդանի բռնեց։ Երբ այծին փոկովքաշում էր դէպի իր այրը, երկու ու թփերի միջից հետևում էին նրան։ Ռոբինզոնը այրի մօտ ճիւղերից հիւսեց մի ցանկապատ, ուր պահում էր այծերին, ու հետներ խօսում, խաղում։ Այլևս առաջւայ պէս մենակ չէր զգում իրան։ Բարի կենդանիները շուտով ընտելացան նրան և նոյնիսկ ազատ արածելիս՝ չէին փախչում նրա մօտից։

Նա աշխատեց կթել այծի կաթը. շատ համով երեաց. Այնուհետև նա կրկին երկու էկ այծ բռնեց և օրւայ մեծ մտար անց էր կացնում տանը՝ նրանց համար կեր բերելով, նրանց ջրելով, տակները մաքրելով։

Ռոբինզոնի կոկոսի ամանները լիքն էին կաթով։ Նա արաժան էր քաշում, պանիր էր շինում և մտածում էր արդէն կարագ հարելու մասին։ Կոկոսի կճեպները անյարմար էին։ Նա քննեց կղզու բոլոր անկիւնները և գտաւ լաւ տեսակի կաւ։ Այդ կաւը շաղախեց և շինեց կճուճ, թրծեց կրակի վրա ու շատ գոհ մնաց իր գործից։ Նրա այրի մէջ շուտով երեացին զանազան մեծութեան կճուճներ, պնակներ, պուտուկներ,

ափսէներ: Ազատ ժամանակ շատ ունէր. աշխատում էր աւելի գեղեցիկ ու յարմար գուրս բերել իր ամանները:

Այրը լցւում էր ամեն բարութիւնով: Ամանները լիքն էին կաթ ու կարագով: պանիրը պահում էր այծի մորթուց կարած տոպրակի մէջ: Չորացրած պտուղների կախանները կախւած էին ամենամութ անկիւնում: Անկողինը ծածկւած էր այծի մորթով, թարմ որսի միսը անպակաս էր: Եփելու հնարն էլ արդէն զիտէր. եփում էր կճուճի մէջ: Միայն գմւար էր աղ ձեռք բերելը, բայց նա այնքան համբերութիւն անէր, որ ծովի ջուրը եռացնում, գոլորշիացնում էր ամանի մէջ ու այդպիսով աղ ստանում:

#### Դ

Օրացոյց-ծառերի մօտ արդէն երրորդ ծառի վրա էլ մի քանի խաղ էր զծւած. գրանք ցոյց էին տալիս տարիները: Ռոբինզոնի շորերը վաղուց քրքրւել թափւել էին. այծի մորթուց նա կարել էր բաճկոն ու վարտիք, բարձր զլխարկ ու արեխներ:

Մի թութակի էլ ընտելացնելով խօսել էր սովորեցրել բայց մարդ-ընկերոջ կարօտ էր քաշում. կարօտացել էր իր հայրենիքին:

Գրեթէ ամեն օր բարձրանում էր սարի գագաթը և հեռուն գիտում, ու միշտ էլ յուսախափ իջնում այնտեղից:

Մի առաւօտ նա նկատեց սարի գագաթից կղզու ափին կապւած մի մակոյկ և այդտեղից ոչ հեռու՝ երկինք բարձրացող ծուխ:

—Մարդիկ են, մարդիկ, բացականչեց Ռոբինզոնը սրտատրով ու վազեց դէպի այն կողմը: Բայց գեռ ծառերի միջից գուրս չեկած՝ տեղն ու տեղը կանգնեց քարացած: Նա տեսաւ թէ ինչպէս կարմրամորթ եկւորները գետին էին զորել մի տղամարդու և մորթում էին: Այդ միջոցին մի ուրիշ տղամարդ, որի ձեռները մէջքին կապած էին, վեր թռաւ խարոյկի մօտից ու սկսեց արագ վազել:

Վազում էր ուղղակի դէպի Ռոբինզոնը. Վայրենիներից երկուսը նրան հետապնդում էին. —Պէտք է, պէտք է փրկեմ այդ դժբախտին, —ասաւ Ռոբինզոնը ինքն իրեն ու առաջնետւեց. Մի ակնթարթում նա հետապնդողների առաջը կտրեց, մէկին կացնով տապալեց զետին, միւսին սպանեց նետով. առաջ քան նա իր նիզակը կարձակէր, գերին ընկաւ Ռոբինզոնի ոտները. Ռոբինզոնը շտապ վեր կացրեց նրան ու տարաւ անտափ խորքը, ապա այնտեղից իր այրը: Նա լսում էր վայրենիների ձայները, որոնք կանչում էին իրենց ընկերներին, իսկ երեկոյեան դէմ սարի կատարից տեսաւ, թէ ի նչպէս նրանց մակոյկը հեռանում էր ծովափից:

Փրկւածի անունը գրաւ Ուրբաթ, որովհետև ուրբաթ օրն էր նրան ազատել: Վայրենին նշաններով հասկացրեց, որ ինքն ու իր ընկերը կուի մէջ գերի էին ընկել թշնամիների ձեռքը, որոնք բերել էին իրենց այդ կղզին ուտելու համար:

Ռոբինզոնը դարձաւ Ուրբաթի ուսուցիչը. Սովորեցնում էր նրան անգլիերէն խօսել և կատարել տան աշխատանքները: Նրա համար նա մորթուց զգեստ կարեց, բայց Ուրբաթը գերազասում էր գրեթէ մերկ ման գալ:

#### Ե

Տարիների ծառի վրա քսանից աւելի խազեր էին կտրւած: Ռոբինզոնը հաւատացած էր, որ այդպէս էլ ծերանալու ու մեռնելու է այդ կղզու վրա. Ուրբաթի օգնութեամբ նա կառուցել էր գերաններից մի տնակ, կողքին գոմ ու ամբար ու շղապատել ամուր ցանկապատով: Արդէն այծերի մի ամբողջ հօտ էր պահում:

Մի կէս օրին էլ Ուրբաթը ներս վազեց բակը, հեռախաղակելով.

—Եկել են, եկել.

Ռոբինզոնը կարծեց թէ կըկին եկել են վայրենիները,

որոնք արդէն մի քանի անգամ այցելել էին կղզին իրենց գերիներին ուտելու համար:



16

— ՄԵծ նաւ է եկել, սարի պէս մեծ նաւ,—բացատրում էր Ուրբաթը՝ ձեռքնվ ցոյց տալով.

Ռոբինզոնը չէր հաւատում, բայց երբ ելաւ սարը, կղզու ետևը՝ ափից ոչ հեռու տեսաւ խարիսխ ձգած մի առագաստանաւ. Ինքն իրեն մոռանալով, նա գրեթէ ցատկելով վաղեց դէպի ծովափը, գլխարկով, ձեռներով նըշաններ էր անում, աղաղակում, սուլում...

Նախց հեռացաւ մի մակոյկ և սկսեց թիավա որել դէպի ափը. Ռոբինզոնը բաճկոնը վրայից շրպըրտեց և ուզում էր ծու-

վը նետել ու լողալ դէպի մակոյկը. Հրճւանքից լախու էր:

Մակոյկը մօտեցաւ ցամաքին. Եւրոպացիք էին. Ռոբինզոնը գրկում էր նաւաստիներին, համբուրում, վեր վեր էր թռչում, անկապ անկապ պատմում իր գլխով անցածը և աղաչում, որիրեն հետները տանեն:

Իմաց տւին նաւապետին, որը համաձայնւեց Ռոբինզոնի ինդիքը կատարել. Պիտի նոյն օրն և եթ մեկնէին.

Ռոբինզոնը վերջին անգամ վերադարձաւ իր տնակը. Նրա համար ծանը էր բաժանւել իր կղզուց. ուր որ աչքն էր ձը-

զում, ամեն տեղ իր աշխատանքն էր, երկար տարիների աշխատանքը. Եւ ամենը պէտք է թողնէր.

Էլ չիմացաւ թէ ինչ էր վերցնում իր հետ. շտապեց մակոյի մօտ. Ծովափին նա ամուր փաթաթւեց Ուրբաթին, ասում էր ամբողջ ունեցած չունեցածը նւիրում է նրան, և արտասուր աչքերին նստեց մակոյկը ու մեկնեց դէպի առագաստանաւը:

Ուրբաթը կարծես ոչինչ չէր հասկանում, բայց երբ մակոյկը բաւականին հեռացել էր տփից, նա նետւեց ծովը ու սկսեց լող տալ նրա ետևից:

Նաւաստիները թիերը վեր բարձրացրին. Ուրբաթը հասւ մակոյին, վեր մագլցեց, ընկաւ յատակին և գրկեց Ռոբինզոնի ծնկները:

— Տէր, վերցրու օեզ հետ Ուրբաթին էլ. Ուրբաթը աւելի լաւ է մեռնի, քան թէ բաժանւի Ռոբինզոնից:

Նաւապետը ստիպւեց Ուրբաթին էլ հետը առնել. Խարիսխը վեր քաշեցին. Ճամփա ընկան:

Ռոբինզոնը գլխաբաց երկար նայում էր դէպի իր կղզին, մինչև որ աչքից ծածկւեց և տնակը, և անտառը, և սարի կատարը....

Պատմիր՝ թէ ինչ էր մտածում Ռոբինզոնը առագաստանակ տախտակամածին կանգնած, եւ թէ ինչպէս էր Ուրբաթը նայում այդ միջոցին իր շուրջը:

Թօիր՝ ամելի մանրամասն, թէ ինչպէս Ռոբինզոնը վիրատրեց ոտքը մի այծ եւ բերաւ իր այրը:

մրրիկ—սաստիկ քամի:

գերադասելի—աւելի ուզենայ:

խարիսխ—ահագին կեռ, որ պարանին կապած՝ նետում են նափց ծով նաւը կագնեցնելու համար:

տախտակամած—նաւի տախտակած երեսը:


կառուցանել—վինել:

անշէջ—չը հանգչող, չը վիշտ:

1. Ռութը կոխեց. ուրիշ բնչ կերպ կասես:

2. Ռոտակայ. հակառակը:

Այ, իմ խորոզ, կարմիր խորոզ,  
ման կը գայիր գոռող-գոռող,  
փետուրդ արաւ ողջ գարուֆոս.  
Էն չար աղւէսն, ագին ծաղիկ:



3. Տապալել. յօդւածի մէջ էիք թնչ նոյնիմասա բառ կայ:
4. Օրացոյց — օքերցոյց տւող. Ի՞նչպէս կը լինի կողմեր, հող  
մի ուղղութիւնը, ժամեր ցոյց տւող:
5. Սարսափահար. ընտրիք յօդւածից երկիւղ ցոյց տւող բա-  
ռերը:
6. Ի՞նչ տարբերութիւն. ջախջախել և կոտրել, փայլակ և  
կայծակ, արտը ջրել և անասունը ջրել. ո զանել և մորթել.
7. Զգեստը կարող է քրքրւել. էլի թնչ կարող է լինել:

## 18. Աղւէս

Աղւէսն եկաւ մութ անտառից,  
հարցմունք արաւ լիքը թառից.  
«Մեծ խորոզ է հարկաւոր ինձ»:  
Քաղցած աղւէսն, ագին ծաղիկ:

Աղւէսն հագել քուրքը գեղին,  
պտուտ կը գայ շուրջը ղեղին.  
Հուր կը տըրւեց տատիս լեղին:  
Դեղին աղւէսն, ագին ծաղիկ.

Աղւէսն ասաւ պառտւ տատին.  
«Մըտիկ չեմ տայ ձեսիդ փէտին,  
կարօտել եմ թըմփլիկ ճուտին»:  
Անվան աղւէսն, ագին ծաղիկ:

Աղւէսն եկել նըստել զէզին,  
երկար ագին ծըռել վրգին,  
աչք է գըցել մեր խորոզին,  
Էն զող աղւէսն, ագին ծաղիկ:

Մին էլ կանչեց տատըս պառաւ.  
«Աման, հասէք, տարաւ, կերաւ,  
զըլմիս էս ինչ փորձանք բերաւ  
անտէր աղւէսն, ագին ծաղիկ»:

«Աղւէս, աղւէս, փոքրիկ գազան.  
ոտներդ կարճ ու խիստ գազան.  
շըներն ամեն քեզ չը հասան,  
ճարպիկ աղւէս, ագիդ ծաղիկ»:

ագի—պոչ: Ազին ծաղիկ—պոչի ծայրը սպիտակ:  
գոռող—հպարտ:  
դարուփոս—բարձր ու ցած, հարթ՝ ու փոս տեղեր:  
աման—(թուրք.) վայ. ցաւի բացականչութիւն:  
խորոզ—(թուրք.) աքաղաղ:  
քուրք—(թուրք.) մուշտակ»

1. Ի՞նչ ասել է տատիս լեղին Հուր կարւեց:
2. Հարցմունք անել աչքը գցել ինչպէս կասես ուրեւ կերպ:

## 19. Վայրենին ու ճամակը

ա.

Եւրոպացիք ագարակներ էին շենել վայրենիների աշխարհում ու իրենց մօտ ծառայեցնում էին սեամորթ տեղացիներին։ Մի ագարակաս էր մի զամբիւղ նալինջ է նւէր ուղարկում իր բարեկամին, ու նամակի հետ տալիս է վայրենու ձեռքը։ Բարեկամը ապրում էր հեռու կալւածքում։ Ճամփին վալրենին չի համբերում ու նարինջներից մի քանիսը ուտում է։ Պարնը զամբիւղը ստանում է թէ չէ, նամակը կարգում է ու նարինջները համարում։

—Այստեղ հինգը պսկաս է, ճամփին կերել ես, —ասում է նա խիստ ձայնով։

—Որտեղից իմացար, —ապշած նայում է վայրենին։

—Այ, այս թուղթն է ասում։

—Այդ սպիտակը...

Վայրենին խլում է նամակը, մօտեցնում ականջին, բիշ սպասում ու տարակուսանքով զցում գետին։

—Բաս ինձ ոչինչ չի ասում։

բ.

Մի քանի ամիս անց՝ տէրը կրկին տալիս է նրան մի քանի շիշ զինի ու նամակ և հրամայում է, որ տանի իր բարեկամին։ Ճամփին վայրենին ուզում է անպատճառ զինու համը տեսնի, բայց վախենում է ձեռքի բռնած «սպիտակից»։

Հէնց որ հասնում է մի ամայի տեղ, հանում է նամակը, կոփում մի մեծ քարի տակ, չորս բոլորն էլ ածում է չորացած տերմաներ, որ «սպիտակը» ոչ մի ծակից չը տեսնի, իսկ ինքը բաւական հեռանում է, մի թփի տակ ցած է զնում իր բեր, հանում մի շիշ ու փառաւոր անուշ անում...։

Գլուխը տաքանում է, երգում, պարում է, յետոյ էլ պառկում, մի լաւ քնում։

Քունն էլ որ առնում է, վեր է թռչում, վերցնում է զամբիւղը, հանում է քարի տակից նամակը ու շարունակում ճամփան ուղիղ իր տիրոջ բարեկամի ագարակը։ «Իէ, հիմի թող ասի, տեսնեմ՝ ի՞նչ պիտի ասի», —մտածում է վայրենին ու իրեն-իրեն ժպտում։

գ.

Տեղ հասնելուն պէս պարոնը նամակը կարգում է, հաշում է շիշերը ու բարեկացած աղաղակում վայրենու վրա։

—Սպիտակ զինուց մի շիշ խմել ես նորից, անպիտան։

Վայրենին լսում է թէ չէ, թողնում է, փախչում։ Ուայն օրից սարսափահար պատմում է իր ցեղի մարդկանց, թէ ինչ պէս սպիտակամորթները մի տեսակ ճերմակ կաշու պէս բան ունեն, որ ամեն ինչ տեսնում է, ամեն ինչ լսում, ամեն ինչ իմանում և սպիտակամորթներին պատմում, իսկ սեամորթներին ոչինչ չի ասում։

Թղթի հետ խօսող եւրոպացին ի՞նչ պիտի թւայ վայրենու աշբին։ Պատմ' ի՞ օ՝ ի՞նչն է ստիպել մարդկանց, որ գիր հնարեն։ Դը ի օ թէ վայրենին ինչպէս հարթեց։

ագարակ—առանձին կալւածք, ուր տէրը կամ անասուններ է պահում, կամ հողագործութեամբ է զբաղւում։

մորթ—կաշի։

կալւածք—մէկին պատկանող հող կամ շէնք։

տարակուսել—չը գիտենալ ինչ անել։

ամայի—անմարդաբնակ։

իր ցեղի մարդիկ—իր ժողովրդի, իր աղքի մարդիկ։

ի՞նչ ասել է անուշ անել։ գլուխը տարացաւ։

## 20. Ժամանակը

«Թիկ-թակ, թիկ-թակ»: — Ո՞վ է այդ:  
«Ժամանակն է, գնում է.  
Նրա ոտքի ձայնն է այդ,  
թիկ-թակ, թիկ-թակ,  
որ լըսում է շարունակ»:  
— Ժամանակը, ով է այդ:  
«Յուպը ձեռին մի խուլ մարդ,  
շալակն առած մի մեծ պարկ,  
թիկ-թակ, թիկ-թակ,  
որ զընում է շարունակ»:

## 21. Քարը

ա.


Տիգրանը այդ օրը շատ ուրախ էր. Ուրախութիւնից չեր իմանում ինչ անի. իջել էր պարտէզ ու քարեր էր շպրտում ճնճղուկների վրա. Թէև ոչ մէկին էլ չը դիպաւ, բայց խեղճ ծաերը շատ էին վախենում և նրա ձեռքի ամեն շարժումից վեր էին թռչում ծառի ճիւղերից, նստում էին տանիքի վրա ու նորից իջնում ցանկապատին. Նրանց այդ վախեցած թռոչ-կոտելը շատ՝ էր գւարճացնում Տիգրանին.

Այդպէս ճնճղուկների ետևից ընկած միջոցին յանկարծ նկատեց, որ գարպասի առջև մի աղջիկ էր կանգնած պատըռտած շորերը հագին ու ոտարորիկ. Նրա մազերը խիտ-խիտ փունջերով թափւում էին կեղտոտ ճակատին, այտերին և ուսերին.

— Աղա, քեզ մատաղ... — կամացուկ ու երկշոտ ձայնով կը մկրմաց աղջիկը:

Տիգրանը հէնց այն է ուզում էր քարը նետի ճնճղուկնե-

րի վրա, և անգ առաւ ու մօտեցաւ աղջկան:  
— Դու աղքատ ես, — հարցրեց նա, ձեռքով ճակատի քըր-ախնքը սրբելով:  
— Այս... Աղքատ եմ... խեղճ եմ... Պստիկ աղա, մի ողոք-մութիւն արա, — կրկնեց աղջիկը:  
Տիգրանը հետաքրքրութեամբ նայում էր նրան,  
Աղջիկը այնպէս տգեղ էր, այնպէս փոքր, նիհար, այնպէս սեացած արկից. Նրա մեծ, ներս ընկած աչքերի մէջ և ամ-



բողջ գէմքի վրա մի հիւանդոտ, ողորմելի բան կար.

— Դու հաց ես ուզում, համ, — հարցրեց տղան, քարը իր բը-ռան մէջ ամուր սեղմելով: — Ապա, ձեռքդ պահի:

Աղջիկը վստահ պարզեց իր փորբիկ, չորացած ձեռքը:

— Առ, — ասաւ տղան և նրա ափը գրաւ զեղին քարի կտորը:

Աղջիկը քարը դէն չը նետեց և ոչինչ էլ շասաւ. նայեց  
բարին, յետոյ արտասւալից աչքերը բարձրացրեց Տիգրանի  
վրա ու զլուխը կախած դուրս գնաց փողոց:

Տիգրանի ուրախութիւնը յանկարծ չքացաւ, դէմքը մոռայ-  
լեց: Ի՞նչ էր պատահել, ինչու: Արեւ առաջւայ պէս ջինջ,  
ճնճուկներն էլ առաջւայ, պէս թոշկոտում էին և ճըլւըլում,  
բայց Տիգրանը տրտում էր:

Յանկարծ վազեց խոհանոց, ինքն իր ձեռքով կարեց մի  
մեծ կտոր հաց և դուրս նետեց գարպասից: Նայեց աջ, նա-  
յեց ձախ, աղջիկը չէր երեսում, գնացել էր: Տիգրանը դուրս  
ելաւ փողոց, մէկի, միւսի բակը, :ը կար:

Տիգրանը վերադարձաւ իրենց բակը և հացը ձեռքին կանգ-  
նած մնաց դարպասի անկիւնում:

Նրանից յետոյ ամեն անզամ աղքատի ձայն լսելիս, ոեղ-  
մըլում էր Տիգրանի սիրտը, նա դուրս էր նետուում, որ տես-  
նի՝ զուցէ այն աղջիկն է:

Ոչ. էլ երբէք չը տեսաւ այն աղջկան: Աղջիկը անհետ  
չքացել էր, տանելով իր հետ զեղին քարը. կորել էր, կործես  
իսկի աշխարհիս երեսին ծնւած չը լինէր...

Համեմատի՞ր Քարի պատմութիւնը Դեղձի պատմութեան հետ:  
Ինչով է նման, ինչով է տարբեր:

Գրի՞ր, ի՞նչ էր զգում Տիգրանը աղքատ աղջկայ հեռանալուց յետոյ  
և ի՞նչ արաւ:

ցանկապատ—փայտից, ցցերից կամ ճիւղերից շինած շրջապատ:  
երկշուր—վախկոտ:  
Ջինջ—յստակ, մաքուր,  
ողորմելի—խղճալի:  
դարպաս—բակի մեծ դուռ:

գուցէ—կարելի է:

չըանալ—անյայտանալ, անհետանալ, կորչել:

1. Շպրտել, նետել—էլի ինչպէս կարելի է ասել:

2. Խիտ մազեր—հակառամկը:

3. Երկշուր, հիւանդուր, ցաւուր, երակուր—այդ բառերը ի՞նչ  
մասնիկով են վերջանում:

4. Արտասւալից—ի՞նչ արմատներից է կազմւած:

## 22. Երկու հարուստ

Երբ մօտս փառաբանում են այս կամ այն հարստին, որ  
իր ահագին եկամուտներից հազարներ է բաժին հանում  
մանուկներին կրթելու, հիւանդներին բժշկելու և ծերունի-  
ներին խնամելու համար, ես գովում եմ և ուրախանում:

Գովում եմ և ուրախանում, բայց միևնոյն ժամանակ  
մտքիցս չի հեռանում այն չք աւոր գիւղացին, որը իր եղբօր  
թողած որը աղջկան առաւ իր մօտ՝ իր աղքատիկ տնակը:

—Բայց ինչպէս վերցնենք Մարիամին.—ասում էր կնիկը.  
—մեր վերջին կողէկը նրա վրա պէտք է ծախսենք. Էլ փող չի  
մնա, որ աղ առնենք, ապուրը աղենք:

—Բան չը կայ. մենք էլ ապուրը անալի կուտենք. —պատս-  
խանում է մարդը:

Ուր այս գիւղացին, ուր այն հարուստը...

Ինչու այն հարուստը չի հանի այս գիւղացուն:

Վերնագիրը ինչու է «Երկու հարուստ»:

Փառաբանել—սաստիկ գովել:

անալի—տանց աղի:

## 23. Յորմատէրն ու ջաղացպանը

ա.

Մէկը ցորեն տարաւ ջաղաց,  
էտ ցորենից ալիւր աղաց.  
Ջաղացպանն էլ բաղարջ եփեց,  
թոնրից հանեց մէ ջտեղ դըրեց.  
—Արի պատմենք միմի լաւբան.  
ումը լինի սուր, գուրեկան,  
էս բաղաջը թող նա ուտի.  
ու չը նայենք դորթի, սուտի:

բ.

Յորնատէրը՝ թէ ես ասեմ,  
Ջաղացպանը՝ թէ կը լսեմ:  
—Մենք ունէինք մի մեծ արլար,  
որին նման մի տեղ չը կար.  
հերու էր թէ մէկէլ տարին,  
քեռիս հեծաւ էտ արլարին,  
գընաց Լոռի՝ ցորեն բերի:  
Ճանապարհին չի նկատում  
մի գայլ ձիռւ կողն է ուտում,  
գնում քեռիս ուռ է բերում  
ու արլարի կողը զործում,  
լւանում է ու ջուր ածում,  
նորից հեծնում էդ արլարին,  
ման է գալի կըլոր տարին,  
ու հազար փութ ցորեն բարձած,  
ինքն էլ բեռան վրա նստած,  
գալիս կանգնում է մեր դռան.  
Մենք շինեցինք մի ելարան,  
ելանք, քեռուս ներքև բերինք,

բեռ վ ցորենն էլ ննրս դրինք:  
ին ցորնիցն է, որ զու ահա  
էս բաղարջն ես թխել հիմա:

գ.

Ջաղացպանը՝ թէ ես ասեմ,  
յորնատէրը՝ թէ կը լսեմ:  
—Մենք ունէինք մի մեղրաճանճ,  
համ պոզ ունէր, համ էլ ականջ.  
մէկ օր ճանճը փախաւ տանից.  
հօրս պարապ արաւ բանից.  
հայրս քրտնած գարձաւ գեղը,  
մօրիցս առաւ մեծ ասեղը,  
աարաւ տնկեց գոմի կտրան  
ու ջուխտ ոտով ելաւ վրան.  
տեսաւ հեռուն, գաշտի միջին,  
որ գութան են լըծել ճանճին:  
Տուն տընովի գաշտ վազեցինք,  
պոչից բունած տուն քշեցինք:  
Տըրորել էր ճանճն իր ուսը.  
ջարդեց մայրս տան ընկուզը  
ու ընկուզից հանեց եղը,  
ըըսեց ուսի ցաւած տեղը:  
իսկոյն ուսից բուսաւ մի ծառ.  
ծառին իջաւ ագռաւը թառ,  
մի հողի կոշտ ախալէրս առաւ,  
էն ագռաւին վրա արաւ.  
կոշտը ցըրւեց, գարձաւ մի հող՝  
մի օրավ ար վարելահող:  
Երբ որ եկաւ հասաւ մարտը,  
ցորեն արինք մենք էն արտը.  
մտանք յունիս՝ ընկաւ բաղը,  
ես վեր կալայ սուր մանգաղը,

մըտայ արտը ու քաղեցի,  
բայց դէմ ընկայ մի մեծ քարի,  
քարի վրա փորւած գրի.

«Եյ, ցորնատէր, վայ քո բանին,  
բաղարջը տուր ջաղացպանին»:

Ցորնատէրը դէմքը կախած՝  
ալիւրն առաւ, գնաց քաղցած:

Ո՞ն է էստեղ ամենից թունդ սուտը. ո՞ն է ամենից ծիծաղելու  
սուտը. ո՞ն է ամենից զնդեցիկ սուտը:

Բաղարջ—առանց թթխմօրի պատրաստած հաց:  
հերու—անցեալ տարի:

Օրավար—այնքան հող, որքան մէկ օրում կարելի է վարել:

1. Ի՞նչ է նշանակում կլոր տարի, տուն-անովի, քարը աղ-  
պաւին վրա անել.

2. Համ պող ունէր, համ էլ ականջ. թուրքերէն համ-երի  
տեղ հայերէն ինչպէս կասես:

3. Ինչպէս կասես ուրիշ կերպ տրորել.

## 24. Ամանալաւ վկայականը

Մի վաճառական լրագիրներում յայտարարել էր, թէ իր  
խանութի համար մի աշկերտ է հարկաւոր:

Շատ մարդ եկաւ վարձւելու. վերջապէս վաճառականը  
ընտրեց մէկին:

—Ասա, ինդրեմ,—հարցրեց մի ծանօթ,—ինչու դրան ընտ-  
րեցիր. Ոչ վկայական ունէր, ոչ էլ ճանաչում էիր. Ուրիշները  
հրաշալի վկայականներ բերին, բայց դու ճամփու դրիր:

—Միալում ես, ասաւ վաճառականը: —Եյս տղան շատ  
վկայականներ ունէր. Սենեակը մտնելուց առաջ ոտները լաւ

սրբեց ու դուռը ծածկեց առանց թխկացնելու. ուրեմն մաք-  
րասէր է ու կարգապահ: Իր նստած աթոռից վեր կացաւ ու  
տեղ տւաւ ներս մտնող կաղ մարդուն. ուրեմն բարեսիրտ է  
ու յարգում է աւելի հասակաւորին: Դեռ շէմքին գլխարկը  
հանեց արագ ու կտրուկ պատասխաններ էր տալիս իմ հար-  
ցերին. ուրեմն բաղաքավարի է ու աչքաբաց: Կոացաւ, բարձ  
րացրեց գիրքը, որ դիտմամբ ձգել էր յատակին, մինչդեռ ու-  
րիշները դէմ էին ընկնում զրքին կամ կողքից անցնում: Հան-  
գիստ սպասում էր իր հերթին, չաշխատելով ուրիշների առաջը  
կտրի, ուրեմն լաւ կրթւած տղայ է: Շորերը լաւ սրբւած էին,  
իսկ երեսն ու ձեռքերը մաքուր: Ի՞նչ ես կարծում, այս բո-  
լորը միասին լաւագոյն վկայականը չի:

Ուրեմն՝ ո՞ն է մարդու ամենալաւ վկայականը:

Գրի թողան ինչպէս մտաւ ու ի՞նչպէս իրեն պահեց վաճառա-  
կանի մօտ:

յայտարարել—ամենքին յայտնել, սովորաբար լրագրի միջոցով:  
հրաշալի—շատ լաւ:

դիտմամբ—առաջուց մտածելով:

1. Ե՞րբ ենք ասում աշակերտ և ե՞րբ աշկերտ:

2. Դուռը ծածկել, դուռը փակել, դուռը կողպել, դուռը  
վրա անել, դուռը ծերպ անել—ի՞նչ տարբերութիւն ունեն:

3. Հանի՞ր այս յօդւածի միջից բոլոր բարդ բառերը, գտիր  
արմատները և բացատրի՛ք բառերը:

4. Կրթւած կամ կիրթ տղայ—հակառակը. քաղաքավարի—  
հակառակը:

5. Լաւագոյն վկայականը միևնոյն է թէ ամենալաւ վկա-  
յականը. Ինչպէս կասես ուրեմն ամենաքարձը դասարանը,  
ամենագեղեցիկ ծաղիկը, ամենահին եկեղեցին.



## 25. Մկների ժողովը

Սով է, սով է Մկաստան,  
կատւի ձեռքից լգստան:  
Գզիրն ընկաւ դըռնէ դուռ,  
Էլ չը թողեց դուռ-կտուր,  
ջահէլ, ահէլ գեղովի,  
կանչեց բերեց ժողովի,  
թէ ինչ անեն, որ կատւէն  
մի հնարքով ազատւեն.

Եկան գիւղի ջոջերը,  
երկար բարակ պոչերը,  
մասնակցեցին խորհրդին.  
Մի ջոջ խօսեց իր հերթին.  
«Ասէք, միներ ցեղակից,  
չունեմ որդի, կողակից.  
Ես մի անտէր ծերուկ եմ,  
բայց պատւաւոր մի մուկ եմ:  
Պակսեց ուժը իմ ստի,  
պէտք է մեռնեմ անօթի.  
Էլ չեմ կրծի չորթանը,  
Էլ չեմ ծրծի ես թանը.  
մահս է կանգնել գուանը,  
սով է զրկել Մռանը:

Ախ, Մռանը, Մռանը.  
վեր է ընկնում մառանը՝  
հէչ նման չի գազանի.  
ինչքան ասես նազ անի,  
ստից սատկի, տազ անի,  
մեզի տեսնի, վազ անի,  
զիսից բռնի, կախ անի,  
թաթովը տայ, խաղ անի,  
ուտի, քէֆը չաղ անի:  
Էսպէս զուլում ու կրակ...  
դեռ աչքերն էլ ջուխտ ճրագ:  
Բայց թէ ազնիւ մեր ցեղը  
կորչելու չի զուր տեղը.  
ցաւն էլ ունի իր զեղը:  
Այ բերել եմ  
ես մի զանգ:  
ծափ-ծըռնգոց,  
մէջը զնգոց.  
կատւի վզից  
մենք կախ տանք,  
որ ինչքան էլ օրօրայ,  
որ ինչքան էլ շորորայ,

ստից սատկի  
տազ անի,  
գալն իմանանք  
գազանի:  
Է. զանգը ով կախ անի:  
— Ալօ, դուռ:  
«Ալծու տանի»:  
— Բայօ, դուռ,  
«Բալծու կախէ»:  
— Զայօ, դուռ,  
«Զայօն կաղ է»:  
— Մսաօ, դուռ:  
«Մստօն կարճ է»:  
— Փոստօ, դուռ:  
«Էտ էլ խիզգ է»:  
— Համբօ, դուռ:  
«Ես տկար եմ»:

— Զամբօ, դուռ:  
«Ես տանտէր եմ»:  
— Սաղօ, դուռ:  
«Ասենք տարայ»:  
բա որ կատուն,  
գայ ինձ վրա»:  
— Բտօն, Խտօն թող մէկից  
բռնեն կատւի քամակից:  
«Ի՞նչ է խօսում շոր գանդը.  
էլ ի՞նչ Բտօ, ի՞նչ ֆոտան»:  
ճստաց Բտօն ճաճստան:  
— Լոփ, յանդուգ,  
կոտորւէք դուք.  
— վախկտներիդ ես թաղեմ.  
Ճառասեմ թէ, զանգ կախեմ,—  
զոչեց ջոջը,  
քաշեց պոչը:

լգստան—լպստած, անամօթ:  
ջահէլ-ահէլ—երիտասարդ և ծերունի:  
ջոջ—մեծ:  
կողակից—ամուսին:  
անօթի—սոված:  
հէչ—իսկի, բոլորավին:  
տազ անել—լոել, սուս մնալ:  
չաղ անել—սասակացնել կրակը, քէֆը  
զուլում—անբաղդութիւն:  
շորորալ—օրօրւել, շարժւել:  
քամակից—ետեկից:  
յանդուգն—սաստիկ համարձակ, անամօթ:

- Հայաստան, Վրաստան, Ռուսաստան — հայերի, վրացիների, ռուսների երկիր: Ի՞նչ ասել է Մկաստան: Ի՞նչպէս կասես պարսիկների, շինացիների, տաճիկների երկիր:
- Դոնէ-դուռ, տնէ-տուն, գիւղէ-գիւղ, քաղաքէ-քաղաք, —ուրիշ ի՞նչ կերպ կասես:
- Կատւէն ազատւել — այլ կերպ ի՞նչ ձևով կասես:
- Թաթով տալ, բարօվ տալ, կացնով տալ. այստեղ տալ, ի՞նչ է նշանակում:
- Էսպէս կրակ — ի՞նչ ասել է: Ի՞նչ ասել է կրակ տղայ:

## 26. Քեռի Սիմոնի նապաստակը

*Ակաբետ ապրիլ 99*

Քեռի Սիմոնը շատ լաւ մարդ է. ափսոս որ մի քիչ գինուն բարեկամ է:

Մի օր աղան ուղարկում է նրան քաղաք, ձեռքը տալիս է մի նապաստակ, որ տանի իր ընկերոջը նւէր:

Քեռի Սիմոնը լոլողականջ կարճապոչանուն ձգում է մի պարկի մէջ, պարկը շալակում ու ճամփայ ընկնում: Ո՞նց է գնում... իսկ նապաստակը պարկում կուչ է եկել, կծիկ կտրել:

Ճամփի կիսին մի գինետուն կար: Քեռի Սիմոնը ուզում էր առանց նայելու մօտովն անց կենայ. մի տասը քայլ էր արդէն անց էր կացել, բայց չը համբերեց, ետ նայեց: Խանութի շէմքում ծանօթներ տեսաւ:

Մտածեց. «Բա մէկ բարի լուս էլ է չասեմ»...

Քեռի Սիմոնը մտաւ գինետուն: Պարկը դուրսը վայր դըրաւ ու ծանօթների կենացն է խմում: Չը գիտի թէ էտ ծանօթները գլխին ի՞նչ են բերելու:

2.

Խմեց, պարկը շալակը զցեց ու բայեաթին կլկացնելով՝ առաջ է գնում:

Միայն թէ էս նապաստակը ինչ-որ շատ է վեր-վեր թրոշում պարկի մէջ: Ի՞նչ էլ սուր ատամներ է ունեցել: Քեռի Սիմոնի մէջքը կարծես ասեղներով ծակծում էին:

—Այ, հանգիստ կաց, շլդիկ ինամի: Շոքել ես, հա: Էս է կը հասնենք, մուշտակդ կը հանեն, գէ գնա ու տկոր-տկոր տրսինգ տուր:

Քեռի Սիմոնի քէֆը տեղն էր:

Էս էլ ահա աղայի ընկերոջ տունը:

—Թրը-խկ, թրը-խկ: Բաց արէք, բաց արէք: Մէկ նապաստակ եմ բերել, մէկ նապաստակ որ... Դէ, շատ պեցէք, շոքել է:

Ողջ տանեցիք դուրս թափւեցին: Քեռի Սի մօնը նապաստակը առօք-փառօք պարկից հանում է... կատ ու: Քեռի Սիմոնը շշկլած՝ կանգնել է կատուի պոչից բարձր բռնած:

—Այդ նապաստակը քեզ լինի, քեզ, — կանչում է տանտիկինը:

Աղայի ընկերը բարկանում է, երեխաները ծիծաղում են, շները հաշում են:

Քեռի Սիմոնը վերջապէս կատուն զըցում է նորից պարկը, շալակում, և հայդէ ետ դէպի գիւղը:

3.

Ճամփին ինքն իրան ասում է. «Քեռի Սիմոն, տեսամր հա, հօ տեսամր: Սիր նապաստակ բռնողը դու չէիր, տոպրակի մէջ գցողը դու չէիր, խեթի տոպրակ: Չը լինի՞ թէ աղէն մի բան է արել, որ ինձ խայտառակի»:

Հասնում է նորից գինետանը:

Մտնի, թէ չը մտնի: Չէ, ի՞նչպէս կարելի է. պէտք է շուտով տուն հասնի. էս բան է՝ որ իր տարիքի մարդուն էսպէս խայտառակեցին ժողովրդի մէջին: Չէ, չի մտնի:

Աւ մի բսան քայլ անց է կենում դէնը:



—Բա էս այւած սիրտն էլ է չը հովացնեմ, —մտածում  
է մէկ էլ, պարկը մէկ ուսից միւսն է զցում ու շուռ գալիս  
դէպի զինետուն:

Նորից մի երկու բաժակ կոնծում է ծանօթների կենացը:  
Նրանք էլ հօ անում են իրենց անելուն:

4.

Պարկը շալակին ահա մտնում է մեր Քեռին գիւղը:

«Ոնց է սուս կացել, սրան տես: Հիմի թռչկոտիր պար-  
կի մէջ, Է... գիտես՝ որ էս է զըխկ եմ անելու քեզ, համ...  
Մէկ աղին տեսնեմ դեռ: Էսպէս էլ խայտառակութիւն, Քեռի  
Սիմօնը հվ, կատուն հվ: Տօ, էն աշխարհքի պարծանք որս-  
կանը հվ, մկան գողը հվ:»

Թրը՛խկ, հա թրը՛խկ, ոնց է ծեծում Քեռի Սիմօնը աղայի  
դուռը:

—Բաց արէք էլի, բաց արէք Աւելորիս  
խայտառակեցիք: Զեզ մի կատուցոյց տամ,  
մի կատու նր...

Տանեցիք դուրս են թափում:

—Ահա, աղա, ընկերդ քեզ ետէ դրկում:  
Ասում է. «Էս դու, էս էլ քո նապաստակը»:

Մէկ էլ զորթ՝ նապաստակը չը հանի  
պարկից:

Քեռի Սիմօնը շշկած կանգնել է՝ նա-  
պաստակի երկար ականջներից բարձր բռնած:  
Աղան աչքերը չուած նայում է, թէ նապաս-  
տակը ինչու է ետ բերել:

—Թու, սատանի ճուտ, —յանկարծ աղաղակում է Քեռի  
Սիմօնը: Նապաստակը ձեռքից վայրէ ընկնում ու փախչում:  
Աղան կանգնած հարայ է տալիս, շները վաղում են:

5.

Էն է ու էն՝ Քեռի Սիմօնը նապաստակ չի որսում.



Էն է ու էն՝ աղան և իր ընկերը իրար հետ վիճում են:  
—Դու ինձ ինչու էիր կատու ուղարկում, ես քո մասխա-  
րան եմ:

—Աստւած, երկինք, նապաստակ էր, նապաստակ:  
—Այալնոր, քո բանածը, քաղաք տարածը նապաստակ չէր:  
—Նապաստակ էր, աղա ջան, դու շատ ապրես, նա-  
պաստակ էր:

—Այ մարդ, քո բերածը կատու չէր, սև կատու—հարց-  
նում էր աղայի բարեկամը:

—Կատու էր, աղա ջան, բաս կատու չէր:  
Էսպէս մինչև էսօր էլ վիճում են:

Գուցէ դո՞ւք սբանց բացատրէք, թէ ի՞նչպէս է, որ նապաստակը  
կատու դարձաւ, կատուն էլ՝ նապաստակ:

Պատմի այնպէս, ինչպէս որ Սիմօնի զինետան մէջ հանդիպած  
ծանօթները ծիծաղելով իրար պատմում էին:

բ այեաթի (թուրք.)—երգի մի տեսակ:  
տրտինգ տալ—ցատկոտել. սովորաբար քուսակի համար են  
ասում:

Խայտառակել—ուրիշների առաջ մէկի պատիւը զցել:  
զըխկ անել—զետին զարկել, զետնին տալ:  
պարծանք—հպարտութիւն. պարծենալ—հպարտանալ:

1. Կուչ գալ, կծիկ կտրել—ուրիշ ինչպէս կասեռ:
2. Գինետուն, սեղանատուն—գտիր արմաները. Ուրիշ էլ  
ինչ խօսքեր գիտես այս ձեռվ տուն-ով կաղմած.
3. Շալակը առնել—շալակել. իսկ ուսը առնել..., զիրկը առ-  
նել...
4. Ծակել-ծակծկել, գողալ-գողգողալ, գոռալ-գոռգոռալ,

շողալ-շողօղալ, վազել-վազվել, փորել-փորփել—այս զոյգ  
բառերի մէջ մտքերի ինչ առըբերութիւն կայ և բառակազմութեան  
ինչ տարբերութիւն կայ:

5. Առօք-փ առօք—ուրիշ ինչպէս կասես:

6. Այլուած սիրտը հովացնել—ինչ ասել է: Կարելի է մէկի  
սիրտը այրել. էլի ինչ կարելի է անել:

7. Աչքը չո ել, ոտները չոել—ինչ ասել է:

## 27. Ճպուռն ու մրջիւնը

Թըոփ-վըոփ մի ճպուռ  
ողջ ամառը շուռ ու մուռ  
երգեց, ճոաց,  
ճըոճըոաց:

Մին էլ, ըհը, ձմեռը  
փոեց իրա թևերը,  
բացեց գորգը սպիտակ,  
զաշտերն առաւ ձիւնի տակ.  
Ուր են պայծառ օրերը.  
Էլ որն ասեմ, էլ որը,  
երբ ամեն մի թփի տակ  
թէ սեղան կար, թէ օթեակ.  
Փշեց քամին ցրտաշունչ,  
ճպուռն ընկաւ լուռ ու մունջ.

բաղցած փորին էլ ինչ երգ.  
ցուրտը տարաւ ոտ ու ձեռք:  
Զընզըր-զընզըր զողալով,  
ծանր-ծանր սողալով,  
նա մըջիւնին ասում էր.  
«Գլխիդ մատաղ, սանամէր,  
մի ճար արա՝ շունչ առնեմ,



ցրտից, սովից չը մեռնեմ.  
Կերակրի ինձ, տաքացրու,  
մինչև գարուն ապրեցրու.  
—Ինչ խաբար է, սանիկը.  
զարմանում եմ, ջանիկս.  
չափատեցիր ամառը,  
ասա, ինչ էր պատճառը:  
—Էտպէս բանի, սանամէր,  
էլ ժամանակ հիվ ունէր:  
Էն խոտերում բուրաւէտ  
երգում էի մերոնց հետ:  
—Երգում էիր. շատ բարի.  
այժմ էլ բոնի վերվերի,  
քամին ծափ տայ՝ դու պարի:

Թըոփ-վըոփ—թըովլուռն, թեթև թռչկոտող  
օթեակ—օթեան, զիշերելու տեղ:  
խաբար (թուրք.)—լուր: Ի՞նչ խաբար է—ինչ է պատանել:  
բուրաւէտ—քաղցը բոյրերով, անուշ հոտերով լիքը:  
վերվերի—պարի մի աեսակ:

Ի՞նչ ասել է ողջ ամառը շուռ ու մուռ: Ի՞նչ ասել է ման  
է գալիս ծուռ ու մուռ, քարը գնաց զլդոր-մլդոր:

## 28. Քաջ նազարը

1.

Լինում է չի լինում սի խեղճ մարդ՝ անունը Նազար:  
էս Նազարը մի անշնորհք ու վախկոտ մարդ է լինում: Վէր  
է ընկնում միշտ իրենց դռանը ու պառկում արևկող:  
Մի ամառայ շոք օր գազազած ճանճերը գալիս են սրա

քիթ ու պողոսկին վեր գալի, լցւում, ինքն էլ ալարում  
քիթ. որ շատ նեղացնում են՝ ձեռը տանում է երեսին զար-  
կում. Որ երեսին զարկում է՝ ճանճերը ջարդւում են, առա-  
ջին վեր թափում.

— Վահ, էս ի՞նչ էր... — մնում է զարմացած:

Ուզում է համրի, թէ մի զարկով քանիսին սպանեց՝ չի  
կարողանում. Մտածում է, որ հազարից պակաս չի լինիր

— Վահ, — ասում է, — ես, որ մի զարկով կարող եմ հազար  
շունչ կենդանի ջարդել, էլ ի՞նչ եմ էստեղ վեր ընկել...

Վեր է կենում ուղիղ գնում է իրենց տէլտէրի մօտ.  
Պատմում է իր քաջագործութիւնը ու խնդրում է՝ իր արածը  
տէրտէրը գրի, որ անյայտ չը մնայ, ամենքն էլ կարդան՝  
իմանան. Տէրտէրն էլ, կատակի համար, մի փալասի կտորի  
վրա գրում է.

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,

որ մին զարկի՝ ջարդի հազար:

Նազարս էս փալասի կտորը մի փէտի ծէրի ամրացնում  
է, մի ժանգոտած թրի կտոր կտպում մէջքը, իրենց հարևանի  
իշխն նստում, ընկնում է մի ճամփայ ու գնում. Ինքն էլ չի  
իմանում, թէ էտ ճամփէն նուր է տանում.

2.

Շատ է գնում, քիչ է գնում, շատն ու քիչն էլ ինքը կի-  
մանար, գնում է ընկնում մի գիւղ. ինքը գիւղին անծանօթ,  
գիւղն իրեն, Ուր գնայ, նուր չը գնայ: Մի տանից զուռնի  
ձէն է լսում. Ճին քշում է էս ձէնի վրայ, գնում է ընկնում  
մի հարսանքատուն:

— Բարի օր ձեզ:

— Այ Աստծու բարին քեղ, բարով եկար, հազար բարի:

— Համեցէք հա, համեցէք: Դէ զոնախն Աստծունն է:  
Սրան տանում են իր գրօշակով սուփրի վերի ծէրին բազմեց-  
նում:

Հարսանքաւորները հետաքրքրում են իմանան, թէ ով  
է էս տարօրինակ անծանօթը. Ներքի ծէրից մինը բոթում է  
իր կողքի նստածին ու հարցնում; սա էլ իր կողքի նստածին  
է բոթում, էսպէս հերթով իրար բոթելով ու հարցնելով բանը  
մնում է վերի ծէրին նստած տէրտէրին: Տէրտէրը մի կեր-  
պով զոնախի գրօշակի վրայ կարդում է.

Անյաղթ հերոս Քաջն Նազար,

որ մին զարկի՝ ջարդի հազար:

Կարդում է ու զարհուրած յայտնում է իր կողքի նստա-  
ծին, սա էլ իր կողքին նստածին, սա էլ երրորդին, երրորդը  
չորրորդին. Էսպէսով հասնում է մինչև զոան տակը ու ամ-  
չոր հարսանքատունը գրըմբում է, թէ բա չես ասի, նորեկ  
զոնախն է ինքը

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,

որ մին զարկի՝ ջարդի հազար:

3.

— Քաջ Նազարն է հա... — բացականչում է պարծենկոտի  
մինը, — ինչըան է փոխւել, միանգամից լաւ չը ճանաչեցի...

Եւ մարդիկ են գտնւում, որ պատմում են նրա արած  
քաջակործութիւնները, ճին ժանօթութիւնն ու միասին անց-  
կացրած օրերը:

— Հապա ի՞նչպէս է, որ էսպէս մարդը հետը ոչ մի ծա-  
ռայ չունի, — զարմանքով հարցնում են անծանօթները.

— Էտպէս է զրա սովորութիւնը, ծառաներով ման գալ չի  
սիրում: Մի անգամ ես հարցըրի, ասաւ: ծառան ի՞նչ եմ ա-  
նում, ամբողջ աշխարհին իմ ծառան է ու իմ ծառան:

— Հապա ի՞նչպէս է, որ մի կարգին թուր չունի, էս ժան-  
գոտ երկաթի կտորն է մէջքին կապել:

— Շնորհն էլ հէնց դրա մէջն է է, որ էս ժանգոտ եր-  
կաթի կտորով մին զարկես՝ ջարդես հազար, թէ չէ լաւ թըով,  
ի՞նչ կայ որ, սովորական քաջերն էլ են ջարդում:

Ու ապշած ժողովուրդը ոտի է կանգնում, խմում է Քաջ  
Նազարի կենացը: Իրենց մէջի խելօքն էլ դուրս է գալի ճառ  
է ասում Նազարի առաջ. ասում է՝ «Մենք վազուց էինք լսել  
քո մեծ հոչակը, կարօտ էինք երեսդ տեսնելու, և ահա էսօր  
բախտաւոր ենք, որ քեզ տեսնում ենք մեր մէջ»: Նազարը  
հառաչում է ու ձեռքը թափ է տալի: Ժողովրդակաները խոր-  
հրդաւոր իրար աշքով են անում, հասկանում են, թէ էա հա-  
ռաչանքն ու ձեռքի թափ տալը ինչքան բան կը նշանակէր...  
Աշուղն էլ, որ էնտէղ էր, ձեռաց երգ է յօրինում ու  
երգում.

Բարով եկար, հազար բարի,  
հըզօր արծիւ մեր սարերի,  
թագ ու պարծանք մեր աշխարհի,  
անյաղթ հերոս Քաջըդ Նազար,  
որ մին զարկես՝ ջարդես հազար:

Խեղճ տըկարին դու ապաւէն,  
ազատ կանես ամեն ցաւէն,  
մեզ կը փրկես անիրաւէն,  
անյաղթ հերոս Քաջըդ Նազար,  
որ մին զարկես՝ ջարդես հազար:

Մատաղ ենք մենք քո դըրօշին,  
մէջըիդ թըրին, տակիդ ուաշին,  
նրա ոտին, պոչին, բաշին,  
անյաղթ հերոս Քաջըդ Նազար,  
որ մի զարկես՝ ջարդես հազար:

4.

Ու ցըւելով հարբած հարսանքաւորները տարածում են  
ամեն տեղ, թէ գալիս է

Անյաղթ հերոս Քաջըն Նազար,  
որ մին զարկի՝ ջարդի հազար:

Պատմում են նրա զարմանալի քաջագործութիւնները,  
նկարագրում են նրա ահոելի կերպարանքը: Ու ամեն տեղ  
իրենց նորածին երեխաների անունը գնում են Քաջ Նազար:

Իսկ ինքը Նազարը հարսանքատանից որ հեռանում է,  
գնում է հասնում մի կանանչ գաշտ: Էս կանանչ գաշտում  
գործ է արածի, գրօշակը տնկում է, ինքն էլ գրօշա-  
կի շւաքումը պառկում քնում:

Դու մի ասիլ օխտը հսկայ եղբայրներ կան, օխտը աւա-  
զակապետ, էս տեղերը նրանցն են, իրենց ամրոցն էլ մօտիկ  
սարի զիմին է: Էս հսկաները վերեկից մտիկ են տալրս՝ որ մի  
մարդ եկել է իրենց հանդում վէր է եկել: Շատ են զարմա-  
նում, թէ էս ինչ որտի տէր մարդ պէտք է լինի, քանի գըլ-  
խանի, որ առանց քաշւելու եկել է իրենց հանդում հանգիստ  
վէր եկել ու էշն էլ բաց թողել: Ամեն մինը մի գուրզ ունէր  
քառասուն լգրանոց: Էս քառասուն լգրանոց գուրզները վերց-  
նում են գալի: Գալիս են տեսնում մարդը քնած, գլխա-  
վերեր մի գրօշակ տնկած, գրօշակի վրէն գրած.

Անյաղթ հերոս Քաջն Նազար,

որ մին զարկի՝ ջարդի հազար:

Վայ, Քաջ Նազարն է... Մատները կծում են հսկաներն  
ու մնում են տեղները սառած: Դու մի ասիլ հարբած հար-  
սանքաւորների տարածած լուրը սրանց էլ է լինում հասած:  
Էսպէս թուքները ցամաքած, չորացած սպասում են, մինչև  
Նազարն իր քունն առնում է ու զարթնում. որ զարթնում է  
աշքերը բաց է անում տեսնում գլխավերել քառասուն լգրա-  
նոց գուրզները ուսներին օխտն ահոելի հսկաներ կանգնած՝  
էլ փորումը սիրտ չի մնում: Մտնում է իր գրօշակի ետևն ու  
սկսում է գողալ ոնց որ աշունքւայ տերեկը կը գողայ: Էս հը-  
կաները որ տեսնում են սա գունատւեց ու սկսեց գողալ, ա-  
ռում են՝ բարկացաւ, հիմի որտեղ որ է մի զարկով օխտիս էլ  
կը սպանի, առաջին գետին են փուլում ու խնդրում են.

«Անյաղթ հերոս Քաջըդ Նազար,  
որ մին զարկես՝ ջարդես հազար:

Մենք սել էինք քո ահաւոր անունը, տեսութեանդ էինք  
փափագում. այժմ բախտաւոր ենք, որ քո ոտով ես եկել մեր  
հողը. Մենք, քո խոնարհ ծառաներդ՝ օխտն ախպէր ենք, ահա  
մեր. ամրոցն էլ էն սարի գլխին է՝ մէջը մեր գեղեցիկ քոյրը:  
Աղաչում ենք շնորհ անես գաս մեր հացը կտրես...».

Էստեղ Նազարի շունչը տեղն է գալի, նստում է իր էշը,  
նրանք էլ դրօշակն առտծ առաջն են ընկնում ու հանդիսա  
ւոր տանում են իրենց ամրոցը:

Տանում են ամրոցում պահում, պատում թագաւորին  
վայել պատով ու էնքան են խօսում նրա քաջագործութիւն-  
ներից, էնքան են գովում, որ իրենց գեղեցիկ քոյրը սիրահար-  
ւում է վրէն. ինչ ասել կուզի՝ յարգն ու պատիւն էլ հետն  
աւելանում է.

### 5.

Էս ժամանակ մի վագր է լուս ընկնում էս երկրում ու  
սարսափ է զցում ժողովրդի վրա. Ո՞վ կը սպանի վագրին, ո՞վ  
չի սպանի. Ի հարկէ քաջ Նազարը կը սպանի:

Վագրի անունը լսելուն պէս Նազարը վայից դուրս է վա-  
զում, ու զում է փախչի՝ ետ գնայ իրենց տունը. իսկ կանգ-  
նածները կարծում են թէ վազում էր, որ գնայ վագրին սպա-  
նի. Նշանածը բռնում է կանգնեցնում, թէ՝ ուր ես վազում  
էտպէս առանց զէնքի, զէնք առ հետդ էնպէս գնա. Զէնք է  
բերում տալիս իրեն, որ գնայ իր փառքի վրայ մի քաջութիւն  
էլ աւելացնի:

Նազարը զէնքն առնում է գուրս զնում. Դնում է անտա-  
ռում մի ծառի բարձրանում, վրէն տապ անում, որ ոչ ինքը  
վագրին պատահի, ոչ վագրը իրեն. Ծառի վրա կուչ է գալի.  
Հոգին դառել է կորեկի հատ. Հակառակի նման անտէր վագրն  
էլ գալիս է հէնց էս ծառի տակին պառկում. Նազարը որ վագ-

րին չի տեսնում՝ լեզին ջուր է կտրում, աշքերը սևանում  
են, ձեռն ու ոտք թուլանում են ու, թրըմֆ, ծառից ընկնում  
է գագանի վրա. Վագրը սարսափած տեղիցը վեր է թոշում,  
Նազարն էլ վախից կպչում է սրա մէջքին. Էսպէս զարհու-  
րած Նազարը մէջքին կպած էս խրտնած վագրը փախչում է,  
ոնց է փախչում, էլ սար ու ձոր, քար ու քոլ չի հարցնում:

Մարդիկ մին էլ տեսնում են, վահ, Քաջ Նազարը վագ-  
րին նստած քշում է:

— Հայ-հարայ, եկէք հա, եկէք, Քաջ Նազարը վագրին ձի  
է շինել հեծել.. տւէք հա, տւէք...».

Սըտաւորւում են, ամենքը մի կողմից հարայ-հրոցով,  
հրհրոցով յարձակում են՝ խանչալով, թրով, քարով, փէտով  
տալիս են սպանում.

Նազարը որ ուշքի է գալի, լեզուն բացւում է. «Ափսու,  
ասում է, — ինչի՞ սպանեցիք, զոռով մի ձի էլ շինել նստել..  
էնքան պէտք է քշէի որ...»:

Լուրը գնում է հասնում է ամրոցը. Մարդ, կին, մեծ,  
պստիկ՝ ժողովուրդը զուրս է թափում Նազարին ընդունելու-  
վաւն երգ են կապում ու երգում.

Էս աշխարհքում,  
մարդկանց շարքում  
ո՞վ կը լինի քեզ հաւասար,  
ո՞վ Քաջ Նազար.

Ինչպէս ուրուր,  
կայծակ ու հուր,  
բարձր բերդից թռար հասար,  
ո՞վ Քաջ Նազար.

Ահեղ վագրին  
արիր քո ձին,  
հեծար անցար գու սարէսար,  
ո՞վ Քաջ Նազար.

Մեզ փըրկեցիր,  
աղատեցիր,  
փառք ու պարծանք քեզ դարէդար,  
ո՞վ Քաջ Նազար:

Ու պօակում են Քաջ Նազարին հսկաների գեղեցիկ քրոջ  
հետ, օխտն օր, օխտը գիշեր հարսնիք են անում:

Բայց դու մի ասիլ էս աղջկանը ուզած է լինում  
հարևան երկրի թագաւորը: Որ իմանում է իրեն չեն տւել՝  
ուրիշի հետ են ամուսնացրել՝ զօրք է կապում, պատերազմով  
գալիս է օխտն ախպօր վրա:

Էս օխտը հսկու գնում են Քաջ Նազարի մօտ, պատերազ-  
մի լուրը յայտնում են, զլուխ են տալի առաջը կանգնում՝  
հրաման են խնդրում:

Պատերազմի դաշտում մի ամենի նժոյգ ձի են բերում  
Նազարին նստեցնում վրէն: Նազարը դողում է վրէն նստած,  
չի իմանում ինչ անի:


Նժոյգը, որ տեսնում է վրէն ինչ անպէտքի մինն է  
նստած՝ խրինջում է, զլուխն առնում ու թոչում առաջ, և  
ուղիղ դէպի թշնամու բանակը: Զօրքերը կարծում են Քաջ  
Նազարը յարձակւեց, ուռա են կանչում ու իրենք էլ ետեց  
յարձակւում ամենայն սաստկութեամբ: Նազարը որ տեսնում  
է չի կարողանում իր ձիու զլուխը պահի, քիչ է մնում վէր  
ընկնի, ձեռը զցում է, ուզում է մի ծառից փաթաթւի: զու  
մի ասիլ ծառը փթած է, մի գերանաչափ ճիւղ պոկ է գալիս  
մնում: ձեռին: Թշնամու զօրքերը, որ առաջուց համբաւը  
լսել էին ու ահը սրտներումն էր, էս էլ որ իրենց աչքով  
տեսնում են՝ էլ փորներումը սիրտ չի մնում: Երես են շուռ  
տալիս, — փախի, որ փախի, թէ մարդ ես գըլուխդ պրծացրու,  
որ Քաջ Նազարը ծառերն արմատահան անելով գալիս է...

Էդ օրը թշնամուց ինչքան կոտորւում է կոտորւում,  
մացածները թուրները գնում են Քաջ Նազարի ոտի տակին,

յայտնում են իրենց հպատակութիւնն ու հնազանդութիւնը:  
Ու պատերազմի ահեղ զաշտից Քաջ Նազարը գնում է  
նրանց երկիրը: Ժողովուրդը յաղթական կամարներ է կա-  
պում, աննկարգելի ովեորութեամբ, ուռաներով և կեցցէ-  
ներով, երգով ու երաժշտութիւններով, աղջիկներով ու ծաղիկ-  
ներով, պատգամաւորութիւններով ու ճառերով առաջն է  
զուրս գալի:

Եսպէս առքով-փառքով էլ բերում հրատարակում են  
իրենց թագաւոր ու բազմեցնում են իրենց թագաւորի թափ-  
տին: Ու Քաջ Նազարը դառնում է թագաւոր:

Քիթ ու պոռնգ—քիթ ու բերան:  
զոնախ (թուրք.)—հիւր:  
գրըմբալ—գղրդալ, աղմուկ հանել:  
հոչակ—մեծ անուն, մեծ համբաւ:  
ապաւէն—յոյս և պաշտպանութիւն:  
ուաշ—սընթաց ձի:  
ահուլի, ահեղ—ահ, սարսափ բերող, ահ աղդող:  
շւաք—ստւեր:  
լիզը—ինը կամ տասներկու գրւանքայ:  
փափագել—սաստիկ ցանկանալ, սրառվ ուզենալ:  
տապ անել—թագ կենալ:  
խանչալ (թուրք.)—դաշոյն:  
քոլ—անտառոտ տեղ:  
հրատարակել—յայտարարել, յայտնել այնպէս, որ բոլորն իմանան:  
բազմել—նստել: Իսկ բազմեցնել:  
1. Հարսանքատուն, հարսանքաւոր—որ բառերից են կազմւած:  
2. Ի՞նչ սրտի տէր ես—ի՞նչ ասել է: Ապա սիրտ առան,  
սրտաւորւել:  
3. Քանի գլխանի—քանի զլուխ ունեցող: Իսկ քանի ոտնանի,  
քանի յարկանի:  
4. Ի՞նչ ասել է լեղին ջուր է կտրում, զոռով մի ձի էլ շինել:



## 29. Առիւծի երազը

1.

Առիւծի կորիւնը փակւած էր վանդակում։ Նա մոայլ նայում էր երկաթէ ամուր ձողերի ետևից։ Կարօտով յիշում էր իր հայրենի տաք անապատը, յիշում էր, թէ ինչպէս գիշերները աստղերի լուսով իր մօր հետ ընկնում էր արագավազ եղնիկների ետևից, ինչպէս ազատ, ուրախ, իր բոյր ու եղբայրների հետ, մօր կողքին, խաղում էր որմաւենիների տակ։

Այժմ անցել է ամեն բան, և գազանանոցում փակւած գերի, տխուր նայում էր նա հաւտ ձողերի ետևից։

Գիշեր էր Շուրջը լուս ու խաղազ։ Գազանանոցի գերիները, - վագրը, արջը, գայլը, կապիկները, ջայլամը եղջերուները, - ամենքը իրենց վանդակներում՝ յարդի վրա ընկած՝ սպառում էին լուսանալուն։

Վերջապէս յոգնած առիւծի ձագն էլ գլուխը դրաւ թաթերի վրա ու քնեց։

2.

Գիշերւայ մի ժամանակ յանկարծ գազանանոցի գուռը ետքացւեց ու ներս մտաւ նրա մայրը։ Ներս մտաւ հպարտ ու հզօր, կրակու աչքերը ման ածեց վանդակների վրա ու տեսաւ...

Նա տեսաւ իր զաւակին։ Աչքերը փայլատակեցին, մոընչաց, յարձակւեց, իր զօրեղ զարկով ջարդեց վանդակի ձողերը...

Կորիւնը ուրախութիւնից ճշաց, վրա թռաւ, որ ընկնի մօր գիրկը, դիպաւ երկաթի ձողերին ու զարթնեց...

Տեսաւ՝ երազի մէջ էր...

Գիշեր էր Շուրջը լուս ու խաղազ։ Գազանանոցի գերիները, - վագրը, արջը, գայլը, կապիկները, ջայլամը, եղջերուները, - ամենքը իրենց վանդակներում՝ յարդի վրա ընկած՝ սպառում էին լուսանալուն։

Կորիւնը երկար ու ձիգ մանչում էր գիշերւայ լուսթեան մէջ։

Պատմի թարջի երազը նոյն գազանանոցում։

Գրի կորիւնի տեսած երազը եւ շարունակիր՝ իրեւթէ վանդակից ազատել է եւ մօր հետ հասել է հայրենի տաք անապատը եւ ինչ է անում այստեղ։

Ճաղ - երկար ու բարակ փայտ կամ երկաթ։

Կորիւն - առիւծի կամ վագրի ձագ։

Փայլատակել - փայլակ արձակել։

## 30. Երազ

Լուսնակի մի շող  
թաքուն, գողէգող,  
գիշերւայ կէսին,  
մտել է սենեակ  
և ընկել շիտակ  
մանկան երեսին։

Շողը համբուրում,  
դէմքին է փարում,  
շողշողում քնքուշ.  
մանուկն էլ քնում  
երազ է տեսնում  
ու ժպտում անուշ։

Ժիտակ - ուղիղ։

Փարել - փաթաթւել։



### 31. Կապիկը

1

Բակից դայիրի ձայն լսւեց:

Աշոտը իսկոյն ճանանչեց այդ ձայնը:

— Կապիկ, մայրիկ ջան, կապիկ են բերել, — կանչեց նա  
ու վազեց պատշգամբ:

Տան բոլոր երեխաները դուրս էին թափւել. Դարպասի  
մօտ արագւել էին փողոցից տղայ ու աղջիկ, մշակներ, ծա-  
ռաներ. Բակի մէջտեղը մի թուրք դայիրա էր դըմդըմբաց-  
նում, իսկ միւսը պար էր ածում մի կապիկ ու երգում՝ քաշ-  
քըշելով շղթայից.

Կապիկ, ցոյց տուր՝ մեր աշխարհում՝

աղջիկները հնց են պարում:

Դայիրա խփողը փախէփոխ կրկնում էր ընկերոջ խօսքերը:  
Երեխաները հրոհում էին. բակի շունը հաշում էր:

Կապիկը շորսթաթ վեր-վեր էր թշում, իբրև թէ պա-  
րում է. նրա մարդանման դէմքը ամեն բոլէ անհանգիստ

գառնում էր մէկ տիրոջ աչքերին, մէկ հաշող շան կողմը:  
Կապիկ, ցոյց տուր՝ մեր քաղաքում  
աղէն գոռծից հնց է դառնում:

Կապիկը փայտին էր յենուում, մի ձեռքը զնում մէջքին  
ու պոչը գետնին թրեելով՝ առաջ էր գալիս:

Կապիկ, ցոյց տուր՝ մեր սարերում  
հովիւն հօտը հնց է պահում:

Կապիկը վզին էր դնում փայտը, զիսի ետևից երկու թե-  
ւերով գրկում էր ծայրերը և պտտում տիրոջ շուրջը:

2.

Երեխաները ուրախութիւնից աղաղակում էին, իսկ շունը  
աւելի ու աւելի կատաղի էր հաշում:

Ամեն հաշոցին կապիկը ցնցւում էր և յաճախ սխալում:  
Այն ժամանակ տէրը փայտը իջեցնում նրա զիսին ու վզի  
շղթան այնպէս ամուր էր թափ տալիս, որ կենդանին վա-  
խեցած ատամները կրծտացնում էր, մի անորոշ ձայն էր  
հանում և իսկոյն սխալը ուղղում:

Կապիկ, ցոյց տուր՝ վերի թաղում  
մեր բրուտը հնց է կաղում:

Կապիկը ետևի թաթերով բռնում էր փայտից և առջիկ  
թաթերի վրա ման գա իս՝ պոչը ցից արա ծ:

Կապիկ, ցոյց տուր՝ փոշիներում  
հարբածները հնց են փուլում:

Կապիկը փուեց մէջքի վրա ու ոտքի կանգնեց, զլորւեց  
ու նորից կանգնեց... Այն միջացին շունը ամբողջ ուժով ձիգ  
տւաւ իր շղթան ու, շը կարողանալով կտրել, ծառս ելաւ ետևի  
ուսների վրա ու խրպոտ ձայնով, խեղդւելով, գազազած հա-  
շում էր:

Կապիկը սարսափահար դէնը թռաւ, երկու ձեռքով աշ-  
խատեց աղատւել վզնոցից, աւելի վախեցաւ շուրջը բարձրա-  
ցած աղաղակից, յանկարծ մի վայրենի ճիշ արձակից,  
մագլցեց իր տիրոջ շորերով ու կպաւ նրա կրծքին:

Կպաւ ու չուծ աշքերը սոսկումով չէր հեռացնում գաղապած շնից:

Ամեն կողմից թափւեցին շաքար, կանֆետ, տխիլ, խնձոր, սև փող, բայց կապիկը պոկ չէր գալիս տիրոջ կրծքից, նոյնիսկ այն ժամանակ, երբ տէրը կուանում հաւաքում էր այդ ամենը.

3.

Ամբողջ օրը Աշոտը չէր մոռանում կապիկի սարսափահար հայեացքը: Եւ երբ պառկեց անկողին, նորից երկար մտածում էր: Յանկարծ նրան այնպէս թւաց, թէ մի բան իր կոկորդը խեղդում է: Ճեռքը տարաւ դէպի պարանոցը ու տեսաւ վզնոց է: Վզնոցը ամուր հուպ էր տալիս, և ամեն բոպէ մէկը շըղթայից ամուր քաշում էր: Աշոտը աշքը բարձրացրեց ու տեսաւ, որ իր վզի շղթայի ծայրից բռնել էր մի մեծ կապիկ, իսկ կողքին մի ուրիշ կապիկ դայրա էր ածում և երգում.

Ցոյց տուր, Աշոտ, մեր աշխարհում  
աղջիկները ննց են պարում:

Եւ Աշոտը պարզ լսում էր պատշգամքներին, դարպասի մօտը, շուրջը կանգնած մեծ ու փոքր կապիկների հոհոցն ու ծիծաղը, շան սարսափելի հաշոցը. . Իսկ գլխին պտտւում էր պար ածող կապիկի վայտը:

Աշոտ, ցոյց տուր՝ փողիներում  
հարբածները ննց են փուռում:

Աշոտը գլորւում է ու կանգնում, նորից է գլորւում..

Յանկարծ շունը կատաղած պոկ է գալիս, կտրում է շըղթան ու յարձակւում Աշոտի վրա: Եւ Աշոտը զգում է, թէ ինչպէս շան սուր ատամները ցցւում են իր ոտի. մէջ ցաւից սարսափա ալ ճշում է ու վեր թոշում...

—Մայրիկ, մայրիկ...

Անկողնի մօտ կանգնած էր մայրիկը՝ մոժը ճեռքին ու անհանգիստ նայում էր նրան:

Պատմի՞ր այս կապիկ կեանքը ինչո՞վ է նման զազանանոցում ապրող կապիկ կեանքին եւ ինչո՞վ է տարբեր եւ ոք կեանքն է աւելի լաւ

68

յենւել — կըթնել:

Թրեել — ետենից քաշ տալ:

ցնցւել — յանկարծ վեր թոչել, սովորաբար վախից, դողդողաւ ատամները կրծտացնել — ատամները իրար քոելով ձայն հոնել: ծառս լինել — ետենի սաքերի վրա կանգնել:

կանֆետ — շաքարեղէն:

հայեացք — նայւածք: Հայել — նայել: Ի՞նչ է հայելի: պարանոց — վիզ:

Հոհուալ, ծիծաղել, ըրբջալ, խնդալ, ծիծաղու թուլանալ, ժպտալ — սրանցից մըն է աւելի թոյլ և մըր տւելի ուժեղը: Դասուարիր:

## 32. Կոռուկն ու սագը

Կապուտակ լճի ջրի երեսին  
ճարպիկ ու արագ սագիկն էր լողում,  
սուզւում ջրի տակ, գուլս գալիս կրկին  
ու ինքըն իրան բարձրածայն գովում.

—Օգում թոշում եմ, ցամաքում շրջում,  
լճակի ջուրը պատում նետի պէս.

Ինձ պէս ուրիշը չը կայ աշխարհում,  
ողջ թոշունների թագաւորն եմ ես:

—Ի գուր ես գովում, յիմար, ինքդ քեզ,  
կուռնկը նրան ձայնեց վերեկից.

Կարող ես արդեօք լողալ ձկան պէս,  
եղնիկի նման վազել քարափից.

արծըւի նման հպարտ, փառաւոր  
կարող ես պատոել ծալքերն ամպերի ..

Լաւ է զիտենալ մի բան հիմնաւոր,  
բան թէ շատ բաներ՝ բոլորն էլ թերի:

Թերի—կիսատ:

1. Հանիր բարդ բառերը և գտիր արժաաները:

2. Թագաւոր—մըն է արմատը և մըը մասնիկը: Հանիր այս ստանաւորից նոյն մաս մնիկը ունեցող բառեր: Աւելացրու և քեզնից ուրիշ նման բառեր:

3. Նետի պէս, ձկան պէս, եղնչկի պէս, արծւի պէս—ու բէշ կերպ ինչպէս կասես. պէս դրում է է-ով:



### 33. Բորբ

ա.

Բորը այն շների ազնիւ ցեղիցն էր, որոնց հայրենիքը Նիւֆառնդենդ կղզին է: Այդ շների գլուխը լայն է, պոչը թաւ, մազերը երկար. մատների արանքները պատած են թաղանթով, այդ պատճառով էլ հրաշալի լող են տալիս:

Բորը շատ էր ուրախանում, երբ իր տէրը, մի երիտասարդ նաւաստի, առաջարկում էր նրան՝ գնան միասին լող տալու: Այն ժամանակ նա թաւալում էր ջրի մէջ, ափից հեռանում էր, կրկն վերս դառնում, սուզում էր, անցնում

տիրոջ տակով և հազար ու մի կատակներ էր անում: Բորը շատ էր սիրում իր տիրոջը, որ մի շիտակ ու բարի մարդ էր: Քանի քանի նաւահանգիստներ այցելած էին, նրանք ովկիանոսի այս և այն կողմերում:

Մի գիշեր, երբ նաւը մօտենում էր Անգլիայի ափերին, սարսափելի փոթորիկ բարձրացաւ և նաւը խորտակեց: Բոլոր ճամբորդները և ծառայողները խեղզւեցին: Բորը իսկոյն և եթ ջուրն ընկաւ, հրաւիրելով տիրոջն էլ հետևելու իր օրինակին: Նրանք լոզում էին դէպի ափը, որ հազիւ էր նշմարւում: Այսպէս մօտ երեք վերստ լող տալով մարդն ու շունը հասան մի քանի ժայռերի, որոնք դուրս էին ցցւած ջրի միջից և ուժասպառ ընկան: Բայց բարերը չէին կարող հաստատ ապաստան ծրապայել:

Նաւաստին ձայն էր տալիս, կանչում, բայց ոչ ոք չէր պատասխանում նրա կանչին: Բորը պառկել էր և փաղաքշանով նայում էր տիրոջը:

Տէրը գրպանից հանեց մի բանալի, զրեց շան բերանը և ցոյց տալով ափը՝ ասաւ: «Լող տուր»: Բորը նետւեց ջուրը, հասաւ ափը և հաշելով սկսեց օգնութեան կանչել: Բայց ալիքները նրա ձայնը խլացնում էին: Այն ժամանակ Բորը աւելի առաջ վազեց և իր ոռնոցով զարթեցրեց մատիկ ագարակում ապրող մարդկանց: Նրանցից մի քանիսը դուրս թռան: Բորը մօտեցաւ, լիզեց նրանց ձեռքերը, ողբարի ձայնով ոռնաց, իսկոյն վեր կացաւ զետնից և արագ վազեց դէպի ծովափը:

Մարդիկ հետևեցին նրան, վերցնելով հետները մի երկար պարան: Ծովափին Բորը կանգնեց ու բարձր ոռնաց, կարծես ուզու: Էր յայտնել իր խեղզւող տիրոջը, թէ գալիս են օպնելու:

Մինչդեռ մարդիկ դատում էին, թէ ինչպէս օգնեն խեղզւողին, Բորը բռնեց պարանի ծայրից և նետւեց ծովը: Բոլորը ապշեցին շան հնարագիտութեան վրա և սկսեցին բաց թողնել

պարանը, պահելով միւս ծայրը իրենց ձեռքում, մինչև որ  
շունը հասաւ ժայռերին,

Ուրախացած նաւաստին բռնեց պարանը, կապեց իր մէջ-  
քին և իմաց տւաւ գիւղացիներին, որ քաշեն. Նա հազիւ էր  
կարողանում լող տալ թուղացած ձեռքերով: Բորբ նրա կողքից  
չէր հեռանում և իր հաչոցով սիրտ էր տալիս ընկերոջը:  
Այսպէս քառորդ ժամ ալիքների դէմ կուելուց յետոյ տէրն  
ու շունը վերջապէս հասան ափը: Շունը ուժաթափու անզգայ  
ընկաւ գետին. Նրանց երկուսին էլ տեղափոխեցին ագարակը,  
այնտեղից էլ Լոնդոնի հիւտնդանոցը: Բայց տէրը երկար  
շապրեց ու մեռաւ:

Պ.

Երբ Բորբ հասկացաւ, որ որբացել է ու իր տէրը էլ չը  
կայ, աղիողորմ ոռնաց և գուրս եկաւ հիւտնդանոցի բակից.  
Ինքն էլ չը գիտէր ուր գնայ...

Երկու օր և երկու գիշեր Բորբ թափառում էր մեծ  
քաղաքի փողոցներում և ոչինչ չէր կերել. սոված պարկում  
էր, սոված վեր կենում:

Միայն երրորդ օրը էլ չը գիմացաւ, այնքան թուղացել  
էր, որ հազիւ էր կարողանում տեղից վեր կենայ:

Նրան գտան փողոցում անզգայ և ուղարկեցին «Շների  
ապաստարանը»:

Ապաստարանից նրան վերցրեց մի քաղաքապահ, որը  
գիշերւայ մենակութեան մէջ ընկեր էր ուզում ունենալ, երբ  
իր հերթին գնում էր փողոցները հսկելու: Մի գիշեր խաւարի  
միջից լսեց օգնութեան կանչ: Բորբ մի ակնթարթում տեղից  
վեր ցատկեց ու առաջ սլացաւ: Քաղաքապահը մօտ վագելով  
տեսաւ, որ Բորբ իր սուր ատամներով բռնել է մի մարդու  
ոտից:

Բանից երեաց, որ մի չարագործ յարձակւել էր անցորդի  
վրա և կամեցել էր նրան կողոպտի, երբ շունը վրա էր հասել:

72

Քաղաքապահը ազատեց չարագործին Բորբի ատամներից  
ու քաշ տւաւ թաղի ոստիկանատունը: Յաջորդ օրը լրագիր-  
ների մէջ տպագրւեց խելացի շան քաջ վարմունքը:

Ոստիկանապետի կարգագրութեամբ Բորբին ընդունեցին  
ոստիկանական շների շարքը: Բորբ սրտով կպաւ իր նոր  
ծառայութեանը:

Մի քանի օրից յետոյ Բորբ ջրից հանեց մի երեխայ, որ  
ընկել էր գետը: Յետոյ ազատեց մի կին, որ կարիքից ուզե-  
ցել էր գետում խեղղւի: Բորբ սկսեց երևալ հրդեհների  
ժամանակ և այնտեղ էլ ցոյց էր տալիս իր քաջութիւնը,  
փրկելով բոցերի միջից փոքրիկ երեխաներին, գուրս քաշելով  
ախոռներից ձիերին...

Եթէ ցանկանայինք թւել Բորբի անձնազոհութեան բոլոր  
գործերը, զեռ շատ բան պիտի պատմէինք. Նրա անունը  
հաշակւեց: Մի յայտնի նկարիչ նկարեց նրա պատկերը, որը  
տպւեց թերթերում: Բորբին ներկայացրին թագուհուն: Առաջ-  
նակարգ ընտանիքներ պատիւ էին համարում Բորբին իրենց  
տանն ընդունելը: Նրան ընտրեցին «Մարգարիտական ընկերու-  
թեան» անդամ: Բորբ պարգև ստացաւ մի արծաթէ մեղալ՝  
մարգիկ փրկելու համար, յետոյ էլ պատւաւոր ոսկէ մեղալ:

Շունը սակայն շատ բան չէր հասկանում այդ պատւա-  
նշաններից, բայց ամեն օր կատարում էր նոր և նոր հերոսու-  
թիւններ: Նա առաջինն էր երևում այնտեղ, որտեղ վտանգ  
էր լինում: Ոստիկանական բոլոր ծառայողները ճանաչում,  
սիրում և յարգում էին այդ վեանձն կենդանուն: Ամեն տեղ  
ծախում էին հովհարներ Բորբի պատկերով: Նոյն իսկ քաղցրա-  
ւենիների տուփերի վրա տպում էին այդ ազնիւ շան գլուխը:

Դրի՞ս թէ ինչպէս Բորբ ժայռնի վրայից փրկեց իր խեղդողը:  
Պատմի՞ս քեզ ծանօթ մի շան խելօք աբարքներից մէկը:

Թաւ—խիտ մազեր ունեցող:

Թաղանթ—մատների արանքում եղած բարակ կաշին, օրինակ՝  
բաղերի, գորտերի ոտներին:

73

Թաւալւել—գլորւել:  
 ովկիանոս—շատ մեծ ծով:  
 խորտակել—ջարդել, փշրել:  
 նշմարել—նկատել, հազիւ տեսնել:  
 փաղաքշել—գուբգուրել, փայփայել:  
 ողբ—լաց ու կոծ. Ողբալի—սաստիկ տխուր:  
 անզգայ—ուշը կորցրած, առանց զգացողութեան:  
 աղիողորմ—մղկացող:  
 ակնթարթ—այնքան քիչ ժամանակ, ինչքան որ պէտք է այլը  
 թարթելու համար:  
 հրդեհ—կրակ ընկած տուն, անտառ, արտ:  
 հոչակ—մեծ անուն: Հոչակւել—մեծ անուն հանել:  
 պարզե—նւէր:  
 աձնազոհ—ինքն իրան մէկ ուրիշն նւիրող, իրան մոռացող ու-  
 րիշի համար:  
 վեհանձն—ազնիւ ու բարձր հոգի ունեցող:  
 մեղալ—պատւանշան, շքանշան:  
 հովհարով երեսին հով են տալիս:  
 բաղցրաւենի—անուշեղէն, շաքարեղէն:

1. Ի՞նչ տարբերութիւն կայ նաւապետի, նաւավարի և նա-  
ւաստու մէջ: Նաւահանգիստն ինչ է:
2. Ի՞նչ ասել է ուժամպառ, ուշաթափ. իսկ ի՞նչ ասել է ու-  
ժեղ:
3. Ի՞նչ ասել է ազնիւ ցեղ, ապաստան ծառայել:
4. Գտիր ծովափ, հնարագէտ, տեղափախել, բաղաքապահ,  
շարագործ, առաջնակարգ, պատւանշան բառերի արմատները և  
բառերը բացարիքը:
5. Կողոպտել և գողանալ—ի՞նչ տարբերութիւն ունի:
6. Աստիկան, ոստիկանապետ, ոստիկանատուն, քաղաքա-  
պահ, բաղաքագէտ, քաղաքատուն—ի՞նչ են նշանակում:
7. Ինչով է զբաղւում «մարդասիրական ընկերութիւնը»:

## 34. Դեղձանիկն ու տատրակը

Դեղձանիկը մի թակարդում  
 զարնըւում էր ու թըպըրտում:  
 Մի տատրակիկ՝  
 պուճուր ձագիկ՝  
 ծիծաղում էր նրա վրա.  
 «Բա ամօթ չէ,  
 ասում էր նա,  
 օր-ցերեկով,  
 բաց-բաց աչքով  
 ընկար էտպէս  
 գըցեց ցանցը:  
 Տեղն էր, տեղը էն տատրակին.  
 Ինչով ծաղրեց գեղձանիկին.

տատրակ—աղաւնու փոքր տեսակը:  
 սնապանծ—դատարկ-դատարկ պարծեցողը:  
 իմ արևը—ինչ ասել է:

## 35. Աշկարտ Օհանը

1.

Ծնունդի թաթախման իրիկունն էր. Օհանը, տասը տա-  
 րեկան մի տղայ, որին երեք ամիս է ինչ աշկերտ էին  
 տւել գերձակ Զաքարի մօտ, մենակ էր մնացել տանը. Դեր-  
 ձակն ու իր կինը, ինչպէս և բոլոր տանեցիք, ժամ էին զնա-  
 ցել, նրան էին յանձնել տունը պահելու: Օհանը չոքել էր յա-  
 տակին, մի կտոր թուղթ գրել էր նստարանի վրա ու նամակ  
 էր գրում.

«Իմ կարօտալի Գասպար պապի, էս գիրը ես եմ քեզ գր-  
 րում, քո թոռ Օհանը: Ենորհաւոր Ծնունդ և Մկրտութիւն,  
 Աստած քեզ շատ տարիներ պահի ինձ համար: Ոչ հէր ու-  
 նեմ, ոչ էլ մէր, գու ես մենակ ինձ մնացել»:

Օհանը աշքը դարձրեց պատուհանին, որի ապակու մէջ արտացոլում էր կեղտոտ լամպի լոյսը, և նրան այնպէս թւաց, թէ տեսնում է այնտեղ Գասպար պապին։ Նիհար, կարճիկ ծերունին ահա կանգնած է եկեղեցում, դռան մօտ, գզզված փափախը զրած գետնին, ոտների մօտ. սուրբերի պատկերի առջև վառւող մոմերը լուսաւորում են նրա նիհար, զեղնած, բարի դէմքը. շրթունքները անխօս աղօթք են մրմնջում։

Երեխ հիմա ինձ համար է աղօթք անում, — մտածեց աղան ու շարունակեց գրել.

«Երէկ ինձ լաւ զնգսեցին։ վարպետս քաշէքաշ թրե տւաւ ինձ դուրս և զնքսեց, որ երեխին օրօրելիս քունս տարել էր։ Անցած կիրակի էլ կնիկը տւել էր մի չորացած ձուկ, որ իստակեմ, պոչիցն էի սկսել իստակելը. ձեռքիցս ձուկը խլեց ու էնքան տւաւ, որ քիթ ու պուռնզս արնոտեց։ Աշկերտներն էլ վրաս ծիծաղում են, պապիրոսի են զրկում, խանութից արադ են բերել տալիս, մազերիցս քաշըշում են, իսկ վարպետս ամեն որ հազար անգամ հայրոյում է։ Առաւոտը մի կտոր չոր հաց, կէսօրին մի աման ապուր, իրիկնապտհին էլի մի կտոր չոր հաց, իսկ իրենք առաւոտ իրիկուն ուտում տրաքւում են։ Պապի ջան, Աստծու սիրուն, առ ինձ էստեղից, տար գեղը, էլ չեմ գիմանայ. Զեռքդեմ պաշում, աղաչում, տար ինձ էստեղից. Ես գեղի ոչխարը կարածացնեմ, բո տեղակ ջաղացում ծառայութիւն կանեմ»։

Օհանի բերանը ծուեց. մրոտած բոռւցքով աշքերի արտասուր սրբեց, յետոյ նորից շարունակեց.

«Թիֆլիսը մեծ քաղաք է։ Էստեղ ոչ ոչխար կայ, ոչ էծ. ոչ կով, ոչ գոմէշ».

«Ուժ, չիմի ով գիտէ ինչ ձիւն է մեր կտուրներին, կայերում, գաշտերում... էզուց տէրտէրը կը գայ տնօրննէք. երանի կը հարցնի Օհանի մասին, երանի կը յիշի ինչպէս էր ինձ դաս տալիս և գրել կարդալ սովորեցնում»։

Օհանը ծնօտը դրա ափին ու քիչ մտածեց. մտաբերեց իր հանգուցեալ մօրը. և յետոյ յանկարծ գրիչը վերցրեց ու շարունակեց.

«Արի, պապի ջան, թէ Աստւած կը սիրես, ինձ էստեղ մի թող, մեղը եմ։ Սիրոս փակւելէ, աշխարհը աշքիս չի երեռւմ, ողջ օրը մի գլուխ լաց եմ ինում։ Պապի ջան, կորած եմ... կարօտով բարեներս յիշի Հոռոմսի մօրիրին, շղիկ Պետօին, պաչ արա մեր Ասլան շան գունչը. իսկ իմ մեծ շւին ոչ ոքի չը տաս։ Մնամ՝ Գասպարենց Օհան։ Պապի ջան, շուտով արի».


2.

Օհանը չորս տակ ծայեց թուղթը ու դրաւ ծրարի մէջ, որ նախորդ օրը տոել էր... Մի քիչ մտածելուց յետոյ գրիչը թաթախեց և խոշոր տառերով գրեց հասցէն.

«Մեր գեղը Գասպար պապիս»

Յետոյ գլուխը բորեց, մի քիչ մտածեց ու ժպտաց. Նա շատ գոհ էր, որ ոչ ոք իրան չը խանգարեց գրելիս, գիխարկը ծածկեց ու շապկանց գուրս վազեց փողոց։

Նրան ասել էին, թէ նամակները պէտք է փոստարկը գցել. այնտեղից յատուկ մարզիկ հանում են, աշխարհի ամեն կողմը տանում կառքերով ու երկաթուղիներով։ Օհանը վազէվազ մօտեցաւ տուաշին փոստարկին ու ձգեց թանկագին նամակը նրա ճեղքի մէջ... Քաղցր յոյսերով օրօրւած, մի երկու ժամ յետոյ ամուր քնած էր...»



Երագում տեսնում էր իր պապին. Պապը նստած է բուրսու տակին ու լսում, իսկ գիւղի տիրացուն կարզում է նամակը. Ասլանն էլ շուրջը պտտւում է ու պոչը շարժում...»

Օհանի երազը պիտի կատարի՞։  
Ի՞նչ տեսակ մարդիկ էին դերձակ Զաքարյանք։  
Ո՞րն էր Օհանի գլխաւոր դժբախտութիւնը։

Գոթի օքնչական էին, վարում Օհանի հետ դերձակ Զաքարյանք, Նրա կինը եւ աշակերտները։

Պատմի օքնչակում ի՞նչ չը կայ, որ գիտում կայ։

Թաթախման իրիկուն — Ծնունդի և Զատեկի նախորդ երեկոները, երբ պասը բաց ենք անում, թաթախուում ենք։

Ոյսր արտացոլել — լոյսը հայելու, ջրի կամ մի ուրիշ փայտն բանի մէջ երեւմ է։

Մըմնջալ — շատ կամաց ասել։

Հանգուցեալ — մեռած։

Մի զլուխ — շարունակ։

Քուրսի — տաքացրած թոնրի կամ մանղալի վրա զբւած սեղանածե ծածկ՝ վրան կապերա կամ վերմակ փուած, որի տակ քնում են կամ իրենց ոսները զնում չոքս կողմից նստողները։

արագ (թուրք.) — օղի։

1. Կարճ-կարճլիկ, հաստ-հաստլիկ, կաղ-կաղլիկ, սուտ-սուտլիկ — ի՞նչ տարբերութիւն կայ։

2. Հայերէն ինչպէս են ասում պապիրոս։

3. Տնօրինէք, մտաբերել, փոստարկ — գտիք արմատները և բառերը բացատրիք։

4. Ի՞նչ ասել է մի զլուխ լաց լինել։

5. Էսօրւայ առաջի օրին ասում են նախորդ օր, իսկ հետեւալ օրին ինչ ենք ասում։

## 36. Գարուն, ամառ

Գարուն, ամառ. — լոյս ու տաք,  
դեղին արտեր, արձակ հանդ։  
Աշուն, ձմեռ. — բուրսու տակ,  
փակ դարպասներ, տիտուր բանտ։

## 37. Զնագնդիք

ա.

Բաղալն ու ես վազուց թշնամի էինք. Դեռ անցեալ գարնան էր, որ նա իմ կոճիները չուռ արաւ ու փախաւ. Էն օրւանից մենք թշնամիներ էինք և միշտ առիթ էինք փնտում իրարից վրէժ հանելու. Երկուսս էլ սպասում էինք, թէ երբ կը լինի, որ մի օր իրար պատահենք. Եւ մի անգամ շիրար պատահեցինք», ու շատ զոռ պատահեցինք».

Սպիտակ ամպը բռնել էր երկինքն ու երկիրը. սարերը մօտեցել էին և ուզում էին գրկախառնւել. Լեռնային ձիւնի թաւ փաթիւները արագ-արագ փրթում էին. բուք ու քամի չը կար, և ձիւնը հանգարտ գիզլում էր ու դիզլում։

Հացից յետոյ ուրախ-ուրախ տրեխներիս մէջ խոտ դրի, արխալուզիս կոճակները պնդացրի, գառան մորթէ զգակը գլուխ պնդացրի, ոչխարի մորթուց իմ ձեռքով կարած թաթմաններս անցկացրի ու դուրս թռայ։

— Պա, պա, պա, երեխէք, ինչ ձիւն է... — կանչեց էն կողմից կոստին։

— Աչք ու ականջ պիտի լցնեմ հա, — ձայն տւաւ Ալէքը, ձիւնագնդեր պատրաստելով։

— Ո՛չ, տղերք, շատ քիշ ենք, խաղը համ չի ունենայ։

Ու Տասը բոպէից յետոյ մենք արգէն՝ մօտ քսան հոգի՝ հալա-հալա էինք եկել և կոստինի ու Ալէքի մայրութեամբ կանգնած էինք իրար դէմ՝ իբրև երկու թշնամի բանակներ։

— Դէ, երեխէք, վրա տւէք, — հրամայեց մեր հրամանատար Ալէքը.

Բ.

Զիւնի գնդակները կարկատի նման թափւում էին երկու կողմից. մի քանի բոպէ ոչ ոք չէր կարողանում յաղթի. յետոյ սկսեցին քիշ-ըիշ միմեանց մօտենալ. Հետզհետէ մեր գընդակները կորցրին իրենց ձեր. մենք ուղղակի ձիւնի ահագին

կտորներ էինք թափում իրար վրա. Նրանց կողմից Բաղալը  
մի գնդակով աչքիս խփեց. ևս էլ չը համբերեցի, հասայ. բըռ  
նեցի նրան և ձիւնի մէջ գլորեցի:

Մեռելթաղուկն սկսւեց, —գոչեց Կոստին, և ամեն մէկս  
մէկին բռնած գլորւում էինք ձիւնի մէջ. Երես, քիթ, պոռւնգ,  
գլուխ, ամեն ինչ սպիտակ էր, միան ձիւնն էր, որ երկում էր:

Ես ու Բաղալը ոչ թէ խտղում, այլ կռւում էինք. ձիւնի  
մէջ թաղւած գլորում էինք իրար, այլ և կրծոտում միմեանց.



բոլորը թափւել էին մեզ վրա միմեանցից ազատելու. չէինք  
պոկւում, կպել էինք և ձիւն էինք ճիտում միմեանց քիթ  
ու բերան: Վերջապէս հեռացրին իրարից. Բաղալի քթից արիւն  
էր զնում և ներկում սպիտակ ձիւնը: Ես էլ ոչինչ չէի զգում.  
ոչ միայն ձեռներս ու ոտներս, այլ և ամբողջ մարմինս  
թմբել էր:

—Կոստի, Բաղալն ու Սիմակը կռւած են, որի նրանց  
հաշտեցնենք, —ասաւ Ալէքը:

—Հաշտեցնենք, հաշտեցնենք, —կանչեցին ամեն կողմից:

Ես ոտն առայ, սկսեցի փախչել դէպի մեր տունը. Բաղալն  
էլ ուզեց ծլկւի իրենց տունը. Մեր ետեկց հասան, բռնեցին:  
—Զեմ ուզում, չեմ ուզում, չեմ հաշտւի:

—Բա մայրերն ինչացո՞ւ են, թէ որ նրանց հրամանին լսե-  
լու չես.

Զօռով քաշեցին ինձ առաջ. միւս կողմից էլ ձիւնի մէջ  
թրեելով՝ բերում էին Բաղալին:

—Խռովելը լաւ բան չի. խռովկաններին՝ տեսնում էք՝ տա-  
նը հաց չեն տալիս, —խրատում էին Ալէքն ու Կոստին, որոնք  
ամենից հասակաւորներն էին մեր խաղընկերների մէջ: —Համ-  
բուրւեցէք:

—Զեմ ուզում: Սիմակը ինչո՞ւ մեր արտը արածացրեց, —  
ասում էր Բաղալը:

—Ապա դու չէիր, որ իմ կոճին չուռ արիր:

—Կոճու ժամանակը չէ, կոճու ժամանակը չէ, —աղաղա-  
կեցին ամեն կողմից. —կոճի չենք ուզում. հիմա ձնազնդի ենք  
խաղում: Հաշտւեցէք, հաշտւերէք, թէ չէ էս է ձնազնդին գա-  
լիս է, —հանաք էին անում մեր ընկերները և ինձ ու Բաղա-  
լին իրար կողմի հրում, իրար սեղմում: Այնպիսի աղմուկ  
աղաղակ բարձրացաւ, որ շնկւեցի. Էլ չիմացայ, թէ ինչպէս  
Բաղալի ձեռքն առած համբուրւեցինք:

—Հուռա, հաշտւեցին, տղերք, հաշտւեցին, —ծափ տվին  
բոլորն ու առաջւանից աւելի եռանդով ձիւնին կպան:

գ.

Արդէն մթնում էր. ցըտից սառել կապտել էինք, երբ վա-  
զեցինք ամեն մէկս մեր տաւարը ջուր տալու:

—Իմ գլխին էս ինչ բերին Կոստին ու Ալէքը, է, —ասում  
էի կատաղած ինքս ինձ՝ կովին ջուր տալիս: —Էգուցե՛ն նրանց  
հախիցը էնպէս գամ նր...

Այնուամենայնիւ, երբ առաւօտեան դուրս վազեցի ու  
տեսայ, որ ձիւնը երէկւանից շատ է եկել, գետինը փափուկ  
փափուկ ծածկել՝

—Հայ, հայ, —ձայն տւի ուրախ-ուրախ:

—ՀԵյ, հԵյ, —լուեց այն կողմից Բաղալի ձայնը: —Բարի  
լոյս, Սիմակ: Էսօր ձնագնդի պիտի խաղանք:

—Բաս, —կանչեցի ես: Եւ գեռ ոնց...

Այդ օրը այնպէս չաղացրինք ձնագնդին, որ իրիկունք  
միայն տուն վերադառնալիս յիշեցի, թէ ուզում էի Սլէքից և  
Կոստինից վրէժ առնէի: Համա թէ պրծան իմ ձեռքից, հա..

Դո՞ք ինչպէս տղաները ձնագնդի էին խաղում:

Պատմիր քո կեանքից ուստ հետ ես խոռվել, ինչու եւ ինչպէս ես  
հաշտւել:

Կոճի—վէգ:

Հուռ անել—կոճիները յանկարծ վերցնել ու փաթչել:

Առիթ—մահանա (թուրք.):

Փրթալ—ձինի հանգիստ տեղալը.

Հալա-հալա գալ—կարգ-կարգ բաժանւել:

Քլոլել—գզել, բաժանել, գզզել:

Թմրել—տնզգայ դառնալ, փէտանալ:

Հախիցը գալ—յաղթահարել, մի բանի համար վրէժը հանել:

1. Ի՞նչ ասել է զօռ պատահեցինք, զլիիս էս Բնչ բերին,  
ձնագնդին չաղացրինք:

2. Գրկախառնւել, հրամանատար, մեռելթաղուկ—գտեր  
արմատները և բառերը բացառիր:

3. Հախիցը գալ (թուրք.)—ինչպէս կասես հայերէն:

## 38. Պոչառ աղւես

Փախառ աղւեսը,  
փախառ թակարդից,  
բայց պոչի կէսը

թողեց նա ներսը:

Էտպէս պոչառ,  
պոչից անջառ,  
գնաց ասաւ ընկերներին.

—Այ, ձեզ մատաղ, ես ձեր գերին,  
ուն զցեցէք ձեռ պոշեռը,

ինչու են պէտք էտ փչերը.

Դրանք զարդ չեն ու զարդարանք,  
այլ մեր զլիին պատիժ, փորձանք,

գետնի աւել,

վազըի խափան,

մեզ անվայել,

աւելորդ բան:

Էտտեղ մի ձեր վարպետ աղւես  
ասաւ նրան՝ «Ապրես, ապրես,

այ ծակամուտ թոռիս թոռը,

էտքան չեն տայ խելքին զոռը.

բա ասի որ տեղն էր պոչըդ,

ինչու չարիր դու էտ կոչըդ»:

Արէսը ինչո՞ւ է ոգում միւսների պոչերն էլ կտրել տայք

Թակարդ—կենդանիներ բանելու գործիք կամ սարք:

անջառ—բաժան, բաժանւած:

անվայել—չը սազող, չը համապա ոտսիանող:

1. Ի՞նչ ասել է խելքին զօռ տայ, վազըի խա փոն:

2. Ի՞նչու աղւեսը աղւեսին անւանում է «ծակամուտ»:

## 39. Գրագրի տղան

ա.

Յովսէփի հայրն արդէն հասակն առած և չափազանց  
աշխատանքից ալեւորած մի մարդ էր: Երկաթուղու վարչու-

թեան մէջ գրագրի պաշտօն ունէր։ Ըստանիքը մեծ, ուժիկը  
աննշան, ստիպւած էր պաշտօնից դուրս էլ գրագրութիւն և  
ուրիշ գործեր յանձն առնել, և գրեթէ ամեն գիշեր գրում  
էր։ Վերջերս մի խմբագրատուննրան էր յանձնել բաժանորդ-  
ների հասցէները գրելը։ Հինգ հարիւր հասցէի համար վճա-  
րում էին երկու ըուբլի։

—Աչքերս տկարանում են. մաշւեցի այս գործի վրա,—  
գանգատում էր յաճախ ճաշի ժամանակ հայրը։

—Թող, հայրիկ, ես քո տեղը արտագրեմ, —ասաւ մի օր  
տղան. —մեր ձեռքը իրար նման է։

—Ոչ, —պատասխանեց հայրը կտրուկ. —դու սովորում ես.  
քո ուսումը աւելի կարեոր է. դու քո գործը տես։

Յովսէփիկը ճանանչում էր հօր բնաւորութիւնը, էլ այդ  
մասին ոչինչ չասաւ, բայց մի գիշեր արթուն սպասեց  
անկողնում մինչև հօր պառկելը. յետոյ կամացուկ վեր կա-  
ցաւ, հագաւ շորերը, խարխափելով մտաւ գրասենեակը ու  
լամպը վառեց. Գրասեղանի վրա դրւած էր թղթէ զօտիների  
մի դէզ և հասցէների ցուցակը. Յովսէփիկը սկսեց արտագրել.  
երբեմ-երբեմն կանգ էր առնում, ականջ էր դնում ու նորից  
սկսում էր գրել աւելի մեծ եռանդով. Այսպէս նա արտագրեց  
հարիւր եօթանասունընդինգ հասցէ. վաստակել էր ուղիղ  
տասը շահի. Թողեց գրելը, ամեն բան սեղանի վրա կարգի  
բերաւ, լամպը մարեց ու ոտի մատների վրա գնաց մոտ  
անկողին։

Հայրը ուրիշ հոգսերով զբաղւած՝ առհասարակ մեքենա-  
բար էր արտագրում, ուստի և չը նկատեց որդու արած խաղը։  
Միւս օրը ճաշին հայրը շատ լաւ էր տրամադրւած։

—Երէկ գիշեր մի երկու ժամում ամբողջ գործիս կէսը  
աւարտեցի. Դեռ երբէք այդպէս չի եղել. ուրեմն դեռ ձեռք  
աջող է ու աչքս սուր։

Յովսէփիկը հրճում էր սրտի խորքում։

բ.

Եւ ամեն գիշեր, ժամը տասներկու սը խփեց թէ չէ, հէնց  
որ հայրը գն ում էր պառկելու, ինքը անցնում էր նա տեղը  
ու սկսում արտագրել. Բայց այդպէս իր քունը կարճելով  
առաւօները ուշ էր զարթնում, յոգնած էր վեր կենում ու  
դասերն էլ կարծես ակամայ էր սովորում. քունը տանում  
էր գրքերի վրա. Հայրը նկատեց, նախ քիչ խոժոռեց ու վեր-  
ջապէս յանդիմանեց.

—Դու փոխւել ես, Յովսէփիկ. ծուլանում ես, լաւ չէ։ Ամ-  
բողջ մեր ընտանիքը ապրում է քո յոյսով... Ես ըեղանից դրժ-  
գուն եմ, հասկանում ես.

Այս առաջին խիստ կշտամբանքը շփոթեց տղային։  
«Զէ, —մտածեց նա, —այսպէս շարունակել չի կարելի...»

Բայց նոյն օրը ճաշի վրա հայրը յայտնեց ուրախ-ուրախ,  
որ այդ ամիսը տասնըշորս ըուբլի աւելի է աշխատել, քան  
նախորդ ամիսը. Ամբողջ տասնըշնը ըուբլի։

«Զէ, սիրելի հայրիկս, —մտածեց տղան. — պիտի շարունա-  
կեմ։»

Ու սկսեց բոլոր ուժով աշխատել թէ դասերին և թէ գի-  
շերները. Բայց քանի գնում յոգնութիւնը աւելի էր սաստկա-  
նում. Հայրը շարունակ տրտնջում էր որդու ցրւածութիւնից  
ու ծուլութիւնից, կշտամբում էր, և վերջապէս գնաց դպրոց  
վարժապետից տեղեկութիւն հարցնելու։

—Ուրիշներից ետ չի մնում, —պատասխանեց վարժապե-  
տը. — ուսովիե ու ընդունակ է, բայց պատահում է, որ դասի ժա-  
մանակ ընում է, կամ յօրանջում. անուշաղիլ է։ Շարագրու-  
թիւններից շատ կարճ է գրում, վայրիվերոյ. կարող էր շա-  
տաւելի լաւ պարագել...

Նոյն իրիկունը հայրը մի կողմը տարաւ Յովսէփին և  
խստութեամբ ասաւ.

—Տեսնում ես, որ ես չարչարւում, մաշլում եմ մեր ըն-

անիքի համար: Դու ինձ օգնելու մասին բնաւ չես մտածում: դու անսիրտ ես: Քո փոյթը չէ ոչ հայրդ, ոչ մայրդ, ոչ փոքրիկ եղբայրներդ...

Յովսէփիկը մաց լուռ, գլուխը քաշ արած, բայց հէնց որ հայրը հեռացաւ, արցունքները թափւեցին աշբերից:

—Թող նա այդպէս մտածի, —միտթարեց տղան ինքն իրեն: —բաւական է, որ ես թեթևացնում եմ նրա ծանր ու մաշող աշխատանքը...

Եւ օրերը անցնում էին՝ զիշերները աշխատելով: ցերեկները յոգնած ու վշտացած, Ամենից ծանրը այն էր, որ հայրը քանի գնում, այնքան սառչում էր որդուց ու շատ քիչ էր հետը խօսում:

Մի անգամ էլ, կէս զիշերին, երբ նորից վառեց լամպը, վեցըրեց գրիչը և ուզում էր սովորական զործը, յանկարծ գիպաւ մի գրքի գիրքն ընկաւ ու աղմուկ հանեց: Յովսէփի արիւնը խփեց գլուխը: հապա եթէ հայրը զայխնէր: Շունչը բռնած ականջ էր դնում: Լուս թիւն: Ակա նջը մօտեցրեց դռան: ամենքն էլ քնած էին: Տղան միամտւեց, եկաւ, նստեց ու սկսեց գրել:

Գրւած գոտին երի թիւը աւելանում էր: Նա յսում էր, թէ ինչպէս զիշերապահ ոստիկանը կանոնաւոր քայլերով անց էր կենում դատարկ փողոցով և թէ ինչպէս ճռչալով հանդարտ գնում էին քաղաք մթերք բեռնելու սայլերը: Յետոյ դարձեալ խոր լուռեթիւն, միայն հեռւից լսում էր շների հաշոցը: Իսկ հայրը արդէն կանգնած էր նրա ետեր...

Նա զարթել էր գրքի ընկնելու աղմուկից: քիչ էլ սպասել էր ու ներս մտել: Սայլերի ձոինչը ծածկել էր նրա քայլերի թեթև ձայնը: Ակասը գլուխը Յովսէփի սև ու զանգուր զլիի վրա կախ արած՝ դիտում էր նրա գրչի սահելը թղթի վրայով: Նա գամւել մնացել էր իր տեղում, շունչն ու արցունքը բռնած...

Յովսէփիկը մի սուր ճիշ արձակեց: հայրը դողոջ ձեռքերով փարւեց նրա զզովը:

—Ների ինձ, հայրիկ, —աղաչեց մանուկը:

—Դու ինձ ների, —պատասխանեց հայրը հեկեկալով ու նըրա երեսը հազար անգամ համբուրելով: —Այժմ իմացայ, այժմ գիտեմ: Ես, ես եմ քեզնից ներողութիւն խնդրողը, ով իմ սուրբ երեխան:

Որդին ինչո՞ւ համար էք ներողութիւն խնդրուա: հապա հայրը ինչո՞ւ համար:

Հայրիկը թողեց այնուհետեւ, որ Յովսէփիկը շարունակի աշխատանքը:

Գրի ո Յովսէփի աշխատանքի առաջին կամ վերջին գիշերը:

Պատմի ո՝ հայրը ինչպէս պատմեց այս ամենը ուսուցչին կամ ուսուցիչը ինչպէս յայտնեց դասարանին եւ աշակերտների վրա ինչ տպատրութիւն արեց:

Երկաթուղու վարչութիւն՝ այն բոլոր պաշտօնեաները միասին, որոնք կտուավորում են երկաթուղին: նաև այն տեղը, որտեղ այդ պաշտօնեաները աշխատում են:

ոոճիկ՝ ամսական կամ տարեկան վարձ:

բաժանորդ՝ այն մարդը, որը ոչ թէ հատով է գնում լրագիրը, ոյլ գրւում է խմբագրատանը, որ ստոնայ երկար ժամանակով:

խարխափելով՝ չորս կողմը շօշափելսկ մութի մէջ:

վաստակել՝ աշխատել, գտել, շահել:

մեքենաբար՝ ինչպէս մեքենայ՝ տոտնց զգալու:

տրամադրութիւն՝ քէֆ, հոգեկան վիճակ:

լաւ տրամադրւած էր՝ քէֆը տեղն էր:

հրճւել՝ սառտիկ ուրախանալ:

կշտամբել՝ յանդիմանել, նախատել:

վայրիվերոյ՝ անփոյթ, շտապ աշխատանք:

միամտւել՝ իր մաքի մէջ հանգստանալ:

փարւել—փաթաթւել:  
դամւել—մեխւել. գամ—մեխ:

1. Ի՞նչ ասել է գրագէտ, գրագրութիւն, գրասենեակ, լորմ-  
բագիր, խմբագրատուն, խմբագրութիւն.

2. Մեքենաբար արտագրում էր, ընկերաբար օգնում էր,  
թշնամբար վնասում է, յիմարաբար փշացնում է—այլ կերպ  
ինչպէս կտսես այն բառերը, որոնք վերջանում են բար մասնիկով.

3. Ընտանիքը քո յոյսով է ապրում—ուրիշ ինչպէս կտսես  
Արիւնը գլուխս խփեց.

3. Գոհ-դժգոհ, բախտաւոր-դժբախտ, գունաւոր-դժգոյն—  
ոյս բառերի ոկզրում ինչ մասնիկ է և տեղը ուրիշ ինչ մասնիկ կա-  
րելի է դնել:

5. Արցունքները թափւում են աչքերից.—Էլ ուրիշ ինչ են  
մնում:

6. Հանիր արմատները՝ գիշերապահ, երկաթուղի, չափա-  
ղանց և բառերը բացատրիր:

7. Սայլը ճռնչում է, կառքը..., դուռը..., կօշիկները...,  
վետը..., տերեները..., ամպերը..., հրացանը....

8. Ի՞նչ տարբերութիւն կայ դիտելու, նայելու և տեսնելու  
մէջ:

9. Ինչու հայրը ասում է «սուրբ երեխայ»:

## • 40. Փուն

Մէգ ու մշուշ, ձիւն ու ձմեռ...

Մունջ երկիրը քուն մտաւ,

ու ամեն ինչ խորին գիշեր

իր սև թեփ տակն առաւ:

Ծառ ու տնտառ սառուց հագած՝

քնած են լուռ ու շւար,

սառ վերմակը գլխին քաշած՝

մեռել են դաշտ, ձոր ու սար...

Ոչ մի շշուկ, ոչ մի ծպտուն,

խամենը խոր մտել են քուն:

## 41. Արու-Հասանի սալիկները

ա.

Ո՞վ չէր ճանաչում Բաղդադում Արու-Հասանի հոչակա-  
ռոր մաշիկները, այն կողմերում հւմը յայտնի չէին Արու-Հա-  
սանի երեսի մաշիկները:

Քթերը թափած, կրունկների մէկը դէսը, միւսը դէնը  
ծռւած, հազար տեղից ծակ-ծակ, գոյնը վաղուց թռած, քըր-  
ըրրւած, կեղառտ մաշիկները նմանը չունէին ամբողջ Բաղ-  
դադում:

Ծերունիները հազիւ էին յիշում այն օրը, երբ այդ կօ-  
շի կները առաջին անգամ զարդարեցին Արու-Հասանի ոսկրու  
ուները. Այն ժամանակ Արու-Հասանը թէև նոյնչափ բարձ-  
րահասակ ու բարակ էր, բայց դեռ չորացած, շըմը շկած չէր.  
Ժօրուքը թէև նոյնչափ երկար ու փառաւոր էր. բայց դեռ ոչ  
մի սպիտակ մազ չէր երեսում.

Արու-Հասանը մի օր գնացել էր բաղանիք:

Հանւելիս ծանօթներից մէկը նայեց և ասաւ.

— Պատւելի Արու-Հասան, արզեօք երբեկցէ դէն կը գցե՞ն  
էտ մաշիկները, որ ոտքիդ փթել են:

— Հա, հա, ես էլ եմ տեսնում՝ միքի մաշւել են, — մըրթ-  
մըրթաց Արու-Հասանը և շուտով ներս մտաւ բաղանիք:

Բաղանիքից դուրս զայուց յետոյ, հագնւելիս Արու-Հա-  
սանը իր քրքրւած մաշիկների կողքին նկատեց մի զոյտ նոր,  
սիրուն, գողտրիկ մաշիկներ. Ու բացականչեց.

— Անշուշտ, բարեսիրտ ծանօթս է էս մաշիկները ինձ նը-  
ւիրել. Ալլահը նրան բարի տայ, մէկ օրը հազար անի, ան-  
սպառ լաւութիւնով լցնի նրա տունը...

Ու անվերջ օրհնելով առատաձեռն ծանօթին, Արու-Հա-  
սանը հագաւ նոր կօշիկները ու երջանիկ-երջանիկ դուրս գնաց  
բաղանիքից:

Դու մի ասա, այդ մաշիկները զաղիինն է եղել:

Դուրս է գալիս զաղին բաղանիքից, դէս մաշիկ, դէն մաշիկ՝ չը կայ: Գոռգոռում է զաղին: Բաղնիսպանը, ծառաները գլուխները կորցրած որոնում են: Մէկ էլ ահա բերում են Աբու-Հասանի փառաւոր մաշիկները՝ քթերը թափած, կրունկների մէկը դէսը, միւսը դէնը ծուած, հազար ու մի տեղից ծած-ծակ, քրքրւած, կեղտոտ մաշիկները:

—Էս հօ Աբու-Հասանի զգւելի մաշիկներն են,—գոչում է զաղին: —Էն ժլատը գողացել է իմ նոր մաշիկները: Շուտով, հասէք, բռնեցէք:

Հասնում են Աբու-Հասանին հէնց իր տան դռների առջև, բռնում են տանում դատարան: Կարող էր արդարանալ որ... Գողացած մաշիկները ստքին էին: Եւ ԱբուՀասանը պէտք է բանտ նստէր, կամ, ոհ սոսկալիք բան, տուգանք վճարէր և նորից իր հին մաշկներով տուն վերադառնար:

Այդ օրւանից Աբու-Հասանը ատեց իր հին հոչակաւոր մաշիկները: Հէ որ բոլոր դժբախտութիւնների պատճառը նըրանք էին եղել:

Առաւօտը, լոյսը բացւելուն պէս, իջաւ այգինու թաղեց, խորը թաղեց մաշիկները մի ծառի տակ: Որ ազատւի ու էլ նրանց երեսը չը տեսնի:

Հարևանը կտուրից նկատեց ու մաքումն ասաւ:

—Էս լաւ է, վերջապէս իմացայ՝ որտեղ է պահում Աբու-Հասանը իր ոսկիները:

Ու հէնց նոյն գիշեր ծածուկ մտաւ Աբու-Հասանի այգին: Փորեց փորփորեց, արմատահան արեց թփերը, վերջապէս ծառի տակից դուրս եկաւ ինչ որ բան:

Լուսնեակի լուսով լաւ զննեց ու տեսաւ՝ մաշիկներ էին՝ քթերը թափած, կրունկների մէկը դէսը, միւսը դէնը ծուած, հազար ու մի տեղից ծակ-ծակ, քրքրւած, կեղտոտ մաշիկներ:

—Էս հօ Աբու-Հասանի գարշելի մաշիկներն են, —կանչեց հարեանը ու զայրացած այնպէս տւաւ մաշիկները Աբու-Հասանի տան գուանը, որ խեղճ ծերուկը վեր թռաւ տեղից ու դողդողալով շապկանց վազեց տեսնելու՝ գողերը հօ չեն մրտել իր մնդուկները փախցնելու:

Վախից դուռը բաց չարաւ բայց էլ բուն կը գար աչքերին:

Առաւօտեան, երբ դուռը բաց արաւ՝ ապշած մնաց: Իր հին հոչակաւոր մաշիկները ընկած էին շէմքին, իսկ այգին, իր աչքի լոյս այգին, տակնուվրա արած:

Աբու-Հասանի ծնկները գողացին, աշքերը դէպի երկինք գարձան, ձեռքերը վեր պարզւեցին, ու նա կարողացաւ միան բացականչել:

—Ալլահ, այս ինչ պատիժ է:

Ամբողջ օրը խանութում Աբու-Հասանը միմիայն մի բանի մասին էր միտք անում: Թէ ինչպէս ազատւի իր հին հոչակաւոր մաշիկներից:

Եւ երեկոյեան դէմ կամացուկ դիմեց քաղաքից դուրս:

—Այ հրաշք, Աբու-Հասանը զբօսնելու է գնում, —ասում էին զարմացած նրան պատահ ող ծանօթները:

Աբու-Հասանը գնաց հեռու, գետի ափով, շուրջը նայեց, աեսաւ՝ մարդ չը կայ, ու ջուրը նետեց իր մաշիկները:

—Գնացին, —ուրախանում էր նա: —Ճնվք գնացին:

Եւ հանգիստ սրտով վերադարձաւ տուն ու անուշ քնեց:

Գետից ջուր էր բերւած քաղաքի հրապարակները: Միւս օրը, Բաղդազի կանայք երբ գնացին աւագանից ջուր առնելու, աեսան որ ջուրը կտրւել է, աւագանը դատարկ: Կանչեցին օաղաքապետին, քանզութեցին խողովակները և յանկարծ խողովակների մէկից դուրս եկան մաշիկները՝ քթերը թափած, կրունկների մէկը դէսը, միւսը դէնը ծուած, հազար ու մի տեղից ծակ-ծակ, քրքրւած, կեղտոտ մաշիկներ:

տեղից ծակ-ծակ, քրքրւած, կեղտոտ մաշիկներ:

— Էս հօ Արու-Հասանի բորբոսնած մաշիկներն են, — պոռացին ամենքը, — քերէք Արու-Հասանին, քաշ տւէք Արու-Հասանին դատաւորի մօտ, էտ անպիտան ջուր ապականողին.

Դարձեալ կանգնեց Արու-Հասանը զաղիի առջև: Ի՞նչ պիտի ասէք. բազմութիւնը իր աշբովս էր տեսել նրա մաշիկները Ջրի խողովակի մէջ: Արու-Հասանը պիտի վճարէր մեծ տուգանք և ուտէր մտրակի յիսուն հարւած:

Մեռայ, — աղաղակում էր նա, — վայ, մեռայ...

Տնքալով, անիծելով այն օրը, երբ գնել էր իր հոչակաւոր մաշիկները, անիծելով իր սև բախտը, նա վերադառնում է տուն ու կրկնում.

— Ռւրիշ ճար շը կայ, ուրիշ ճար շը կայ, պիտի այրեմ, կրակը պիտի դցեմ...

#### 6.

Բայց մաշիկները այնպէս թաց էին. Արու-Հասանը դրաւ պատուհանին, որ չորանան. Տան կատուն ցատկեց պատուհանը՝ արևի տակ տաէ անալու համար, կպաւ մաշիկներին, մաշիկները գլորւեցին ցած՝ փողոցը, ընկան ուղղակի տակովն անցնող կնոջ գլխին:

Կինամար դը ցուլից ճշաց. հաւաքւեց ժողովուրդը և ի՞նչ տեսնի: Ճակատը ճղւել է, արիւնը կաթիլ-կաթիլ ծլծլում է, իսկ գետնին ընկած են մաշիկներ՝ քթերը թափած, կրունկների մէկը դէսը, միւսը դէնը ծուած. հազար ու մի տեղից ծակ-ծակ, քրքրւած, կեղտոտ մաշիկներ:

— Տեսէք, էս հօ Արու-Հասանի զազրելի մաշիկներն են, — դոչեցին ամեն կողմից: — Այ Արու-Հասան, այ Արու-Հասան, դուրս արի, մարդասպան:

Արու-Հասանի դէմքը երևաց պատուհանից և մի ակնթարթում կտաւի պէս գունատւեց:

Ամբոխը քաշէքաշ տարաւ նրան նորից ղաղիի մօտ:

— Արդար գատտւոր, ողորմի, — աղերսում էր Արու-Հասանը՝ գետնին տարածւած, — լսիինձ. իմ մաշիկները, իմ անիծած մաշիկներն են ինձ էս տեղը հասցնողը: Հոգիս դուրս եկաւ, ճար չունեմ: Ինչքան ուկի ուզում ես վերցրու, միայն թէ փրկի ինձ մաշիկներիս ձեռիցը:

Ղաղին չը կարողացաւ ծիծաղը պահի:

— Վեր կաց, Արու Հասան, — ասաւ նա, — տես, առաջ դու չէիր ուզում քո հին հոչակաւոր մաշիկներից բաժանել, հիմա էլ մաշիկներդ չեն ուզում քեզնից ձեռք վերցնել: Ներողութիւն խնդրի այս կտոջից, բժշկի վարձը տուր ու ճանապարհ դիր, ինքդ էլ գնա ք: բանին: Մաշիկներիդ համար էլ դարդ մի անի:

Ու հրամայեց Արու-Հասանի մաշիկները կախեն Բաղդադի Թեծ հրապարակի վրա.

Ո՞վ չէր ճանաչում Բաղդադում Արու-Հասանի այդ մաշիկները՝ քթերը թափած, կրունկների մէկը դէսը, միւսը դէնը ծուած. հազար ու մի տեղից ծակ-ծակ, քրքրւած, կեղտոտ մաշիկները, որ ժլատը չէր սաբսափում դրանց մօտիցն անցնելիս:

Մաշիկները ինչու կախեցին մեծ հրապարակի վրա:

Ի՞նչ էր մտածում Արու-Հասանը ամեն անգամ իր մաշիկների տակովն անցնելիս:

Գրի ի թէ պատահեց, երբ Արու-Հասանը իր մաշիկները թողեց:

Ճմշկել-չորանալ, կուչ գալ. թառամել, խորշոմել:

Գողտրիկ -սիրուն, կոկիկ:

Ալլահ-մահմեդականները Ասածուն են անւանում:

Սպառւել -հատնել, վերջանու: Անսպառ -որ չի վերջանայ:

ղաղի -(թուրք.) դատաւոր:

տուգանք -այն փողը, որ վերցնում են իբրև պատիժ:

յախճապակի -լաւագոյն կաւից շնած աման:

դննել—տնգղել, լաւ նայել, քննել:  
 գարշելի—զգւելի, զազրելի:  
 զոյրանալ—սաստիկ բարկանալ:  
 հրապարակ—լայն ու բաց տեղ՝ մեծ մասամբ քաղաքի մէջ:  
 բորբոս—խոնաւորութիւնից ծաղկած:  
 ապականել—կեղտոտել:  
 ամբիս—ժողովրդի բազմութիւն:  
 աղերսել—խնդրել, աղաչել:

1. Ի՞նչ ասե, է առատաձեռն, դարձեալ:
2. Զուրը կտրւել է, ցաւը կտրւել է—բեր նման օրինակներ:  
Այստեղ կտրւել ինչ մտքով է գործածւած:
3. Քանդել-քանդոտել, ջնջել-ջնջոտել, գրել-գրոտել,  
ծակել-ծակոտել—ինչ տարբերութիւն ունեն այս զոյտ բառերը  
և ինչ միտք է տալիս ուս մասնիկը բառի մէջ:
4. Ռւրիշ կերպ ինչպէս կասես—գլուխը կորցնել, հարւած  
ուտել, հոգին դուրս եկաւ, ինձնից ձեռք վերցրու:
5. Գունատ, պոչատ, կոնատ—այլ կերպ ինչպէս կասես. այս  
բառերի մէջ ատ մասնիկը ինչ նշանակութիւն ունի:

## 42. Ազուան ու աղւար

Բախտի բերմամբ	գերւեց,
թէ պատահմամբ,	էրփեց
ազուաւ ազին մի տեղ մի օր	պանրի հոտով:
պանիր գտաւ մի մեծ կտոր,	Վազեց գնաց բերնի ջուրը
կացեց, տարաւ	և թուլացաւ կուռն ու ճուռը:
ծառին թառաւ.	ին ժամանակ, իրա ձեխն,
Օ. Ինչ պանիր, դեղին սսկի...	ծառի տակից, աշըն ագուավին,
Բայց դեռ շառած համը իսկի,	հեղիկ-նազիկ,
աղւէսն անցաւ	փափկամազիկ,
ծառի մօտով,	բացեց լեզուն

անուշ-մեղուշ,  
 թափեց-չափեց  
 շաքար ու նուշ.  
 — «ի՞նչքան լաւն ես,  
 ես քո գերին,  
 քո էտ սեիկ  
 վառ աչքերին,  
 նուրբ ծալքերով  
 զոյգ թիերին:  
 Մի դու մըտիկ,  
 էտպէս բըթիկ,  
 էտպէս ճըտիկ,  
 մախմուր ազին,  
 խաս ու զումաշ  
 ատլասն հազին:  
 Անշուշտ ձայնն էլ իմ քուրիկի  
 շողոքորթը որխեց գնաց:

բախտի բերմամբ թէ պատահմամար—բախտ բերաւ թէ  
 այդպէս պատահեց:  
 ազի (թուրք.)—մայր:  
 խաս ու զումաշ (թուրք.)—ազնիւ, թանգ կառը.  
 շընաղ—աննման, շատ գեղեցիկ:  
 շողոքորթ—քաղցը խօսքերով ուրիշի գլուխը իւղող, ուրիշ  
 սիրաց գրաւել ու զող:  
 որխել—բերան գցել. որխ—գազանի բերան, առհասարակ մեծ  
 բերան:

Ինչ ասել է բերնի ջուրը վազեց. թուլացաւ կուռն ու  
 ճուռը:

## 43. Առաջըն ձնծաղիկնարը

Երկար միրուքով ծերունին նստել էր ունըերը կիտած  
 մտածում էր.

Նրա դէմ կանգնած էր աշխուժ պատանին՝ ոսկեփայլ գանգուրներով:

Մութ ու ցուրտ գիշեր էր և նրանք վիճում էին:

—Ես կը փշեմ գետերին ու նրանք կը ծածկւեն սառուցով, —ասում էր ծերունին:

—Իսկ ես կը փշեմ սառուցին ու կազատեմ կաշկանդւած գետերը, —պատասխանեց պատանին:

—Ես կը թափահարեմ ալեզարդ գլուխս, ու երկիրը կը ծածկւի ձիւնով:

—Ես կը թափահարեմ ոսկեհեր գանգուներս, և պայծառ արեգակը կը ժպտայ և կը հալւի ձիւնը:

—Ես կը հրամայեմ թռչուններին լոել և չւել այստեղից, ու նրանք թեսերը կը բանան ու կը դիմեն հեռաւոր երկիրներ:

—Իսկ ես կը կանչեմ. «Թոշնակներ, վերադարձէք»: Կը գան նրանք, կը պտտւեն գլխիս ու օդը կը լցնեն զիլ երգերով:

—Ոչ ոք չի կարող համրել այն բոլոր տերենները, ոք սարսափից գողղողալով թափւում են գետին, երբ ես կը զչում եմ նրանց իմ սառցէ մատներով: Տեսել ես դու այդ երբ և իցէ:

—Ես երբէք չեմ աեսել տերենները ծառերից թափւելիս, ես տեսել եմ նրանց միշտ դալար, միշտ մատղաշ. նրանք ուրախ գողում են, երբ մօտենում եմ:

Այսպէս ծերն ու պատանին վիճում էին ամբողջ գիշեր: Ծերունին սկսեց յոզնել ու թուլանալ:

Լուսաբացին արեց փայլեց ու օդը լցւեց թռչունների ու ըստ ծըլւըլոցով:

Ամենքը իմացել էին արդէն ոսկեհեր պատանու գալու լուրը ու իրար ողջնում էին ուրախ գւարթ: Պատանին ինքն էլ երջանիկ ժպիտով նայեց իր շուրջը, ապա դարձաւ ծերունու կողմը, որ մնաս բարե ասի նրան...

Ծերունին չը կար:

Այնտեղ, ուր նա նստած էր մի քիչ առաջ, երևում էին մի բանի սպիտակ բծեր՝ ձիւնի վերջին մացորդներ:

Պատանին մօտեցաւ նրանց ու ժպտաց: Բծերը ոչ թէ ձիւնի մացորդներ էին, այլ սպիտակ ծնծաղիկներ՝ գարսան առաջին ծաղիկներ, որոնք զեռ յիշում էին ձմեռ:

Էլ ի՞նչ ծաղիկներ պիտք, որ բացուած են ձիւնի հալելուն պէս: Գրի միայն ի՞նչ է անուած ծերունին, կամ ի՞նչ է անուած պատանին:

Պատմի թը ե՞րբ են իրար պատահելու այդ երկուառ եւ ինչպէս լինելու նրանց այդ հանդիպումը:

կաշկանդել —կապկպել, անշարժացնել:

զիլ ձայն —սուր, հնչուն ձայն:

մատղաշ —նոր ծլած, նոր բռւսած, նոր ծնած.

1. Ոսկեփայլ, թափահարել, ալեզարդ, ոսկերիեր, լուսաբաց —աստ արմատները և բաները բացատրի:

2. Յօնքերը կիտել, քիթը կախել, պոօշները ուոցնել —ոք գէպերում են գործածում այս դարձւածքները:

3. Մնացորդ, աւելորդ, յաջորդ, նախորդ, ձախորդ, ճամփորդ, յաճախորդ, անցորդ —այս բաները ինչ մտնիկով են վերջանում և ինչպէս է այդ մտնիկը գրւում:

#### 44. Ծրծունակ

Մարտն անցաւ, հասաւ ապրիլ գեղեցիկ, հեռու աշխարհից եկաւ ծիծնոնիկ.

բարով զու եկար, գարնան կարապետ, բուն շինողներից ամենից փարպետ:

Պատուհանիս մօտ շինի քո բունը,  
անուշ ճըռւողով երգի գարունը,  
ձու ածա, հանի գեղեցիկ ձագեր  
ու մնա մեզ մօտ մինչև սեպտեմբեր:

Կարապետ—ճամփա ցոյց աւող, քարաւանի առջեց գնացող:  
ճուող, ճուողիւն—ծիծեռնակի երգը.

## 45. Հրաշալի հատիկը

ա.

Մի այրի կին է լինում, ունենում է մինուճար տղայ  
Նրանք ապրում էին անտառում, հաւաքում էին ծառերի  
պառզերը և կերակրում: Օրւան մի օր մայրն ասում է:

—Որդի, գնա ծառերի պտուղը հաւաքի, բեր ուտենք:

Տղան գնում է, ծառէ ծառ ման գալիս, տեսնում է  
Հիւսիսային քամին զարկել է, բոլոր պտուղները թափել ու  
տարել: Խիստ բարկանում է քամու վրա, գալիս է մօրը  
պատմում, թէ քամին պտուղներս տարաւ:

—Մայրիկ,—ասում է նա,—մնաս բարով. գնում եմ քա-  
մուց պտուղներս ուզեմ:

Ասում է ու գնում: Գնում է ու գնում՝ հասնում է քա-  
մու սաոցէ պալատներին: Ցուրտ, ինչպէս ցուրտ: Շատ  
սառն է ընդունում Հիւսիսային քամին տղային ու բարկա-  
ցած հարցնում է.

—Ի՞նչ ես ուզում, այ տղայ, ինձանից:

—Ինչպէս թէ ինչ եմ ուզում. էտ էլ խօսք է, որ ասում  
ես, Դու տարար իմ անտառից բոլոր պտուղները, քաղցած  
թողիր ինձ ու մայրիկիս: Ետ տուր պտուղներս. Մինչև շը  
տաս, ես էստեղից հեռացողը չեմ:

Մտածում է, մտածում քամին, ապա գառնում է ու ասում.  
—Ես պտուղ չունեմ, որ իմա ձեզ տամ, բայց պտղի  
տեղակ մի ուրիշ բան կը տամ: Ես կը տամ քեզ մի հրաշալի  
հատիկ: Տար, գսրնանը ցանիր, ու միշտ քո տանը ուտելու  
բան կունենա՝ թէ ամառ, թէ ձմեռ:

Տղան վերցրեց հատիկը, եկաւ տուն, գարնանը ցանեց  
իրենց տան մօտ: Եւ շուտով տեսան, որ մի կանաչ արտ է  
դառել: Ամեն մի ցողունի վրա հարիւր հասկ, հասկերը լիքը  
հատիկներով:

Հաւաքեց տղան հունձը, աղաց, ալիւր շինեց, մայրը հաց  
թխեց, կերան, կշտացան ամբողջ տարին՝ ամ առ-ձմեռ:

Միւս գարնան տղան մի մեծ արտ ցանեց. դարձեալ լաւ  
հունձ ստացաւ. ամեն մի ցողունը հարիւր հասկ տւաւ:

Այսպէս տարւէ տարի ցանում էր նա, արտերը մեծա-  
ցնում, հունձն անում, ցորենը սերում ամբա ըները լցնում:

բ.

Մի անդամ տղան տուն էր գալիս, ճամփան ցեխ էր. անձ-  
ընից կօշիկները ցեխուել էին: Տղան կանգնեց, իր արտից մի  
փունջ ցորեն պոկեց և նրանով ոտները սրբեց:

Յանկարծ վրա հասաւ Հիւսիսային քամին, տրորեց, տա-  
փեց արտը և ականջի տակ բարձր սուլեց:

—Անպիտան տղայ, բաւական չէ, որ մենակ էիր ուտում  
իմ տւած հազը, բաւական չէ, որ աղքատներին բաժին չետ  
հանում, իմ տւած ցորենով ցեխոտ ոտներդ ես սրբնում. Էլ  
ցորենի երես չես տեսնի: Ինչ որ գանես, պէտք է փչացնեմ:

Տղայի շունը լաց եղաւ ու ասաւ:

—Քամի, քամի, գոնէ ինձ խըղճա. որ տւածդ առնում  
ես, բա ես ինչ անեմ, ինչ ուտեմ, սովից մռանեմ:

—Լաւ, որ էտպէս է, —ասաւ քամին, —ես քեզ կը ինա-  
յեմ, բո բաժինը կը թողնեմ: Դու էլ քո բաժնից մաս հանիր  
քո ախրոջը:

Էն օրից ետ ցողունի վրա մենակ մի հասկ բուսաւ. Են էլ  
հօ անվաս չէր մոռմ, երբեմն քամին տրորում ու գետնին  
էր կպցնում ցորենը, երբեմն էլ իր ցանածի կէսը հազիւ էր  
տուն բերում մարդը:

Գրի՞ ի՞ ինչի՞ համար սարկացաւ չիախային քամին:  
Դնշակս պատժեց:

1. Ցուրտը տարել է, ցօրենի երես չես տեսնի—գործածիւ  
նախադասութիւնների մէջ:

2. Օրւան մի օր—ուրիշ բնչ կերպ կասես:

3. Ծառէ-ծառ, քարէ-քար, տարւէ-տարի—ուրիշ բնչ կերպ  
կարելի է ասել:

## 46. Փոքրիկ երկրագործ

Եկաւ գարուն, եկան հաւքեր,  
տաքցաւ արև, գրլզլան ջրեր,  
եկան վարի-ցանքի օրեր.  
Կառւնկն ամոլ արեցի,  
սագերն հորիք լըծեցի,  
ճնճղուկն հօտաղ վարձեցի,  
կաքաւն հացւոր բռնեցի,  
տքտ ունէի՝ վարեցի,  
ցորեն, գարի ցանեցի:

Որտեղ էր նրա արտը:

Հաւք—թոչուն:  
ամոլ—գութանի առաջին զոյգ եղներ.  
Հորիք—գութանի վերջին զոյգ եղներ.  
Հօտաղ—գութան քշող տղան, որ նստած է լինում լուծերի վը-  
քա. գրւում է օ-օվ:  
Հացւոր—արտում բանող մշակներին հաց տանող մարդ:

## 47. Իր զիսի տէր կատուն

ա.

Այս բանը պատահել է այն ժամանակ, երբ ընտանի  
կենդանիները գեռ վայրենի էին. Շունը վայրենի էր, ձին էլ  
էր վայրենի, կովն էլ էր վայրենի, ոչխարն էլ էր վայրենի և  
խոզն էլ էր վայրենի, այնպէս վայրենի, ինչպէս որ վայրենին  
կը լինի, և բոլորն էլ թափառում էին խոնաւ վայրի անտառ-  
ներում, վայրենի ու մենակ. Բայց բոլոր վայրենի կենդանի-  
ների մէջ ամենից վայրենին կատուն էր. Նա իր զիսի տէրն  
էր, ման էր զալիս ինքնագլուխ և ամեն տեղնրա համար մէկ էր.  
Ի հարկէ, ճարդն էլ էր վայրենի, շատ վայրենի. Նա սկսեց

իր վայրենի զրութիւնից դուրս գալ միայն այն ժամանակ,  
երբ պատահեց կինարմատին և կինարմատը ասաւ նրան, թէ  
իրեն դուր չի գալիս այդպիսի վայրենի կեանքը:

Կինարմատը գտաւ մի յարմար չոր բարայր, որտեղ քը-  
նելն աւելի լաւ էր, քան թէ մի կոյտ խոնաւ տերևների վը-  
րայ. Եւ նա աւագ փոեց յատակին և խարոյկ վառեց իր այ-  
րի խորքում. Այդ երեկոյ նրանք կերան վայրենի ոչխարի միս՝  
շիկացած քարի վրա տապակած և վայրենի սխտորով և վայ-  
րենի պղպեղով համեմած, կերան և վայրենի եզան ոսկորնե-  
րի ծուծը, վրան էլ վայրենի կեռաս. Յետոյ աղամարդը գոն  
ու բախտաւոր մէկնւեց խարոյկի առաջ՝ քնեց, իսկ կինար-  
մատը նստեց և սկսեց իր մագերը սանրել, նորից փայտ աւե-  
լացնելով խարոյկին:

բ.

Խոնաւ վայրի անտառների բոլոր վայրի կենդանիները  
հաւաքւեցին միատեղ և նայում էին հեռւում վառող կրա-  
կին և զարմանում էին ու չէին հասկանում, թէ ինչ է:

Վայրենի շունը բարձրացրեց իր վայրենի բիթը, տապա-  
կած մսի հոտն առաւ ու ասաւ.

—Ես կը գնամ այն տեղ, մտիկ կը տամ, կը գամ ու ձեզ  
կասեմ. Արք ինձ հետ, կատու:

—Ո՞չ, —պատասխանեց կատուն, —ես այն կատուն եմ, որ  
ման է գալիս ինքնագլուխ. ամեն տեղ ինձ համար մէկ է,  
ես չեմ գայ:

Բայց ծածուկ գնաց վայրենի շան ետեմց ու թագ կա-  
ցաւ մի այնպիսի տեղ, որտեղից կարող էր ամեն ինչ լսել.

Վայրենի շունը ալրի մուտքին մօտեցաւ և ներս քաշեց  
տապակած մսի հրաշալի հոտը. Եւ կինը լսեց շան մօտենալը,  
ծիծաղեց ու ասաւ.

—Ահա եկել է առաջին գազանը. Դու ինչ ես ուզում վայ-  
րի անտառների վայրի գազան:

Ու շունը պատասխանեց.

—Օ՛, իմ թշնամի և իմ թշնամու կին, այդ ինչ է, որ այտա-  
քան անուշ հոտ է տալիս վայրի անտառներում:

Այն ժամանակ կինարմատը վերցրեց տապակած մսի ոս-  
կորը և գցեց վայրենի շան առաջ:

Վայրենի շունը սկսեց կռծել ոսկորը և իրեն այնպէս թր-  
ւաց, թէ իսկի այդպիսի համեղ բան չի կերել.

Ու կինարմատը ասաւ.

—Վայրենի անտառների վայրենի գազան, օգնիր ցերեկը  
իմ ամուսնուն որս անելիս և պահէր զիշերը այս այրը, այն  
ժամանակ ես քեզ ինչքան ոսկոր ուզես կը տամ խորոված  
մսից:

—Հըմ, —ասաւ կատուն ինքն-իրեն, —սա շատ խելացի կի-  
նարմատ է եղել:

Վայրենի շունը ներս սողաց այրը, գլուխը դրաւ կինար-  
մատի ծնկներին ու ասաւ.

—Օ՛, իմ բարեկամ և իմ բարեկամի կին, ես կօգնեմ ցե-  
րեկը բո ամուսնուն որս անելիս ու կը պահեմ զիշերը ձեր  
այրը:

—Հըմ, —ասաւ ինքն-իրեն կատուն, —այդ շունը յիմար  
շուն է եղել:

Ասաւ ու դարձեալ ետ դարձաւ  
խոնաւ վայրի անտառները, թա-  
փահարելով իր վայրենի պոչը վայ-  
րենի առանձնութեան մէջ:

Իսկ շունը դարձաւ մարդու ա-  
ռաջին ընկերը:

գ.

Միւս օրը երեկոյեան կինը քա-  
ղեց գետափի մարգագետնից մի  
գիրկ կանաչ խոտ և չորացրեց խա-  
րոյկի չառաջ. Կանաչը սկսեց մի  
այնպիսի անուշ հոտ բուրել, ինչ-  
պէս նոր հնձած և չորացրած խո-  
տը:

Խոնաւ վայրի անտառների բոլոր  
վայրենի կենդանիները հաւաքւել  
էին միատեղ և չեին կարող հաս-  
կանալ, թէ ինչ եղաւ վայրենի շու-  
նը. Վերջապէս վայրենի ձին իր  
վայրենի սմբակը գետնին խփեց  
ու ասաւ.



—Ես կը գնամ, կը տեսնեմ ու կասեմ ձեզ. Կատու, արի  
գնանք միասին.

—Ո՞չ, —պատասխանեց կատուն, —ես այն կատուն եմ, որ  
ման եմ գալիս ինքնագլուխ և ամեն տեղերը ինձ համար մէկ  
են. Ես շեմ գայ.

Բայց դարձեալ ծածուկ ձիու ետեից գնաց թագնւեց այն-  
պիսի մի տեղ, որտեղից կարող էր ամեն ինչ լսել.

—Ահա և երկրորդը. Ի՞նչ ես ուզում, վայրի անտառների  
վայրենի գազան, —հարցրեց կինը:

Վայրենի ձին պատասխանեց.

—Օ՛, իմ թշնամի և իմ թշնամու կին, ուր է վայրենի  
շունը:

Կինարմատը ծիծաղեց ու ասաւ.

—Վայրենի անտառների վայրենի գազան, դու եկել ես  
ոչ թէ վայրենի շան համար, դու եկել ես համեղ խոտի հա-  
մար.

Եւ վայրենի ձին մօտեցաւ նրան ու ասաւ.

—Դու ճիշտ ես ասում: Տուր խոտը ուտեմ.

Ու կինարմատն ասաւ.

—Վայրենի անտառների վայրենի գազան, ծոփր բո գը-  
լուխը և ինչ որ տալիս եմ՝ կրիր մէջքիդ վրա, այն ժամանակ  
օրական երեք անգամ ես քեզ կանաչ խոտ կը տամ.

—Է՛, —ասաւ կատուն ինքն-իրեն, —այս կինարմատը շատ  
խելացի կինարմատ է եղել.

Վայրենի ձին կրացրեց իր գլուխը և կինարմատը մի պա-  
րան գցեց նրա վզին.

—Օ, իմ տիրուհի և իմ տիրոջ կին, ես այդ հրաշալի՝ խո-  
տի համար կը ծառայեմ քեզ:

—Է՛, —ասաւ կատուն ինքն-իրեն, —այդ ձին շատ յիմար  
ձի է եղել.

Ասաւ ու ետ գարձաւ վայրի անտառները, թափահարե-

լով իր վայրենի պոչը վայրենի առանձնութեան մէջ:  
Իսկ ձին դարձաւ մարդու առաջին ծառան:

Միւս օրը վայրենի կովը զգուշութեամբ զլուեր կաց-  
րած, որպէս զի իր վայրենի պոզերը չը խճճւեն վայրի ծա-  
ռալի ճիւղերի մէջ, նոյնպէս եկաւ քարայրի մօտ: Եւ կա-  
տուն ծածուկ նրա ետևից եկաւ և թագնւեց մի այնպիսի  
տեղ, որտեղից կարող էր ամեն ինչ լսել: Ու երբ կովը խոս-  
տացաւ ամեն օր կաթ տալու այն հրաշալի խոտի փոխարէն,  
կատուն դարձեալ վերադառաւ իր վայրի անտառները, թա-  
փահարելով իր վայրենի պոչը վայրենի առանձնութեան մէջ:

Երբ մարդը, ձին և շունը վերադարձան որսից, մարդը  
հարցրեց, թէ այստեղ ինչ է անում վայրենի կովը:  
—Հիմա նրան էլ վայրենի կով չը պէտք է անւանենք, այ-  
նեղ կերակրող: Սրանից յետոյ նա կը տայ մեզ տաք, սպի-  
տակ կաթ և ես կը նայեմ, կը խնամեմ նրան, երբ դու, քո  
առաջին ընկերը և քո ծառան որսի գնալու լինէք:

Միւս օրը կատուն մի առժամանակ սպասեց, թէ արդեօք  
վայրենի գազաններից մէկը գնալու չէ դէպի այրը: Տեսաւ  
որ գնացող չը կայ, ինքը վեր կացաւ ու մենակ ուզեռուեց  
դէպի այրը: Ու նա տեսաւ կովին կաթ տալիս, տեսաւ այրի  
խորքում վառած խարոյկը ու առաւ տաքացրած կաթի հոտը:  
Եւ կատուն ասաւ.

—Օ՛, իմ թշնամի և իմ թշնամու կին, ուր է գնացել  
վայրենի կովը,

Կինարմատը ծիծաղեց ու ասաւ.  
Վայրի անտառների վայրենի գազան, վերադարձիր  
անտառները, իմ այրի համար էլ պէտք չեն ոչ ընկերներ, ոչ  
ծառաներ:

Ես ոչ ընկեր եմ, ոչ էլ ծառայ: Ես ինքնազուխ ման

եկող կատու եմ, ես էլ մտնել եմ ուզում քո այրը:  
Կինը ասաւ.

Դու այն կատուն ես, որ ինքնազլուխ ման ես դալիս,  
դու ոչ ընկեր ես, ոչ էլ ծառայ. դէ, գնա այստեղից և ման  
արի, ուր որ կ'ուզե՞մ:

Այն ժամանակ կատուն տիսուր ձևացաւ ու ասաւ.

Միթէ ես երբէք չեմ մտնելու այրը. Միթէ ես երբէք չը  
պէտք է նստեմ տաք խարոյկի մօտ. Միթէ ես երբէք խմելու  
չեմ տաք սպիտակ կաթը. Դու այնքան խելացի ես և այսքան  
գեղեցիկ. Դու այդպէս խիստ չեմ, վարւի կատւի հետ:

Կինը ծիծաղեց ու ասաւ.

Ես զիտէի որ խելացի եմ, ռայց չը զիտէի որ գեղեցիկ  
եմ. Հաւ, ես քեզ հետ պայման կը կապեմ, Եթէ երբեցէ ես  
էլ քեզ գովեմ, այն ժամանակ դու էլ մտիր այրը, նստիր տաք  
խարոյկի մօտ և լակիր սպիտակ տաք կաթը.

Կատուն մէջը ուռցրեց ու ասաւ.

Թող կրակի մօտ դրած կաթի պտուկը վկայ լինի իմ  
թշնամու կնոջ դրած պայմանին.

Դ.

Կինը ելաւ, կրակին փայտ աւելացրեց, արձակեց մազերը  
և սկսեց սանրել:

Եւ բիշ-քիչ այնպէս լոռւթիւն տիրեց այրում, որ մինչև  
անգամ պօտլիկ-չստլիկ մուկիկը համարձակւեց իր անկիւնից  
դուրս գալու և վազվելու յատակի վրա.

ԱՌ, այ. — ճշաց կինարմատը, վալր զցեց ձեռքից սանրը,  
ցատկեց կրակի մօտ դրած նստարանի վրա և սկսեց շտապով  
իր ծամերը հիւսել, որ մուկիկը նրանց վրայով վեր չը  
բարձրանայ:

Իսկ կատուն ոստնեց իսկոյն ու բռնեց փոքրիկ մկանը.  
Եւ կինարմատն ասաւ.

— Հարիւր անգամ շնորհակալ եմ քեզնից. Մինչև անգամ  
առաջին ընկերն էլ այնքան արագ մուկ չի բռնում, ինչպէս  
դու: Այդ ինչ ճարպիկն ես եղել:

Նոյն ըոպէին, նոյն վայրկեանին էր, որ խարոյկի մօտ  
դրած կաթի ամանը ճաքեց, չը խկ, որովհետև յիշեց կատւի  
հետ կապած պայմանը. Եւ երբ կինարմատը նստարանից  
վայր թռաւ, կատուն արդէն իրեն համար գլուխը կախմած  
լակում էր տաք սպիտակ կաթը:

— Օ, իմ թշնամի և իմ թշնամու կին, — ասաւ կատուն. —  
դու ինձ գովեցիր և ես կը մամ սրանից յետոյ այս այրում,  
կը պառկեմ տաք խարոյկի մօտ ու կը խմեմ տաք սպիտակ  
կաթը. Բայց ես դարձեալ այն կատուն եմ, որ ման է գալիս  
ինքնազլուխ, և ամեն տեղ ինձ համար մէկ է:

Շատ բարկացաւ այս խօսքի վրա կինարմատը, բայց  
ոչինչ պատասխանել չը կարողացաւ:

Է.

Երեկոյեան, երբ մարդն ու շունը վերադառն այրը,  
կինարմատը պատմեց նրանց իր և կատւի մէջ կապած պայ-  
մանը, իսկ կատուն նստել էր կրակի մօտ ու մռմռում էր:

Այն ժամանակ մարդն ասաւ.

— Այդ բոլորը շատ գեղեցիկ, միայն ինձ հետ ոչ մի պայ-  
ման չի կապել նա:

Ասաւ, հանեց զոյգ կաշւէ ոտնամանները, վերցրեց քա-  
րէ կացինը, բերեց իր ձեռքի փայտը, շարեց և ասաւ.

— Հիմա մենք մեր պայմանը կապենք: Եթէ դու այրի  
մէջ միշտ մուկ կը բռնես, ես այս չորս իրերից մէկը քո ետեից

կը շպրտեմ. և իմ ընկերն էլ ամեն պատահելիս քեզ կը կծի:  
կատուն համրեց չորս իրերը, համրեց շան սուր ատամ-  
ները և ասաւ.

— Ես միշտ մուկ կը բռնեմ այրի մէջ այստեղ եղած ժա-  
մանակս, և դեռ ձեր երեխայի հետ էլ կը խաղամ. Բայց ես

դարձեաւ, այն կատուն եմ, որ մաս է գալիս ինքնագլուխ  
և ամեն տեղ ինձ համար մէկ է:

Մարդը սաստիկ բարկացաւ այս խօսքի վրա, շպրտեց  
կատւի ետեից իր փայտը և երկու ոտնամանները, կատուն  
գուրս պրծաւ այրից, շունն էլ ընկաւ ետեից և փախցրեց ծառի  
վրա:

Եւ այն օրից դէսը հինգ տղամարդից երեքը կատւին պա-  
տահելիս մի բան շպրտում են նրա վրա և բոլոր իսկական  
շները փախցնում են նրան ծառի վրա. Բայց կատուն էլ իր  
պայմանի համաձայն կատարում է իր տւած խօսքը: Նա մուկ  
է բռնում և սիրալիր է սանուկների հետ, եթէ նրանք իր պո-  
շից այնքան էլ ամուր չեն քաշում:

Այդ բոլորը նա անում է, բայց և մէջէմէջ, լուսինը ծա-  
գելիս, գնում է խոնաւ վայրի անտառները կամ մազլցում է  
խոնաւ վայրի ծառերը, բարձրանում է խոնաւ վայրի կը-  
տուքները, շարժելով իր վայրենի պոչը վայրենի մենակու-  
թեան մէջ, և ման է գալիս ինքնագլուխ:

Գրի ը՝ ինչպէս կինը գտաւ քարայրը, ինչպէս սարքեց եւ ինչպէս  
կերակուր էր պատրաստում:

Գրի ը՝ իրար ետեից՝ կինը ամեն մէկի հետ ինչպայման կապեց.  
Պատմի ը՝ ինչպէս եկաւ ողիարը, ինչպէս եկաւ խոզը մարդու  
մօտ եւ ինչ պայման կապեցին նրա հետ, կամ այն ու էշը:

Պատմի ը՝ ինչպէս էին ապրում մարդն ու կինը այս բոլոր  
կննդանիները ընտելացնելուց յետոյ:

Կոյտ—դիզւած երեր:  
Խարոյկ—մեծ կրակ,  
Համեմ—համ տալու համար կերակուրին տւելացրած բռւսեղէն.  
Համեմել—կերակրին համ տւող բռւսեղէն խառնել.  
ուղերւել—ճամփա ընկնել, զնալ. արմատը ուղի. Ուղերւ. ճամ-  
փարդ.

մազլցել—մազիներով ծառ կամ մի ուրիշ աեղ բարձրանալ:  
1. Ի՞նչ տառ է իր գլխատէր կատուն, ինքնագլուխ ման էր  
գալիս:  
2. Ծածուկ—ուրիշ ինչէս կասես: Իսկ առանձնութիւն.  
3. Մի զիրկ, մի բուռ, մի պտղուց, մի շալակ—ինչքան է:  
4. Սմբակ, կճղակ, եղունգ, թաթ—որանցից մը, որ կեն-  
դանուն է:

## 48. Փակւած ու ազատ

Փակւած վանդակում  
սօբակ էր երգում,  
նրա երգերից  
լաց-ողբ էր լըսում:

Բերկրանք—ուրախութիւն, ցնծութիւն:

Ազատ երկնքում  
ծիծառ էր թըռչում,  
նըրա երգերից  
բերկրանք էր հընչում:

## 49. Արեւը մօտ

Մի անտէր երեխայ՝ ցնցոտիներ հագած կուշ էր եկել  
պատի տակ: Գարնան անուշ արեւը բարի աչքով նայում էր  
նրան:

Կարմիր արև, բարի արև, գուշ ես միայն ինձ տաքաց-  
նում, մտածում էր խեղճ մանուկը. գուշ ես միայն ինձ  
զգուում, համբուրում, ինչպէս երբեմն իմ անգին մայրս: Եթէ  
չէ մարդիկ ուշը չեն գարձնում վրաս:

Բայց կամաց կամաց արեւը թեքում էր կանաչ սարերի  
ետեր, երեխան կարօտով ու արցունքով նայում էր նրան,  
մինչև որ ոսկեհեր արեւը սահեց ու անցաւ սարի այն կողմը...  
Զէ, ես չեմ կարող առանց արեւի, վճռեց մանուկը,

ես պիտի երթամ արևի մօտ. ես գիտեմ ճամփան. այ, այս  
սարի ետեւը:

Վճռեց ու ճամփա ընկաւ:

բ.

Մութը իշնում էր և կանաչ սարը սևերով ծածկում,  
ճամփին մարզիկ էին հանդիպում և հեռուից ձայն ապլիս.  
— Եյ հէյ, ով ես դու:

— Ճամփորդ տղայ եմ, — պատասխանում էր երեխան:  
— Ուր ես գնում:

— Արևի մօտ. այ, այս սարի ետեւը:  
— Յիմար տղայ, — ասում էին նրանք ու հեռանում:

Բայց երեխան ուշը չէր դարձում. նա պարզ զգում էր,  
որ արևը այս սարի միւս երեսին է. մի քիչ էլ, մի քիչ էլ, ու  
կը լինի արևի մօտ:

Ու անփախ, վստահ քայլերով գնում էր վերև, բարձր,  
միշտ բարձր:

գ.

Բաւական ուշ էր արդէն, երբ լսեց մօտիկից շների հա-  
չոց ու տեսաւ՝ շատ մօտիկ կրակ է շողշողում:

— Ո՞վ ես, — լսեց խաւարի միջից մի ձայն. — Ուր ես գնում:  
— Անտէր ճամփորդ տղայ եմ. գնում եմ արևի մօտ. Ասա,  
որն է արևի ճամփան. մութն է, էլ սարերը չեմ տեսնում.

Ճրագը ձեռքին մօտեցաւ երեխային մի մարդ, նայեց  
նրան ու ասաւ քնքուշ ձայնով.

— Դու դադրած կը լինես ու քաղցած, գնանք ինձ մօտ:  
Ասաւ բարի անծանօթը, բռնեց երեխայի ձեռքից ու աս-  
լաւ տուն:

դ.

Նրա տունը մի հասարակ խրճիթ էր. մէջտեղում վառ-

ւում էր օջախը, որի շուրջը նստե, էին բարի մարդու կինը  
և երեք փոքր երեխաներ, որոնք համարեա հասակակից էին  
ճամփորդ երեխային. Խրճիթին կեց մի մեծ սրահում որո-  
ճում էին ոչխարները, նա հովիւ էր, սարի հովիւ.

— Սիրելի երեխաներս, ձեզ եղբայր եմ բերել, թող չը  
լինէք երեք եղբայր, լինէք չորս. երեքին հաց տւող ձեռքը  
չորսին էլ կը տայ. Սիրեցէք սրան, եկէք համբուրեցէք ձեր  
եղբօր ձեռքը:

Ամենից առաջ հովիւ կինը մօտ եկաւ, զրկեց երեխային՝  
և մօր պէս ջնրմ-ջեմ համբուրեց նրան:

Երեխան իր սրտում մի քաղցը տաքութիւն զգաց, և նը-  
րան այնպէս թւաց՝ թէ արևը հէնց ուղիղ խրճիթի վերևն է  
գառուում:

ե.

Ուրախութիւնից լաց եղաւ, անուշ-անուշ լաց եղաւ և  
պատմեց իր զիսի եկածները:

Յետոյ օջախի առջև սեղան նստեցին. կերան, խմեցին, ծի-  
ծաղեցին. Մայրը նրանց համար անկողին շինեց և ամենքին  
քնեցրեց իր կողքին, Երեխան շատ էր յոզնած, տեղը մտաւ  
թէ չէ, իսկոյն աչքերը խփեց ու քնեց...

Երազի մէջ ժպտում էր ուրախ:

Իրու թէ ինքը արևի մօտ էր, զրկել էր նրան ամուր ու  
պառկել էր նրա գրկում, տաք ու երջանիկ...

Մէկ էլ սրտի ուրախութիւնից վեր թուաւ, զարթնեց ու  
տեսաւ, որ արևի փոխարէն իր նոր զօր գրկում էր. Եւ նրան  
թւաց, որ արևը ոչ թէ այս խրճիթի վերևն է, այլ հէնց այս  
խրճիթի մէջ, որ ինքը ուղիղ հէնց արևի գրկումն է...

Այս պատմածքի մէջ ո՞ն է հոգու արեւը եւ ի՞նչու:

Գրի ո՛ տղան ի՞նչ էր որոնում սարում, ում հանդիպեց եւ ո՞րտեղ  
գտաւ իր ուզածը:

ցնցոտի—հին, պատուտած հագուստ:  
սահել—պլալ, գետնին քաւելով առաջ գնալ.  
համարեա—զըեթէ:

1. Աւքիշ կերպ բնչպէս կասես՝ խաւար, դաղրած, քաղցած,  
երեխայ, խրճիթ, օջախ, կից:

2. Մը կենդանին է որոճում, մը կենդանին է ծամում:

3. Հաշել—հաշոց, ոռնալ—..., ծլւալ..., մլաւել—..., կրոկր-  
ռալ—..., գոռալ—..., ծրւա... ճոճռալ..., սուլել.... Այս բառերը  
ինչ տեսակ գործողութիւններ են ցոյց տալիս. Ոց մասնիկը ինչ միտք  
(իմաստ) է տալիս:

## 50. Հական

ա.

Լաւ չեմ յիշում, թէ որ դարում,  
հին ժամանակ, մեր աշխարհում  
ասում են թէ կար մի իշխան.  
մի մեծ իշխան, էնքան ուժեղ,  
որ թէ մարդիկ նրա աշքում,—  
թէ հասարակ ճանձ ու մը ժեղ.  
ինչ որ անէր ու կամենար,  
օրէնք էր էն երկրի համար.  
ով էր զբախից ձեռ վեր կալած,  
ով դուրս կը գար նրա դիմաց:

Ու մի անգամ էս իշխանը,  
երբ նստած էր իրեն տանը,  
լեղապատռ ներս ընկաւ տուն  
իր հօտերի վերակացուն.  
—Ապրած կենաս, մեր տէր, իշխան,  
հապա, էսպէս հրաշք մի բան.  
Արածում էր ծովի ափին

բազմութիւնը քո հօտերի,  
մին էլ տեսնենք՝ ծովի միջին  
մի վիթխարի մարդ է գալի.  
Մի վիթխարի մարդ եմ ասում,  
որ մենք իր մօտ լու ենք չնչին.  
ծովը մինչև ծունկն է հասնում,  
իսկ գլուխը ամափի միջին  
Եկաւ կանգնեց մեր հանդիման  
ու որոտաց ամափի նըմ ան.  
«Ո՞վ է, ասաւ, էսպէս բերում  
թողնում ապրանքն իմ հանդերում.  
կորէք իսկոյն, աւազակներ,  
ձեռը քանի չի հասել դեռ....»:  
Ու անճունի աժդահակը  
էն ամպերից ցած կը ռացաւ,  
ձեռը կոխեց ծովի տակը,  
դուրս հանեց մի ձուկն ահազին  
ու դէմ արաւ արեգակին,  
որ խորովի...—Հազիւ էսքան  
պատմեց հովիւն իշխանական  
ու վէր ընկաւ, շունչը վիշեց:

Խիստ զայրացաւ իշխանը մեծ.  
—Ո՞վ է, ասաւ, համարձակւել  
իմ տէրութեան սահմանն եկել  
ու էզպէս էլ վըրէս հաշում.  
ինձնից ուժեղ չեմ ճանաչում  
ես ոչ մի տեղ և ոչ մէկին...  
էսպէս ասաւ ու զայրազին  
հըրամայեց զօրքերը գան.  
Հըրամայեց՝ զօրքերն եկան.

փող փըշեցին, թըմբուկ զարկին,  
շըրըխկոցով, զըրընգոցով  
ճամփայ ընկան դէպի մեծ ծով:

բ.

Հասան, տեսան—այ քեզ հսկայ,  
զլուխն էստեղ, ոտներ չը կայ.  
զընա, զընա, թէ որ գտնես...  
երկար ու մին ձբգւած ևսպէս,  
հսկայական քընով քընած:  
էստեղ, էստեղ զիրքեր բրոնած՝  
զէս չոքեցին, զէն պառկեցին.  
հա զարկեցին ու զարկեցին.  
տեսան տեղից ժաժ չի գալի.  
խըռմփում է զարուհելի.  
խըռմփուցից ինչ է խօսում.  
մարդիկ իրար ձէն չեն լըսում:  
Մօտ զընացին էլի, էլի...  
Դարձեալ տեղից ժաժ չի գալի



Կամաց-կամաց սիրտ առնելով,  
գոռգոռալով, հարայ տալով,  
դուրս թափւեցին թաքուտներից,

ելան վըրէն, դէսից, դէնից,  
որը ոտին, որը լանջին,  
որը ըթին, որն ականջին,  
փորի վրա, միրքի միջում  
ձի են խաղում, նիզակ ճօճում,  
զարկում, զարկում,  
ձբգում, թըքում,  
հայհոյում են էսպէս, էնպէս...

Մին էլ հըսկան էն սարի պէս  
վըրայ նստեց, մեծ, ահարկու.  
ինչ պատահեց—ոչ տեսնես դու։  
Հազարներով մարդն ու իր ձին  
տակովս եղան, կոտրւեցին.  
որն էլ գլխից, ըըթից, լանջից,  
կամ ուսերից, կամ ականջից  
ներքև ընկաւ, թէ մարդ, թէ ձի,  
նըրա օրն էլ դու իմացի։

Շատ զարմացաւ հըրէշ հսկան,  
թէ, Տէր Աստւած, արդեօք էսքան  
մանր-մունր ինչ բաներ են,  
որ եկել են թափւել վըրէն։  
Տեսաւ, ինչ որ կենդանի կան՝  
զազ են տալի, թէ ետ զնան.  
բուռն առաւ իր բռնովը մեծ,  
իրար խառնեց, ողջ հաւաքեց,  
գըրպանն ածաւ  
ու վեր կացաւ,  
լընզընզաէն, իրիկունը,  
զընաց հասաւ իրեց տունը։

գ.  
Տանը իր պէս մեծ, ահագին  
մի մէր ունէր, բարի մի կին։

Գընաց իրեն մօրը պատմեց,  
թէ իրեն հետ ինչ պատահեց,  
ու գըրպանից հանեց բոլոր  
ահից խելառ ձին-ձիաւոր.  
Բարի կինը հէնց որ տեսաւ,  
—Աման, որդի, վայ ինձ, ասաւ.  
Ինչ ես անում էտ խեղճերին,



բա չես տեսնում, թէ քո ձեռքին  
ոնց են զողում. Ասենք մեծ ես,  
միթէ պիտի փոքրին տանջես.  
Մեծ թէ փոքր, ինչ էլ լինի,  
ամեն ապրող շունչ, կենդանի,  
որ ծնւել է արևի տակ,  
էս աշխարհում միատեսակ,  
մինը պակաս, միւսը աւել,  
ողջ էլ զիտեն խնդալ, ցաւել.  
Զը պարծենայ երբէք ոչ ոք,  
թէ ինքն անյաղթ մի բան է ջոկ.  
միշտ ուժեղից ուժեղը կայ,  
իսկ ամենից ուժեղը՝ մահ...  
Բաց թող, որդիս, բաց թող՝ զընան,  
ապրեն ազատ ուր կամենան.  
Ու հընազանդ մօր խըրատին,  
իսկոյն հանեց հսկայ որդին  
իր գըրպանից ձին-ձիաւոր,  
իրար խառնած զօրքը բոլոր,  
թողեց գընան  
ուր կամենան.

Նկարագր միայն հսկային, այսինքն նրա կերպարանքը,  
ման զար, ուտեն ու քննել:

հսկայ — աժդահա, ահագին մարդ:

դար — հարիւր տարի:

բազմութիւն — շատութիւն: Բազում — շատ:

վիթխարի — աժդահա, շատ մեծ:

զայրագին — զայրացած, սաստիկ բարկացած:

խելառ — խելքը կորցրած, խելագար:

աման (թուրք.) — վայ:

խնդալ — ուրախանակ:

1. Երբ են լեղապատառ լինում:

2. Ուրիշ բնչպէս կասես — դէմ արաւ արեգակին, ով է գրւ-  
թից ձեռ վեր կալած. երկար ու բարակ ձգւել:

## 51. Ծիլն ու ապառաժը

Լերկ ապառաժի տակ, երկու բարի մէջ, վաղ գարնոն  
բումել էր մի սէզ, մի պարզ, հասարակ փոքրիկ խոտի շւտ:  
Օրօրւում էր նա նոր ծագող լոյսի մէջ ցօղով փալլիք-  
լուն, յանկարծ աչքն ընկաւ ժայոի մութ ճեղքին և նկատեց  
այնտեղ նոր ելած մի ծիլ:

— Այ, — գոչեց նա, — զու ով ես, որտեղից եկար:

Ծիլը, որ արդէն կէս մատնաշափ կար, ցած նայեց, տե-  
սաւ գտիտ սէզին ու առաւ.

— Բարե, բարեկամ, միթէ ուրախ չես, որ քեզ ընկեր եկայ:

— Օ, ուրախ եմ, սաստիկ ուրախ, բայց ով բերաւ քեզ,  
և ինքդ ով ես:

Ծիլը ժպտաց. ժպտաց, օրօրւեց ու այսպէս երգեց.

Ծառի ծիլն եմ ես,

ելայ անտառից,

բամու թնովը

թոայ դաշտերից,

անցայ սար ու ձոր,

եկայ քեզ դրկից:

Յետոյ երգը կտրեց ու հարցրեց.

— Իսկ դու ով ես. ընկեր, դու որտեղից եկար.

— Օ, — ասաւ սէզը, — ես ծնւել եմ այստեղ, իմ մօր կը քը, մտել եմ հողի մէջ, ընել ձմեռը, այժմ դուքս եմ եկել, եղել տանս տէր:

— Դու ուրեմն տուն-տեղ ունես այդտեղ.

— Ունեմ. մի կտոր հազ. շատ պահանջկոտ չեմ.

— Տեսնում եմ: Իսկ իմ տեղը չափազանց նեղ է և ես ստիպւած եմ բոլոր ուժս գործ գնելու, քարի կուրծքը մտնելու, որ տեղս քիչ լայնացնեմ:

— Եւ կարողանում ես, — հարցրեց սէզը զարմացած:

— Դժւար է. բայց ուրիշ ճար չը կայ. թէ չէ կը մեռնեմ: Իսկ ես ապրել եմ ուզում:

#### Բ.

Եւ ծիլն աշխատում էր աշխատում էր մեծանալ, ու ժեղանալ ու քարից իրա համար տեղ խլել. նա աշխատում էր անվերջ, անդադրում, գիշեր ու ցերեկ, անկոտրում յամառութեամբ:

Ու այգպէս ամիսներ, տարիներ, շատ-շատ տարիներ:

Չմեռը ընում էր, կազդուրւում, իսկ երբ գարունն էր գալիս, ենում էր աշխուժ, նոր ուժ ստացած արմատները մեկնում, գործը սկսում:

Երբեմն սնունդը քիչ էր լինում. բամիների բերած հողն ու փոշին հերիք չէր անում, երբեմն ամառները անձրմներ չէին գալիս, քիչ էր մնում յուսահատւի ու շորանար:

Բայց նորից նոր սիրտ էր առնում: Էէնց որ քիչ կազդուրւում էր, նուրբ ու քարակ արմատները խրում էր, խրում ու աւելի-աւելի խորքերը գնում:

Եւ ինչքան արմատները տեղ էին գրաւում, այնքան բռնը ամրանում էր ու հաստանում, այնքան էլ նա հպարտ գըլուխը վեր էր բարձրանում դէպի երկինքն ու դէպի արևը...

— Տես բարձր, բարափի ծայրին, տեսնում ես այն սաղարթախիտ, խոշոր ու հսկայ ծառը:  
Նախկին ծիլն է: Նա յաղթել է արդէն. նա ապրել էր ուղում և կապը:

Գրի ընչափս ծիլը ծառ դարձաւ:  
Պատմ ի ընչափ ծիլի կեանքը ծնած օրից մինչեւ շորանալը:

Լերկ—մերկ, անբոյս, անմազ:  
ապառաժ—խոշոր ժայռ:  
սէզ—քարակ խոտ:  
շիւղ—չոփ (թուրք.): խոտի, ծղօտի շատ փոքրիկ կտոր:  
վախտ—նիհար, քարակ:  
զրկից—դրացի, հարեան:  
կազդուրւել—կորցրած ուժերը ետ ստանալ, առողջանալ, ամ-

բանալ:

մեկնել—ձգել:  
գրաւել—խլել, տիրանալ, վերցնել:  
սաղարթախիտ—խիա սաղարթ՝ ունեցող:  
սաղարթ—ծառի բոլոր տերեները միտսին առած:

1. Մատնաշափ, ոտնաշափ, թղաչափ—ցոյց տուր այս չափերը:
2. Պահանջկոտ, վախկոտ, բարկացկոտ, ամաչկոտ—այս բառերը ինչ մասնիկով է վերջանում և այդ մասնիկը ինչ իմաստ է տալիս:
3. Անդազրում, անկոտրում—ուրիշ ինչպէս կասես:
4. Նորից նոր—ինչ ասել է:

## 52. Սունկի ծնունդը

Գիշեր է խոր:

Մենակ կըլոր

լուսնեակը չի դեռ քընած.

գնում է նա, նայում է ցած,  
ցածում ահա մութ ծըմակ,  
մութ ծմակում, կոճղի տակ,  
չոր տերևն է ժաժ գալի —  
սունկն աշխարք է դուրս գալի:

### 53. Զատիկ

— Զատիկ, Զատիկ, — լսում ես ամեն կողմից:

— Զատիկը գայ, զարունը բացւի, ծառերը ծաղկեն, քեզ  
համար նոր շորեր կարեմ, — յոյս է տալիս մայրը իր սիրասուն  
զաւակին:

— Զատիկը կը գայ, օրերը կը քաղցրանան, շուտով կա-  
պողջանաս, մայրիկ ջան, — միսիթարում է աղջիկը հիւանդի  
անկողնի կողքին նստած:

— Զատիկը գայ, օրերը ջերմանան, ձեզ հետ միասին գը-  
նանք հանդը, վարենք, աշխարհը լիացնենք, իմ սեռուկ գոմշու-  
կըս, իմ պոչը ծաղիկ եզներս, — փաղաքում է գիւղացին իր  
հաստավիզ լծկանների մարմինը քորելով:

— Զատիկը կը գայ, դաշտերը կը կանաչեն, ծաղիկներով  
կը զարդարւեն, կերէք անուշ խոտը, տըռեցէք ու առատ կաթ  
տւէք, — սիրտ է տալիս խաշնարածը թէ իր հօտին, թէ իրեն.

— Թող մի Զատիկը գայ, պինդ-պինդ ձւերը ջոկենք, ներ-  
կել տանք, շխկացնենք, կուեցնենք, — օրեր են համարում մա-  
նուկները:

Մարդ չը կայ, որ Զատիկ չը կանչի. Ամենքը սպասում  
են նոր կեանքի, նոր յոյսերի, նոր ուրախութեան ու բնու-  
թեան նար զարթնումին:

Հը - հը՝ դէհ, մեծ պասը գլորւեց. Էլի միայն երկու շա-  
բաթ, մի շաբաթ. առ քեզ Ա.ագ հինգշաբթին, Աւագ ուրա-  
թը և ահա արդէն իւղահոար քթներիս դիպաւ. Նաւակատիկն է.

Մեր զրացի ազգերը դեռ մի գիշեր էլ պիտի լուսացնեն,  
կիրակիի սպասեն՝ Զատիկը տօնելու, իսկ մենք, հայերս, շա-  
բաթ օրը, ճաշը թեքւեց թէ չէ. տալիս ենք իրար կեանքի  
զարթնումի, Քրիստոսի յարութեան մեծ աւետիսը.  
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Դըիթ ինչի է սպասում Զատիկի գալուց յիսոյ տղան, հիւանդը,  
պիտղացին, մանուկները, տաւարն ու հօտը,  
Պատմիք՝ դու էլ սպասում էիր Զատիկն. Զատիկը քեզ ինչ ըերաւ.

սիրասուն — սիրելի:

հանդ — դաշտ ու արօտատեղ:

լիացնել — կշտացնել, բարութիւնով լցնել:

տողել — գերանալ, հաստանալ. տոռուզ — հաստ ու գեր. լիքը:  
նաւակատիկ — այն օրերը երբ արգելում է միս սւաել, իսկ  
նացած ուտեսեղէնը թոյլարւած է.

աւետիս — բարի լուր:

խաշնարած — հովիւ. խաշն — ոչխար:

1. Ի՞նչ ասել է. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց». Ի՞նչ լեզով  
է և այդ լեզովն հիմա որտեղ ենք գործածում:

2. Հօտ և հոտ, հեռու-հերու, ցող-ձող — ի՞նչ տարբերութիւն  
ունեն. Ասա մի քանի օրինակ, ուր այդ բառերը գործածւած լինեն.

### 54. Գարուն առաւոտ

Բարի լուսի զանգեր զարկին  
զընզընզալէն անուշ, անուշ.  
լուսը բացւեց մեր աշխարհին  
ճըղճըղալէն անուշ, անուշ.

Հովտում առան խոխոջում է  
գըլգըլալէն անուշ, անուշ.  
քամին բարակ շընկընկում է  
զըլզըլալէն անուշ, անուշ:


Կոռւնկն եկաւ երամ կապած  
կըռկըռալէն անուշ, անուշ.  
կաքաւ քարին տաղ է կարդում  
կըղկըղալէն անուշ, անուշ.

Հարսն ու ազջիկ հանդերն ելան  
շորորալէն անուշ, անուշ.  
ծաղկանց բուրմունքն անմահական  
սըլսըլալէն անուշ, անուշ.

ճըղճըղալ—ճիւղեր տալ, շողեր արձակել,  
շընկընկալ—հովի մեղմ փշելու ձայն:  
խոխոջալ—կարկաչել, գըլգըլալ:  
շորորալ—նազ անելով դէս ու դէն շարժւել, կոտրաւելով ման  
գալ, օրօւել:  
բուրմունք—հոտ, բոյր:  
անմահական—անմահութիւն տւող:  
սըլսըլալ—հովի սղալը, սահելը տերևների, խոտերի վրայով:

1. Զընգընգալէն—զընգընգալով, ճըղճըղալէն—ճըղճըղալով—այսպէս փոխիր և միւս նման ձև ունեցող բառերը այս  
տանաւորի մէջ:

## 55. Մայրը



Մի գարնան իրիկուն դռանը  
նստած զրոյց էինք անում,  
երբ այս դէպքը պատահեց:  
Եւ այս դէպքից յետոյ ես չեմ  
մոռանում էն գարնան իրի-  
կունը:

Ծիծեռնակը բուն էր շինել  
մեր սրահի օճորքում: Ամեն

տարի աշնանը գնում էր, գարնանը ետ զալի ու նրա բունը  
միշտ կպած էր մեր սրահի օճորքին:

Եւ գարունն էր բացւում, և մեր սրտերն էին բացւում,  
հէնց որ նա իր զւարթ ճիշով յայտնում էր մեր գիւղում ու  
մեր կտուրի տակ:

Եւ ինչ քաղցր էր, երբ առաւօտները նա ծըւրլում էր  
մեր երդկին, կամ երբ իրիկնապահերին իր ընկերների հետ  
շարւում էին մի երկար ձողի վրա ու «կարդում իրիկնամը»:

Եւ ահա նորից գարնան հետ նա վերադարձել էր իր բու-  
նը: Զու էր ածել, ճուտ էր հանել, ու ամբողջ օրը ուրախ  
ճշալով թռչում, կերակուր էր բերում իր ճուտերին:

Բ.

Ին իրիկունն էլ, որ ասում եմ, եկաւ, կտցում կերակուր  
բերաւ ճուտերի համար: Ճուտերը ճւճւալով գեղին կտուց-  
ները դուրս հանեցին բնից:

Էտ ժամանակ, ինչպէս եղաւ, նրանցից մինը, գուցէ ամե-  
նից անզգուշը կամ ամենից սովածը, շտապեց, աւելի դուրս  
ճգւցց բնից ու ընկաւ ներքի:

Մայրը ճաց ու ցած թռաւ ճուտի ետևից: Բայց հէնց էտ  
վայրկեանին, որտեղից որ էր, դուրս պրծաւ մեր կատուն,  
ճուտն առաւ ու փախաւ:

«Փիշտ, փիշտ», վեր թռանք ամենքս, իսկ ծիծեռնակը  
սուր ծղրտալով ընկաւ կատւի ետևից՝ նրա շուրջը թըսթըսա-  
լով ու կտցահարելով. բայց չեղաւ: Կատուն մտաւ ամբարի  
տակը: Եւ այս ամենը այնպէս արագ կատարւեց, որ անկա-  
րելի եղաւ մի բան անել:

Ծիծեռնակը դեռ ծղրտալով պտտւում էր ամբարի շուր-  
ջը, իսկ մենք երեխաներս մի-մի փայտ առած պտրտում  
էինք ամբարի տակը, մինչև կատուն դուրս եկաւ ու փախաւ-  
դունը լիզելով:

Ծիծեռնակը դատարկ կատւին որ տեսաւ, մի զիլ ծըզըր-  
աց ու թուաւ, իջաւ գիմացի ծառի ճիւղին. Այնտեղ լուս  
վէր եկաւ. Մին էլ տեսանք, յանկարծ ցած ընկաւ մի քարի  
կտորի նման. Վազեցինք, տեսանք՝ մեռած ընկած է ծառի  
տակին.

Մի գարնան իրիկուն էր, որ այս գէպըր պատահեց. Շատ  
տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանում ոչ այս գէպըր,  
ոչ այն գարնան իրիկունը, երբ ես առաջին անգամ իմացայ,  
որ ծիծեռնակի մայրն էլ մայր է ու սիրտն էլ սիրտ է՝ ինչ-  
պէս մերը:

Գրի ը ինչպէս եղաւ, որ կատոն ծիծեռնակի ծուտը տարաւ եւ  
մայրն ի՞նչ արաւ.

Այս պատմութիւնը այս գրքի որ պատմածին է նման. համեմատիր:

օճորք—առաստաղ.

պահ—ժամանտկ, ժամանակի մի որոշ մաս. Իսկ իրիկնապահ:

1. Զրոյց անել, խօսել, խօսակցել—ի՞նչ տարբերութիւն ունեն.
2. Օճորք, առաստաղ. տանիք, երդիկ, կտուր—մը որն է.
3. Կացահարել, թափահարել, ոտնահարել, հովահարել,  
կարագը հարել—ի՞նչ ասել է հարել.
4. «Իրիկնաժամ կարդալ»—ի՞նչ ասել է.
5. Ծիծեռնակը երբ է ծլւլում կամ ճուռղում և երբ է ծղրտում.

## 56. Գառն ու գալլը

Մի ամիկ գառ

իրեն համար

Ճուր էր խմում առւակից.

մէկ էլ դէմի ձորակից

գալն է կարում վերել,

խօսքին տալով այս ձեր.

—Էս ի՞նչ լլբութիւն,  
ի՞նչ յանդգնութիւն.  
այ դու վակնըոտ  
ոչխարի լակոտ  
դու ինչի՞ տէր ես,  
որ գաս գնչովդ,  
քթով-պնչովդ  
ջուրս պղտորես.  
բոնեմ գունչդ,  
կտրի շունչդ:

—Մի բարկանար, պարն գայլ

ձեզնից ցած եմ քանի քայլ,  
էնպա բան ես ասում որ...

—Ոուտ եմ ասում, համ, լղպնը,  
էս էլ եղաւ հերւանը.

շեմ մոռացել այն բանը,  
որ հէնց այստեղ, նոյն օրը,  
հայհոյեցիր իմ հօրը.

—Մի տարեկան դժու չը կամ...

—Է, եղբայրդ էր, անզգամ.

—Ես մի ծին եմ, մինուճար ..

—Խնամիդ էր անպատճառ,  
կամ մինոր ձեռ սլիզծ ցեղից,  
էլ ժաժ չը գաս քո տեղից:

Ձեր շների

հովիւների

ոխը քեզնից ես հանեմ,  
տես գլուխդ ինչ բերեմ  
ասաւ, հասաւ գառանը,  
առաւ, թռաւ անտառը.

ամլիկ—նորածին, փոքրիկ գառ:

լրբութիւն—անամօթութիւն:

փսինքոտ—որից փսլինք է վազում. փսլինք—բերանից վազած  
թուք, լորձունք, շողիք:

լղպոր—ձեից նոր ելած, նիհար ու խեղճ:

պիղծ—կեղտոտ:

յանդուգն—շատ համարձակ:

## 57. Սրտուտ տղան

ա.

Անձրեր մի քանի օր անդազար գալիս էր. Փոքրիկ վտակ-  
ները մի-մի հեղեղ էին դարձել ու փըրփըրալով, կատաղած  
ցած էին գլորւում լեռների վրայից. ձորերն ու կիրճերը  
դղրդում էին.

Երկաթուղու գծի մօտ կանգնած մի տնակում խաղում  
էին չորս տղայ բոլորն էլ գրեթէ իրար հասակակից:

— Դէհ, Սաքո, — կանչեց նրանցից մէկը, — ապա թէ քաջ  
տղայ ես, կանգնիր ոելսերի մէջտեղ. այս բոպէիս անցնելու  
է արագ գնացըր:

— Ինչու կանգնեմ, — պատասխանեց Սաքոն, — բան ու գոր-  
ծըս կտրեն է.

— Ի, վախկնա. պարծենում ես թէ ամռնքիցս քաջն ես:

Եւ երեք ընկերները սկսեցին ծաղրել Սաքօին, բայց նա  
ոչինչ չէր պատասխանում. Մի փոքր ժամանակից նրանք  
դուրս պրծան սենեակից՝ նայելու թէ ինչպէս կանցնի արագ  
գնացըր, իսկ Սաքոն ետևներիցը ձայն տւաւ.

— Աւելի լաւ է տանը մնացէք, Բան չունէք, անձրեի տակ  
գուր տեղը ինչ էք թրջւում:

Բայց յանկարծ լսւեցին սարսափելի աղաղակներ.

— Սաքօ, Սաքօ:

Տղան դուրս վազեց. Եւ իսկոյն նկատեց, որ մօտակայ կա-  
մուրջը սկսել է նստել. իսկ գնացըր հէնց այն է պիտի գար  
ու վրայով անցնէր:

— Կը գլորւի, անպատճառ անզունդը կը գլորւի:

Բոլորի սրտերը սաստիկ բարախում էին.

— Պէտք է շուտով մի հնար գտնենք գնացըր փրկելու,  
կանչեց Սաքօն. — Քանի ժամանակում կարելի է հասնել կա-  
յարանը:

— Կէս ժամից աւելի. այստեղից կարճ ճամփով չորս  
վերստ կը լինի:

— Արդեօք մէկից ձի չի կարելի ճարել.

— Զաղացպան Գիբորն ունի, բայց մինչև շաղացը բաւա-  
կան ճամփայ է:

— Յովսէփ, վազի գէպի շաղացը և փորձ մի կերպ կայա-  
ցան հասնես գնացըր դուրս գալուց առաջ. Արմօ, գու էլ ըշ-  
տապի գծի ճամփով, գուցէ կարողանաւ պահապանին իմաց  
տաս, որ գնացըր կանգնեցնի. Իւկ ես ու Զատին կը մնանք  
այստեղ. Եթէ գուք բան չանէք, մենք կաշխատենք կանգ-  
նեցնենք:

բ.

— Վաղուց է այսպիսի թոն չեմ տեսել, — ասում էր մերե-  
նավարը, որ կառավարում էր գնացըր:

— Ես էլ, — պատասխանեց օգնականը, — տես, ինչ հեղեղներ  
են սարերից թափւում:

Գսացըր վշշալով օձի պէս արագ սողում էր կատաղած  
գետի ափով:

— Առաջ նայի, — կանչեց մերենավարը, — այն ինչ պիտի  
լինի:


— Երկու երեխայ. ժամանակ են գտել ոելսերի վրա խա-  
զալու. Սուլի, որ հեռանան:

Մերենան սուլից. Արձագանքը խուլ կրկնւեց ձորերի պր-  
տոյտների մէջ.

Ճամփին կանգնած էին տղաները. պարզ էր, որ սպասում  
էին գնացըրն. Մէկը թաշկինակն էր թափ տալիս, աւելի և ա-

Ելի ուժով:  
—Այ, ես ձեր...  
— բացականչեց  
մեքենավար կա-  
տաղած:  
— էլի սուլի, էլի  
սուլի:

Անհանգիստ սու-  
լուցները կրկն-



«Ամ էին. Տղա-  
ներից մէկը փախաւ, բայց միւսը կանգնած էր ուղիղ երկու  
գծերի մէջ տնզը ու շարուն ակում էր թաշկինակը թափ տալ.  
—Շուտով տօրմագ, տօրմագ...—բացականչեց օգնակա-  
նը սարսափած.—Տէր-Աստւած, պառկեց հէնց ոելսերի վրա,  
պիտի ճիւլւի...Կամ խուլ է, կամ խելագար.

Թէև յոյս չը կար, սակայն երկուսն էլ շտապ-շտապ սկը-  
սեցին պտտացնել տօրմազը, որ գնացը կանգնի.

Միմիայն մի հարիւր, հարիւր քսան քայլ է բաժանում  
երեխային գնացքից:

—Աստւած իմ, արդեօք երեխան պիտի փրկւի՞:

Դ.

Գնացը իր թափից դեռ առաջ էր մզւում և աւելի ու  
աւելի մօտենում երեխային. Անդադար սուլոցները վախեցրել  
էին ճամփորդներին. բոլորն էլ սարսափահար խըռնըւում  
էին դէպի գլուներն ու պատուհանները. «Ի՞նչ կայ», —հարց-  
նում էին միմեանց:

Արդէն միայն մի քսան քայլ էր բաժանում ազային մա-  
հից, միայն մի տասը քայլ...Գնացը կանգառաւ տղայից եր-  
կու-երեք քայլ հեռու. Յանկարծ ուրախութեան մի բարձր ճիշ-  
դուրս պրծաւ մեքենավարի ու օգնականի կրծքից:

Մեքենավարը դուրս թերւեց և զայրացած աղաղակեց:

— Անպիտան...դէնը կորի՞:

Իսկ աղան ինելագարի պէս վեր թռաւ և ցոյց տալով դէ-  
պի կամուրջը՝ ասաւ.

— Քանդւել է...  
Ու խկոյն վախից և յուզումից ուժասպառ նորից ընկաւ  
գետին:

Ու զնորները գուրս թափւեցին վազօններից ու վազում  
էին դէպի մեքենան, աղաղակելով.

— Ի՞նչ է, ի՞նչ է:

— Կամուրջը քանդւած է, ահա մեր փրկիչը, —կանչեց մե-  
քենավարը յուզւած:

Ու բազմութիւնը խոնւեց ուշաթափ Սաքօի գլխին...

Վերևից անձրեւը շարունակ թափւում էր և լեռնային հե-  
ղեղները դղրդալով վիժում էին ցած, դէպի փրփրած ու կատա-  
գած գետը...

Գրի թը մնչպիսի եղանակ էր, ի՞նչ զնաս էր տել երկածողոն,  
ով առա գնացքի խորտակման առաջը:

Երեխայի՛ր որ զու ինքդ այդ գնացքի մէջ էիր. պատմիր տեսա-  
ծը եւ զզացածի:

ոելս (եւրոպ.) — երկաթուղարիծ:

տօրմագ (եւրոպ.) — անիւներ կանգնեցնող գործիք:

վիժել — ուժով դուրս թափւել, ցած թափւել:

բազմութիւնը խոնւեց — բազմութիւնը խառն, իրար գետ  
հաւաքւեց:

1. Հովիտ, ձոր, կիրճ — ի՞նչ արքերութիւն,

2. Ի՞նչ տսելէ բան ու զործս կտրել է, կամուրջը նստել է;

3. Հասակակից և տարեկից — ի՞նչ տարբերութիւն կայ:

## 58. Ճանձ

Խոնարհ ու հեղ  
մի յոգան եղ  
արօրն ուսին,  
ճանճը պողին,  
մի իրիկուն  
գալիս էր տուն.  
Մին էլ ճամփին  
մի ուրիշ ճանճ  
էն նստածին

ասաւ. «Տօ մանչ,  
էս եզան հետ  
որտեղից էտ»:  
Նա՝ ցից արած  
քիթը, ասաց.  
«Մենք որտեղից,  
վարում էինք,  
վարատեղից»:

Խոնարհ մարդ—ուրիշի առջև գլուխը ծռող, ուրիշի կամքին  
հեշտ յարմարւող մարդ, ճականդ, հլու։  
մանչ—տղայ։  
հեղ—ճամեստ ու մեղմ։

Արօրը գութանից ինչնվ է տարբերւում։

## 59. Թաւամազ Անդուն

Անտառի խորքում մի հսկայ ծառի փչակում մեղուները  
շինել էին իրենց փեթակը։

Փեթակի բազմաթիւ փոքրիկ խցիկները, որոնք մոմից էին  
ձռւլած, բոլորն էլ լիքն էին. նրանց մէջ կամ ոսկի մեղրն էր  
պահւած, կամ սպիտակ ձւերն էին, կամ թրթուրները իրենց  
պատեանների մէջ փաթաթւած։

Այդ պառեաններից մէկի միջիցն էր ահա, որ գուրս  
սողաց մանու՛ մեղման ու գլուխը հանեց բճիճոց։

Իսկոյն նրա գէջը վազեց գայեակ մեղուն։

—Օ՛, բարե՛ փոքրիկս, գալուստդ բարի. Էտ ինչ սիրուն  
ես, ինչ թաւ մազեր ունես, եկ՝ անունդ դնենք Թաւամազ։

Ասաւ ու սկսեց լիզել նրան. մաքրեց, յարդարեց ու տ-  
ռատ կերակրեց մօտի մեղրի պաշարից. Եւ երբ Թաւամազը  
լաւ կշտացաւ, գայեակը տարաւ նրան փեթակի գուռը։

Աստւած իմ, ինչ լոյս էր, ինչ պայծառ Թաւամազը իս-  
կոյն բացաւ թերը ու թռաւ թէ չէ՝ տեսաւ էր շուրջ կա-  
նաչ, անվերջ դաշտեր, իսկ վերևը մաքուր կապոյտ երկինք.  
և ինչ անուշ բուրում էին ծառ երն ու ծաղիկները։

Մեզուն սլացաւ և հրճւանքի պտոյտներ էր անում օդի  
մէջ։

ը.

—Եյ, բարեկամ, ինչ բանի ես այդտեղ, —հարցըց պա-  
ռաւ մեղուն։

—Զւարճանում եմ, —պատասխանեց Թաւամազը։

—Զւարճանում ես. թէ Աստւածդ սիրես, —  
հեգնեց պառաւը. Բոլորս այժմ աշխատում ենք,  
ինչ ըէֆի ժամանակ է. այդպէս առոյգ, այդպէս  
առողջ, մազերդ էլ այդպէս թաւ, ծաղկի փոշին  
իսկոյն կը կպչի. Թոի ետևիցս. ես քեզ կը սովո-  
րեցնեմ։

Մեծ մեղուն այնպէս արագ էր թռչում, որ  
Թաւամազը հաղիւ էր կարողանում ետեց հասնի։

Մեծ մեղուն շիտակ մտաւ մի ահագին կա-  
պոյտ ծաղկի բաժակը, սկսեց ծծել յատակի մեղ-  
րը. բաց ետևի ոտներին ու գնաց ծաղկի զեղին  
փոշու ամանների մօտ, վերցնում էր զեղին փո-  
շին ու քսում մեղրոտ ոտներին։

Թաւամազը նոյնն էր անում. Յանկարծ որ չը նայեց իրեն  
ու պառաւ մեղմին, ծիծազը պահել չը կարողացաւ. Երկուսն  
էլ կարծես գեղին վարափկներ էին հագել.

—Հը, հաւանեցիր վարտիկդ, —ասաւ մեծ մեղուն. —դէ,  
գնանք առւն։



Հազիւ էին փեթակ մտել, որ փեթակի բոլոր դայեակներն  
ու բանւորները վրա թափւեցին:


—Վայ, պահապաններ, օգնեցէք, վարտիկս կերան, վար-  
տիկս:

—Բան չը կար, քաղցած են,—ասաւ մեծ մեղուն:—Իէ,  
յաւ, բաւական է, ու դարձաւ միւսներին և առաջնորդեց թա-  
ւամազին շտեմարանը և ցոյց տւաւ, թէ ինչպէս պէտքէ ածի  
մեղը մոմէ բճիճների մէջ:

Ու թաւամազը դարձաւ մեղը հաւաքող: Յոզնեցող աշ-  
խատանք էր, ճիշտ է, բայց աշխատանք էր. և ինչ լաւ ու  
հարեւոր բան էր այդ աշխատանք ասւածը:

Դ.

Այսպէս էլ մի անգամ երբ թաւամազը բեռնաւորւած  
դաշտից տուն էր զառնում, տեսաւ փեթակի շուրջը մի ան-  
սովոր իրարանցում. լուում էր սաստիկ բզզոց ու մի սարսա-  
փելի գոռոց:



էր վրա տւեր նւ ինչ թշնամի. ինը՝ արջը:

Ետեի թաթերի վրա կանգնած, նա մըրմըրթալով ման էր  
զալիս ծառի շուրջը, իսկ առջնի թաթերով աշխատում էր  
համնի մեղը պահեստին:

Յանկարծ քաշեց, պոկեց ծառի կեղևի մի կտորը, որտե-  
ղից գուրս թափւեցին ներս մնացած մեղուները: Արջը մի

թաթով պաշտպանւում էր նրանց յուսահատ յարձակումից,  
իսկ միւս թաթը կոխում էր փեթակի եորքը, ուղ մեղը շան-  
մարանն էր, հանում էր դուրս ու սպահաբար կուլ տալիս  
անուշ ոսկեգոյն մեղը:

Եյս որ տեսաւ թաւամազը, էլ իրեն զսպել չը կարողա-  
ցաւ, կատաղած նետեց արջի վրա ու խայթեց ուղիղ աշըր-  
երջը մոնչաց սաստիկ ցաւից, թողեց փեթակը ու փախաւ:

Բայց խեղճ թաւամազը...իր զայրոյթից այնպէս խորն էր  
խայթել, որ խայթոցը մնացել էր աչքի մեջ: Խեղճը յանկարծ  
թուլացաւ, ընկաւ գետին իր նման նահատակների մօտ ու  
աչքը յաւիտեան փակեց:

Բայց մեռնելիս նա չէր զղջում իր արածի վրա. չէ որ  
փեթակի ազատութեան համար էր զոհել իր կեանքը, իր տան-  
համար, իր հայրենիքի:

Չէ որ՝ «ամենքը մէկի համար, մէկն ամենքի»:

Բացի փեթակից ուրիշ ինչ տեղ գիտես, ուր «ամենքը մէկի հա-  
մար են ու մէկն ամենքի»:

Գրի՞ ի՞նչպէս է արջը մեղը զողանում եւ միւսները ինչպէս  
ու պաշտպանում:

Պատմի՞ ի՞նչպէս որ թաւամազը ինքը կը պատմէր իր ծնուն-  
դը, իր աշխատանքը, իր կորու արջի հետ, եթէ կոփց կենդանի  
ազատուած լինէր:

Փչակ—ծառի բլւնի փուչ, փչացած տեղը,  
խուց—փոքը ու նեղիկ սենեակ:  
բճիճ—մեղը ահացի ամեն մի ծակոտին:  
գայեակ—ուրիշի երեխան պահող կին:  
յարդարել—կարգի բերել օրինակ մաղերը:  
հեղնել—թ թէ ծաղրով ասել:  
առոյդ—առողջ ու դւարթ:

շտեմարան—ամբար:

իրարանցում—անհանգիստ շարժում:

ագահ—աշքածակ:

յուսահատ—յոյսը կտրած:

զսպել—զահել, բռնել, սանձել:

նահատակ—մի լաւ բանի համար չարչարւող մարդ, մինչև  
մեռնող:

յաւիտեան—մշտապէս:

զղջալ—ափսոսալ:

Թվէ է կծում, թվէ խայթում, թվէ կճում:

## 60. Ծտի հարսնիքը

Ծիտիկները հարսնիք ունեն.

ճըզը՛ր վըզըր, ճըզը՛ր վըզըր.

պար են գալի, էլ քանի պար,

մէկի տեղակ հարիւր, հազար:

Հաւաքւել են խնամիներ,

հազս ու փեսայ, սանամէրներ,

կեսուր, կեսար, տեզերկնիկ,

մնակ չը կայ քաւորկնիկ:

թոէք, դէ թոէք,

գնանք բերենք:

Ծիտիկները հարսնիք ունեն.

ինչ զժոց է կազնու ծառին,

այգու պատին, կտրան ծէրին...

տաս չեն, քսան—հարիւր, հազար:

Միրդ են բերել մէրու ծառից,

կուտ են բերել ճամփաներից,

զարի, կորեկ՝ հանդ ու արտից:

Հարսը ասաւ—ողեո քիչ է, քիչ...

Թը՛ռ, դէ թոէք,

էլի բերենք:

Թմբլիկ Ծիտիկ, ինչ ես բերել:

Ինչ եմ բերել. ճաթ ու հաճար:

Բմբլիկ Ծիտիկ, ինչ ես բերել:

Ինչ եմ բերել. չաչ ու բանջար:

Բա դնւ, Պստիկ: —Զիր ու չամիչ:

Բա դնւ, Զստիկ: —Երեկ...մի քիչ:

Բա դնւ պստիկ սիրուն Ծիտիկ:

Ես...մոռացայ...բան չը բերի.

Թը՛ռ, դէ թոէք,

գնանք բերենք:

տեզը կամ տագր—ամուսնու եղբայրը:

կեսուր, կեսար—սկեսուր, սկեսար:

մէրի—անտառ:

ճաթ—կորեկի կամ սիմինդի հաց:

հաճար—հացաբոյս, ցորենի նման:

չաչ—կանաչ լօբու կեզեք:

## 61. Ալւանն ու Շրւանը

ա.

Մի լուծ եզն ունէինք մենք, մէկի անունը Ալւան, միւսինը՝ Շրւան, գեղեցիկ, ուժեղ, խոշոր ու խելօք, աննման եզներ: Իրար շատ նման, իրար շատ սիրող. հաւասար ուժով, հաւասար խելքով:

Երեք իրարից անջատ չեին լին: միշտ միասին էին՝ լըծած թէ արձակ, գոմում թէ դաշտում, միշտ միասին էին: Եթէ պատահէր, որ նրանցից մէկը ուրիշ եզան հետ լծւէր,

կամ չեր քաշի, կամ կը սեղմէր իր լծակցին, որ ստիպւած կը լինէին արձակել սրան. իսկ երբ իրազ հեռ էին լծած, զարմանալի բան, այնպէս էին քաշում, որ ոչ մէկի անիւր ճանապարհից գուրս չը դայ, ոչ մէկը քար ու խութի չը դիպչի.

Այնքան խելօք ու հասկացող էին, որ շատ անգամ բարձած սայլը առանց քշողի տանում էին վերստերով:

Բ.

Մի օր Ալւանը հիւանդացաւ. մեր ամբողջ տունը սուզփ մէջ էր. Շրւանը ոչ մի րոպէ չեր հեռանում հիւանդ ընկերս. Հից մենք շարունակ աշխատում էինք հեռու պահել, բայց միշտ վազում, գալիս էր ըներոջ մօտ, լիզում էր նրան ու տիսուր մզզում:

Չորրորդ օրը որ զարթեցինք, Ալւանը պառկած էր անշարժ՝ չարդախ պոզերը դէպի սրահը, ոտքերը չուած: Շրւանը կանգնած, բարձր բառաչում, լիզում էր նրան:

Լացով, սուզփ Ալւանին սայլը դրինք, տարանք հեռու թաղեցինք: Կաշին էլ չը քերթեցինք. հօրեղբայրս ասում էր.

«Մարդ իր եղբօր կաշին չի մաշկի»:

Երկու օր անցաւ. էս մեր Շրւանը ոչ արածում է, ոչ խոտ է ուտում, ոչ ջուր խմում. լզարեց, դարձաւ չոր սոկոր ու ինքն էլ հիւանդացաւ. Նրա հիւանդութիւնը երկար չը տե մեց. գալիս էր, նստում Ալւանի մեռած տեղը ու աշքերը պըլքած մզզում էր: Սրաներս կտրատում էր, տանել չեր կարելի. Ի՞նչ զեղեր ասես, որ չարինք, աղօթք ու մատաղ, օրինած ջուր ու աղ, էլ մաղ պտըտել, էլ գարի զցել բան դուրս չեկաւ:

Պատս տեսնելով, որ պէտք է մեռնի սիրուն Շրւանը, առաւ.

— Եկէկ, երեխէք, կամաց քշեցէք, տարէք, է, հեռու, քարափի փոսումը թողէք ու եկէք: Թող էնտեղ սատկի, աչք-ներս չը աեսնի:

Ետեից լայով քշեցինք, շատ հեռու տարանք: Ճակատը պաշեցինք, պոչի մազեց մի փունջ կտրեցինք իբրի լիշտակ. ծոցներս գրինք ու ետ դարձանք:

Առաւոտը... երբ վեր կացանք, Շրւանը պառկած էր սրահի առաջ, ճիշտ նոյն տեղը, ճիշտ նոյն ձևով, որտեղ Ալւանն էր մեռել:

Գրի օ Ալւանի մահը:

անջատ — առանձին-առանձին, զատ-զատ:  
խութ — հողից կամ ջրի միջից դուրս ցցւած քար:  
շարդախ պոզ — լայն ու բարձր կանգնած եղջւկներ:  
մզզալ — մեղմ, բարակ ձայն հանել:  
պլշել — անթարթ ու անմիտ հայեացքով նայել:  
յիշտակ — յիշելու համար, մտարերելու համար տւած կամ գեցրած մի բան:

Թժկել աղօթքով ու մատաղով, օրինած ջրով ու աղով, մազ պըլքատեցնելով ու գարի զցելով — ժողովրդական մնահաւատութիւններ են, այսինքն...

## 62. Գորտն ու կովը

Գորտը գորտին	«Քեռի. ապա
աստւ. «Քեռի,	տես, չը հասմաք:
հալա էսղին	— Նոյնն ես լոի,
մի ետ դառի...	շատ չեն գոռի:
տես, ուռել եմ,	— Հիմա մի տես:
փուքն առել եմ:	— Նոյնն ես, նոյն ես.
Ուղիղն ասա,	աշխարհ կանցնի,
կովին հասմաք:	եթէ գորտը
— Զնւր է, վերջ տուր,	կովին հասնի,
կովն ուր — դուր ուր.	«Էս հետ, բեսի»

—Թէկուզ մեռի,  
դու բաց աչքով  
չես դառնայ կով.

Գորտը ուռան,

հլա—դեռ:  
Էսդի—էս կողմը: Դի—կողմ.  
Փուքն առնել—սաստիկ ուռչել:  
Հքւել—մք դառնալ, ոչինչ դառնալ:

Ի՞նչ ասել է՝ բաց աչքով կով չի դառնայ:

Քքւեց նորից,  
Խիստ փուլք առաւ,  
ճաքեց զորից.  
Ով որ փքւի,  
նա կը չքւի:

### 63. Սուտլիկ որսկանը

Հօրս/կնունքով, մօրս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ  
ու վեց հոգով, թրով հրացանով որսի գնացինք, Հաղին էր, Հիւ-  
դին էր, Չատին էր, Մատին էր, հէրս էր, ես էի. գնացինք որսի...

Սարեր, ձորեր շիտակ գնացինք, որտեղ որս կար՝ սուս ու  
փու ո գնացինք, որտեղ ահ էր՝ կուզուկուզ գնացինք...

Գնացինք, գնացինք, շատ թէ քիչ, մին էլ տեսնենք երեք  
լին, երկու սը ցամաք, մընի մէջ էլ իսկի ջուր չը կայ.

Մին էլ ընը, մտիկ տանք որ էս անջուր լճում լողում  
են, ճըչում երեք հատ սպիտակ բադ. երկուսը սատկած են  
մին էլ կենդանի չէ.

—Հաղի, տնւր հա, տնւր:  
—Թէ՛ հրացան չունեմ.  
—Հիւդի, տնւր հա, տնւր:  
—Թէ՛ ես էլ չունեմ:  
—Չատի... Մատի...  
—Մենք էլ չունենք,  
Բա թնչ անենք.

Հօրս ձեռին կտրճ ու երկար, հասա ու բարակ մի փէտ  
կար. երեսն առաւ նշան գրաւ. մին էլ տրաք՝ կրակեց..  
նա կրակեց, ես զարկեցի. որ զարկեցի՝ փուեց էսպէս,—այ են  
թեզ հինգ գագ ու կէս...

—Հաղի, դանակ..  
—Թէ՛ դանակ չունեմ:  
—Հիւդի, դու...  
—Ես էլ չունեմ:  
—Չատի... Մատի...  
—Մենք էլ չունենք:  
—Բա թնչ անենք:  
Հէրս ունի, բերան՝ չունի:

Էս անրերան դանակը քաշեցինք. Հաղին մորթեց, չը կա-  
րաց. Հիւդին մորթեց, չը կարաց. Չատին չը կարաց, Մատին  
չը կարաց, հէրս էլ չը կարաց. Ես քաշեցի մորթեցի:

Մորթեցի, վէր գցեցի. բադ մի ասիլ—մի գոմէշ ասա.

Հաղին շալակեց, չը կարաց. Հիւդին շալակեց, չը կարաց.  
Չատին չը կարաց, Մատին չը կարաց, հէրս էլ չը կարաց, եւ  
շալակեցի. Շալակեցի, գնացինք:

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ. մին էլ տեսնենք  
երեք զեղ. երկուսի տեղն իսկի չի երեսմ, մընումն էլ իսկի  
շէնվիկ չը կայ: Էս անշէն զեղուժ դէս ման եկանք, դէն  
ման եկանք, մի տուն գտանք, մէջը երեք պառաւ, երկումը  
մեռած, մընի բերնումն էլ շունչ չը կայ:

—Տղերը,—ասինք,—եկէք բադով վլաւ անենք:

Էս անշունչ պառաւը գնաց զէս ման եկաւ, դէն ման ե-  
կաւ, կէս բրինձ գտաւ, երեք պղինձ. երկուսը ծակ, մին էլ  
իսկի տակ չունի:

Ջուր լցրինք էս անտակ պղինձը, մէջը ածինք բազն ու  
բրինձը, անկրակ եփեցինք: Եփեց. Եփեց. մին ու բրինձը զր-  
նացին, մասց ջուրը:

Որսից եկած սոված մարդիկ, վրա եկանք, կերանք, կերանք, ոչ աչքներս բան տեսաւ, ոչ բերաններս բան մտաւ.

Պատմի՞ բ ինչպէս կը պատմէր իսկական որսկանք:

գաղ—արժի՞ց աւելի չափ:  
շէնլիկ—շէն տեղ, բնակւած տեղ, շինութիւն:

1. Ի՞նչ տաել է հրացանը երեսն առնել, նշան դնել.
2. Դանակի մը մասն է բերանը. իսկ ծայրը, կոթու:
3. Պղնձի տակը, պղնձի պոռունգը, պղնձի ունկը, պղնձի գառը մը մասերն են:
4. Հօրս կնունքով—հօրս կնունքի ժամանակ. մօրս ծննդով—  
մօրս ծննդի ժամանակ:

## 64. Գորտն ու ազուր

Գորտն ընկաւ ցամաք առուն,  
կրոկըռում էր ու կրոկըռում:  
—Քիչ կրոկըռա, այ գորտ քեռի,  
աշուն կը գայ՝ ջուր կը բերի,—  
յոյս էր տալիս մի ծեր ազուր:  
—Է, ի՞նչ անեմ, սիրտս վառաւ,  
մինչև ցամաք առուն ջուր գայ,  
գորտի աշքն էլ հօ դնուրս կը գայ.

## 65. Ազուրների յարձակումը

Իրիկնաղէմին էր Ելայ ծառը սալոր ուտելու։ Բարձրացայ  
ամենաբարձր բարակ ճիւղերից մէկի վրա և սկսեցի բաղել  
կարմրին տւող, ճաքճքած, քաղցրահամ սալորները։

Յանկարծ տեսնեմ հարիւրաւոր ազուրներ զանազան  
կողմերից կուաւելով գալիս են դէպի սալորի ծառը Սալորե-  
նին, որ լուսաւորւած էր պայծառ արևի ճառագայթների  
տակ, մի ակնթարթում մթնեց։

Մէսև ազուրները հաւաքւեցին զլխիս, նստոտեցին  
սալորենու ճիւղերի վրա և սկսեցին կատաղի կերպով կուաւել,  
լայն-լայն բաց ու խուփ անելով իրեց կուցները։

Թոչում էին նրանք մի ճիւղից միւսը, պտոյտներ էին  
անում իմ զլխիս, մօտենում էին ինձ այնչափ, որ զգում էի  
ինչպէս նրանց թևերը դիպչում էին մազերիս։ Մի քանիսը,  
աւելի յանդուգները, շեշտակի յարձակում էին ու քիչ էր  
մնում աչքերս հանէին։

Ես իսկոյն հասկացար պատճառը։ Ծոռի վրա կար մէ  
ազուրի բուն, որի մէջ գտնւում էին նրա տգեղ ճուտերը,  
եւ ես կանգնած էի անմիջապէս ազուրի բունի տակ։ Սյդ  
ատելի, տգեղ, չարագուշակ թոչունները եկել էին ազ-  
տելու իմ ձեռքից իրենց ընկերոջ բունը, որիս վեաս տալը իմ  
մտքովը չէր անցնում։

բ.

Շփոթւած էի, թոյլ, մենակ, իսկ թշնամիներս կատաղի  
և բաղմաթիւ։ Շարժում եմ ճիւղերը։ Ազուրները աւելի  
զայրացած մի փոքր հեռանում են, բայց մինչև ես մի քայլ  
կանեմ դէպի ներքե, մինչև կը բոնեմ մի հաստատուն ճիւղ  
իջնելու համար, նրանք աւելի ես կատաղած, աւելի ես բար-  
ձրածայն կուալով յարձակում են վրաս։

Օգնութեան չեմ կանչում, հեռու եմ, ձայս չեն լիք։  
Շարժում եմ անդաղար ճիւղերը, միակ միջոցը, որով կարու-  
եմ պաշտպանւել։

Բարակ, վտանգաւոր ճիւղերը բանելով իշնում եմ, առանց  
նայելու թէ ուսու ուր եմ զնում, աչքս շարունակ դէպի վեր  
ուղղած։

Ագուաների կացահարած տերենները. նորք ճիւղերը  
անձրսի նման զըլիխ էին թափւում.

Վերջապէս այդպէս կոխւ մղելով կարողանում եմ իջնել  
այնքան, որ հասնում եմ հաստ և ամուռ ճիւղերին.

Ագուաների կարողութիւնն էլ քիչ մարում է. իրենց  
ընկերոջ բունը արդէն ազատւած համարելով, նրանք սկսեցին  
զրւել իրենց հեռաւոր բուները և աւետել ագուաւային աշխար-  
հին իրենց կատարեալ յաղթանակը.

Ես ծառի կէսից թուայ ներքև՝ զունատ, յոգնած. զողում  
էի ամրող մարմնով. ագուաների զուոցը զեռ ականջումս  
էք. Դողդողուն ոտներով վազեցի դէպի մայրս, ընկայ գիրկը  
և սկսեցի սաստիկ լաց լինել:

—Մայրէկ, ագուաները աչքերս հանում էին...

Դը ի՞ր մհայն այն, թէ ինչպէս աղջիկը բարձրացաւ ծառը և ինչ-  
պէս արագ իջաւ:

Երեսկայիր, որ ծառը բարձրացել է ոչ թէ աղջիկը, այլ մի  
կատու. պատմիր ինչպէս կը պատմէր աղջիկը:

Կուաւել—ագուաւի ձայն հանելլ, կուսալլ:

Չեշտակի—ուղիղ, նետի պէս:

Հարագուշակ—չար բան նշանակող.

Պայրանալ—բարկանալ:

Ժարել—հանգչել:

Աւերտել—ոի ուրախ բան յայտնել:

յաղթանակ—յաղթութիւն, աշողութիւն.

1. Քաղցրահամ, իրինաղէմ, բաղմաթիւ—արմատները  
հանիր և բացատրիր.

2. Կոիւ մղել—ուրիշ բնչ կերպ կասես.

3. Դողդողուն ոտ—դողդողացող, փայլուն արե—..., հնչուն  
ձայն..., գիտուն մարդ—..., կպչուն տերե—...

4. Գիտուն—հակառակիլ, տղէտ—գեղեցիկ, հասուն—...  
հաճալի—..., ձեւոր—..., Այս նախադաս տ մասնիկը բնչ է ցոյց  
տալիս:

## 66. Մայիսը

Ճամփայ տւէք, սար ու դաշտեր,  
ճամփայ բացէք էն հիւրին.  
նա բերում է ճագեր, թէ թեռ,  
նախշուն օրեր մեր երկրին.

Ալւան-չալւան գորգի վըրով  
տեսէք նվ է գալիս էս.  
նուշիկ-մուշիկ, նազ ու թուզով,  
սիրուն դէմքով ժպտերես:

Դուրս են գալի նրա առաջ  
գառնուկ, թոշնիկ. մարդ ծաղիկ.  
հազար գոյնի շորերը հագած,  
երգ ու տաղով գեղեցիկ:

Ճամփայ տւէք. ծառեր ու խոտ,  
մեր անուշիկ էտ հիւրին,  
նա մայիսն է ցողոտ-շաղոտ,  
ամիսների թագուհին:

ալւան-չալւան—գոյն. գոյն,  
նուշիկ-մուշիկ—անուշ-անուշ,  
տազ—երգ,  
շաղ—ցող:

1. Այլ ձեռվ ինչպէս կասես ժողովրդական ձևերը—գորգի վրով.  
սատանայ—սատանայք, տղայ—..., քահանայ—..., երեխայ—...,  
ճամփայ—...

2. Ինչպէս կասես այլ ձեռվ ժողովրդական այս հոլովները.  
բերնի—բերանի, ճակտի—..., քաղքի...:

## 67. Մեր կոռնկը

Մի ամառային երեկոյ հնձւորները հանդից վերապառնա-  
փս ճանապարհին գտել էին մի նոր փեռքաւորւած փոքրիկ  
կոռնկը. բերին և նւիրեցին մեզ Նա շատ խեղճ էր երեսում,  
բայց մենք այնքան հոգատարութեամբ խնամեցինք նրան, որ  
նա շուտով գեղեցկացաւ, հձտղհետէ հաշուեցմեղհետ ու ըն-  
տելացաւ նոյնիսկ բակի բոլոր կենդանիներին, մանաւանդ  
մեր փոքրիկ շանը. Երբ կուշտ ուտելուց յետոյ նա լաւ արա-  
մաղքութեան մէջ էր լինում, մօտենում էր շանը և պահան-  
ջում էր, որ իր հետ խաղայ: Եթէ շունը պառկած էր լինում,  
կոռնկը մօտենում էր նրան և սկսում էր կտուցով խուտուա-  
տար, իսկ նա եթէ տրամադիր չէր խաղալու, աշխատում էր  
հաշոցով նրան փախցնել, բայց կոռնկը չէր հեռանում,  
այնքան դառնում էր նրա շուրջը, խրփում էր մէկ գլխին,  
մէկ ոտքին կամ թէ չէ այնքան էր քաշում պոշիցը, մինչեւ  
որ տեղիցը կը հանէր և կը սկսէին խաղար:

Նախ ինքը կը վազէր, շունը նրա ետեից, իսկ յետոյ ինքը  
կանգնում էր և խփում էր շանը, որ նա վազի առաջ, իսկ  
ինքը հալածում էր նրան, և այսպէս խաղը շարունակում էր,  
մինչեւ երկուսով յոգնէին, կամ թէ չէ շունը, որ առհասարակ  
աւելի շուտ էր յոգնում, լուրջ բարկանում էր և արգէն ցոյց  
էր տալիս իր ատամները:

Իսկ երեկոները, երբ արեր մայր էր մտնում և ծառա-  
ներն էլ իրենց աշխատանքը վերջացրած գալիս նստում էին  
բակում ընկած մի գերանի վրայ և սկսում էին ծափահարել  
ու սուլել մի պարի եղանակ, կոռնկը գալիս էր, կանգնում  
նրանցից քիչ հեռու և սկսում իր պարը: Այնքան գւարձալի  
էր այդ պարը, շատ նման մեր գիւղական կլոր պարին, որ  
մենք ամբողջ ընտանիքով հաւաքւում էինք պատշպամը նտ-  
յելու և նոյն իսկ պառաւ տատիկիս քաշ էինք տալիս.

Նա գողարիկ ծոռւմ էր մի կողքի վրա իր երկար վիզը և  
իր երկար ոտներով պտաւում մի կլոր շրջան:

Բ.

Եկաւ օգոստոս ամիսը. նա արդէն սկսնլ էր քիշ-քիչ թոխչք-  
ներ անել, սկիզբը թոշում էր մինչև տանիքը, յետոյ սկսեց  
մի քիչ աւելի բարձրանալ, իսկ վերջը այնպէս էր բարձրա-  
նում, որ ներքնից հազիւ էինք նրան նկատում: Նա բարձրա-  
նում էր, մի կէս ժամի շափ օդի մէջ մոռւմ, նորից իջնում  
ներքի և իր սովորական կեանքը շարունակում աւելի ուրախ  
և աւելի ոգևորւած:


Մի օր էլ վերադարձաւ իր օդային զքուանքից, հետը բե-  
րելով մի ուրիշ կռունկ, ինչպէս ուրախացանք, որ նա իր հա-  
մար ընկեր էր բերել, բայց այդ ընկերը մի քիչ ոստոսեց մեր  
բակում և կրկին թուաւ վերև, բարձրից կանչելով նաև մեր  
կռունկին: Հետեւեալ օրը դարձեալ երեաց այդ կռունկը, և  
երկուսով թուան զնացին միասին. երեկոյեան մեր կռունկը  
նորից վերադարձաւ մենակ: Իսկ երբորդ օրը, երբ այտնւեց  
օդում նորից այդ ընկեր կռունկը, և մերն էլ ներքնից բարձ-  
րացաւ, նրանք սկսեցին թոշել դէպի վեր, վեր, այնպէս որ  
օդի մէջ հազիւ էին երեւում: Մենք վարից գիտում և նախան-  
ձում էինք նրանց. մի քանի գեղեցիկ շըշաններ գործեցին  
մեր տան զլիին և թուան, հեռացան:

Ու մեր կռունկը այլևս չը վերդարձաւ. երեխաներս շառ  
տիրեցինք: Մայրիկը մխիթարում էր, թէ գարնանը նորից Կը  
վերադառնայ:

Բայց յաջորդ գարնանն էլ կռունկը չեկաւ.

Գօնք՝ ինչպէս էր կռունկը շան հետ խաղում:

Պատմի այս պատմութեան շարունակութիւնը, եթէ կռունկի  
թօները կտրած լինէին:



## 68. Ճնճղուկներ

Կոտ ու կէս կորեկ ունեմ ցանելու համար,  
ճնճղուկներսթուան եկան ուտելու համար,  
կուցայ քարմվեր, առայ զարկելու համար:  
Դասաբներ դանակ բերին մորթելու համար,  
աղջիկներ թև բաշեցին փետրելու համար,  
պառաւներ պղինձ դրին եփելու համար.  
Դուռ-դրկից շուրջ բազմեցին ուտելու համար,  
տէրտէրներ խաչով եկան օրինելու համար,  
աշուղներ սաղով եկան գովելու համար:

Այ ճնճղուկիկ,  
կարմիր տոտիկ,  
սիպտակ փորիկ,  
ուտեն կուտիկ,  
խմեն ջրիկ  
տուի եղրիկ,  
պստեկ-մստիկ

փախչեն ե, թան ման գալու համար.

Քար որ վեր կալայ, քանի ճնճղուկ զարկեցի,  
Այնքան մարդ ի՞նչ պիտի մորթէին ուտէին:

Կոտ—ցորենի չոփ, փայտէ գոյլի նման:  
զասար—(թուրք.)ասւար, ոչխար մորթող:  
Եղր—ափ:

Եղր—եղրիկ, ջուր—ջրիկ, վոր—..., տոտ—..., ճնճղուկ—...,  
մատ—..., ոտ—..., թաթ—..., գլուխ—... Այս բառերի մէջ ի՞նչ  
մտանիկ ենք աւելացնում և ի՞նչի համար:



## 69. Սկիւռ

Սկիւռն անտառում շատ յաւ էր տպրում:  
Ի՞նչն էր պակաս, ընկոյզ տօես՝ շնտ... կաղին՝ ինչքան ու-  
գես... ջուրը որ՝ կայ ու կայ:

Անտառի տոմւն է պակաս, ճահիճն է պակաս: Խմիր ինչ-  
քան սիրտգ է ուղում: Սկիւռը նստում էր արեկող և իրան  
հոմար ապքանում: Ցրտելիս մտնում էր ծառի փշակը, թաղ-  
ուում էր լորենու տերևների մէջ և քնում: Ել ի՞նչ կուզէր Աս-  
պրծուց, տեղը և տաք էր, և փափուկ:

Զահէլ օրերը այսպէս անցկացրեց Սկիւռը: Ծերութիւնը  
վրա հասաւ և ամեն ի՞նչ շուռ եկաւ:

— Աի, — ասում էր Սկիւռը, — աշխարհը վատացել է, ել ա-  
ռաջւանը չէ: Արեգակն էլ ցրտել է, ել չի տաքացնում: Ընկոյ-  
զը պնդացել է, կոծել չի լինում, կաղինը որ Աստւած կորել է:  
Ման եմ գալիս, ման՝ մի պուտ ջուր աչքիս չի ընկնում. ա-  
ռուները ցամաքել են, ճահիճները չորացել: Զէ, աշխարհը  
վատացել է որ վատացել է:

Այս աշխարհը ինչո՞ւ է վատացել:


Գը թը՝ Սկիւռը անտառում ինչպէս էր ապրում:

Պատ մի թը՝ նոյնը մի մարդու մասին:

## 70. Զարի վարչը

1.

Ղինում է մի սար,  
Էն սարում մի ծառ,  
Էն ծառում փշակ,  
Փշակում մի բուն,  
Բրնում երեք ձագ  
ու վրէն Կըկուն։  
— Կուկու, կուկու, իմ կուկուներ.  
Երբ պիտի զուք առնեք թներ.  
թրոշեր, գընաք,  
ուրախանաք...  
Օրգում էր մարիկ Կըկուն։  
Մին էլ, ըհը՛, Աղւէսն եկաւ.  
— Էս սարը իմն է,  
Էս ծառը իմն է,  
ծառում փշակ կայ,  
Փշակում մի բուն,  
Էս նվ է եկել,  
տիրացել թաքուն։  
Ար, զու Կըկու, յիմար Կըկու.  
Քանի՞ փոքրիկ ձագ ունես զու.  
— Երեք հատ ձագ, աղա Աղւէս։  
— Երեք հատ ձագ ցոյց կը տամ քեզ,  
ու չես տել, զու անամօթ,  
մինը ծառայ զըրկես ինձ մօտ։  
Զըգի շուտով մի հատը ցած,  
Բէ չէ կացինս՝ երէն սըրած,  
գընամ բերեմ,  
ծառը կտրեմ...  
— Վայ, չը կարես,



Աստած սիրեն.

Էս մին ահա  
աար քեզ ծառայ,  
միայն թէ էտպէս  
մի ջընջի մեզ  
բնով-տեղով,  
ամբողջ ցեղով։

Խնգըեց մարիկ Կըկուն ու ձագերից մինը ձըգեց ներք։  
Աղւէսը հափ, առաւ զնաց։

— Վայ-վայ, դու-դու,  
իմ լաւ կուկու.  
Իր սև սարում,  
նր անտառում,  
նր թըգի տակ  
կորաբ մենակ...  
վայ-վայ, դու-դու,  
իմ լաւ կուկու...

2.

Լաց էր լինում մարիկ Կըկուն, մին էլ, ըհը՛ Աղւէսը ետ  
նկաւ։

— Էս սարը իմն է,  
Էս ծառն իմն է,  
ծառում փշակ կայ,  
Փշակում մի բուն,  
Էս նվ է եկել,  
տիրացել թաքուն։

Ախ, զու Կըկու, յիմար Կըկու,  
Քանի՞ փոքրիկ ձագ ունես զու.  
— Երկու հատ ձագ, աղա Աղւէս։  
— Երկու հատ ձագ ցոյց կը տամ քեզ.  
Ախ, չարամիտ, զու աւազակ,  
Բնչ խարար է, երկու հատ ձագ։

Ինչ, ուզում եռ՝ էստեղ դռագ  
 լցնես ամբողջ կըկուներնի...  
 Զըգի շուտով մի հատը ցած,  
 թէ չէ կացինս՝ հըրէն սըրած,  
 զընամ բերեմ,  
 ծառը կըտրեմ...  
 —Վայ, չը կտրես,  
 Աստւած սիրես.  
 Էս էլ առ տար  
 ու թող դադար.  
 վերջինը գէթ  
 մընայ ինձ հետ...

Աղաչեց մարիկ կըկուն ու երկրորդ ձագն էլ ձգեց ներքեւ.  
 Աղւէսը հափ, էս էլ առաւ ու գնաց:

—Վայ-վայ  
 վույ-վույ,  
 ինչի համար  
 եկայ ես սար,  
 բուն շինեցի,  
 ձագ հանեցի...  
 Աղւէսն եկաւ,  
 ապրաւ, կերաւ,  
 երկու-երկու,  
 կուկու... կուկու...  
 Լաց էր լինում մա-  
 րիկ կըկուն:



3.

Էս միջոցին, դա, դա, դա, Ագուան անց էր կենում էն  
 կողմերով. Լսեց կըկւի զացի ձայնը:

—Էտպէս տխուր ու զարհուրիկ  
 բնչ ես լալիս, կըկու քուրիկ  
 —Ի՞նչպէս չը լամ, ա սանամէր:

Աղւէսն եկաւ էն սըրտամեռ,  
 գըլխիս էսպէս փորձանը բերաւ,  
 ձագուկներս տարաւ, կերաւ,  
 —Վույիմ աչքին, անխելը կըկու,  
 Բնչպէս ի զուր խարւել ես գու  
 սուտ խօսքերից չար Աղւէսի:  
 Ո՞նց թէ սարը իմն է՝ կասի:  
 Ո՞վ է տըւել էն լըրբին սար.  
 սարն ամենքինս է հաւասար...  
 Ո՞վ կը թողնի՝ վեր կընայ նա,  
 ամբողջ սարին գայ տիրանայ,  
 անունը տայ ոըրած կացնի,  
 սրան, նրան սուտ վախեցնի,  
 ու մինն էսօր, միւսը երէկ,  
 ձագեր տպնի ուտի մէկ-մէկ...

Սև Գրողի էն տարածին  
 ով է տըւել սրած կացին:  
 Մին էլ որ գայ ու սպառնայ,  
 մի վախենայ, քըշի զընայ:

Էսպէս տսաւ Ագուան ու թուաւ գնաց. Աւա կըկին Աղ-  
 էսն եկաւ.

—Էս սարը իմն է,  
 էս ծառը իմն է...

Հաղիւ էք ասել, կըկուն բնից գլուխը հանեց.  
 —Սուտ ես ասում, զու խարեբայ,  
 անխիղճ գազան, անկուշտ, ագան.  
 Ո՞վ է տըւել էստեղ քեզ սար,  
 սարն ամենքինս է հաւասար.  
 Բնչ ես եկել, սուտ տէր դարձել.  
 ես էլ՝ յիմար, ճիշտ եմ կարծել,  
 ձագուկներս տըւել եմ քեզ...

Կորին, զընա, ոռւ չար Աղւէս,  
հերիք ինչքան սուտ ես խաբեր,  
հիմի գիտեմ, չեմ վախում էլ.  
կացին չունես՝ ծառը կըտես,

—Ո՞վ ասաւ քեզ?  
—Ազուան ասաւ.  
—Ազուը. լաւ:

4.

Ու ազուի վրա բարկացած Աղւէսը պոշը քաշեց, հեռացաւ. Գնաց մի գաղտում սուտմնուուկի աւաւ, վեր ընկաւ, իրը թէ սատկել է.



Ազուան էլ կարծեց՝ իրաւ ստոկել է, թռաւ եկաւ վրէն վեր եկաւ, որ աչքերը հանի. Աղւէսը հափ, յանկարծ բռնեց:

—Ղաղաղ, ղաղաղ,  
Աղւէս աղա...  
—Այ, դու կռաւան, չարալեզու,  
ոնց թէ կըկւին աօել ես դու՝  
թէ ես կացին չունեմ սրբած...  
կացին չունեմ... դէ, հիմի կաց...  
—Ղայ, քեզ մեղայ,  
Աղւէս աղա.

ես եմ ասել, չեմ ուրանում,  
ինձ քըրքըրի, ինձ կեր հում-հում,  
տուր՝ ինչ պատիժ սիրտդ կուզի,  
բայց մի վերջին խօսքս լրսի:  
Ես էն սարում, հէնց դէմ ու դէմ,  
էնպէս մի թանգ պահուստ ունեմ,  
որ չես գտնի դու քո օրում,  
ոչ մի թառում կամ անտառում:  
ինչի՞ համար էն ահազին  
գանձը կորչի հողի տակին:  
Սրի գնանք, հանեմ տամ քեզ,  
էնքան ուտես, էնքան ուտես...  
Թէ չը լինի ու սուտ գուրս գամ,  
ես հօ էստեղ միշտ կամ ու կամ...

«Գնանք, —ասաւ Աղւէսը: —Թէ կը լինի՝ շատ լաւ, թէ չէ լինի՝ էլի քեզ կուտեմ».

5.

Գնացին:

Վերևից թռչելիս Ազուաւը նկատել էր, որ մի թփում պառկած էր գիւղացու շունը. Աղւէսին տարաւ, տարաւ, դուրս մերաւ, ուղիղ էն թփի վրա:

—Այ, —ասաւ, —էս թփումն է իմ պահուստը:

Աղւէսը ազահ վրա ընկաւ թփին. շունը վեր թռաւ, կոկորդից բռնեց ու դրաւ տակին. Աղւէսը խեղդւելով սկսաւ խրիստալ:

—Այս, ճս... այս, ճս...

զգոյշ Աղւէս,  
փորձանքի մէջ  
ընկնեմ էսպէս...  
Այս, անիրանւ,  
դու սկ ազուաւ...

ինչքան էլ որ լինի զգոյշ,  
չարի առջեն թէ վաղ. թէ ուշ  
էտ է պահւած, Աղւէս աղա,  
զաղաղ, զաղաղ...

Պատասխանեց Ազուան ու թռաւ. ինըն էլ աղատւեց  
գրկուն էր:

## 71. Ծաղրկների երեկոյթը

ա.

Հաւաքւել էին ծաղիկները փոքրիկ մարգագետնի վրա՝ սարի լանջին, անտառի եզերքում։ Հաւաքւել էին բոլորը զարդարւած իրենց գոյնգոյն թանգագին զարգերով։

Այնտեղ էր սուսամբարը՝ կանաչ շրջազգեստը հագին, մարգարիտները՝ սպիտակ պսակները իրենց գեղին զղակներին։

Այնտեղ էին բոժ մնե-


մարգարիտ ըլ՝ սպիտակ աշխուժ ու գւարթ. այնտեղ էր սիրի-սիրին իր կարմրաւոն գանգուր գլուխը ուղիղ պահած։

Եղածաղիկն էլ էր այնտեղ՝ գեղնավուխ, փոքրահասակ. և անուշահոտ կապուտաշւի մանուշակները, որոնք իմրով մի թիթի տակ քաշւած փսփսում էին իրար հետ։

բոժօթիկ

Հապա զանազանները իրենց գոյնցոյն թաւիշ զլիարկներով ու վղները նազանքով թեքած. հապա հպարտ, ցեց մեխակը՝ տատմաւոր պսակը գլխին, կարմիր կամ ճերմակ։

Եւ սպիտակ եղինջը՝ փարթամ տեղեների ծոցում, և կապոյանանուխը, և դեղին պուպուն, որից շուտով սատանի կառքերն երերն են ծնւելու. բոլորն էլ այնտեղ էին, սարի լանջին, անտառի եզերքում, ամառան այդ զով իրիկունը,



մեր-մեր



մանիչակ



շուշան



զանազան



Հէնց որ ահազին կազմու ետեից լու սինը երևաց և նրա արծաթի շողերը ընկան փոքրիկ մարգագետնի վրա, ծաղիկները աւելի զւարթացան, լուսատափիկները աւելի պայծառ վառեցին իրենց լապտերիկները ծառերի սաւերի տակ ու ծղրիդներն էլ աւելի եռանդուն սկսեցին իրենց նւազը։

Թօթե զեփիւռը զուրս պրծաւ յանկարծ անտառի ետեից ու վազ տւաւ մարգագետնով. բոլոր ծաղիկները շնորհալի ողջունեցին իրար ու պարերը սկսան։

Մի տեղ շրջան կազմած եայլի են բռնել, պարում են, պարում միշտ նոյն տեղում. մի ուրիշ տեղ կենտապար է։ Նարգիզը իր երկայն մեխակ վիզը պշրանքով թեքած իր գլուխին է ծամբում թեքե ու սիրուն, և ամբողջ ցողունը դողում է յուղումից։

Իսկ ինչպէս իւելառ թրթում էին կապոյա ու ճերմակ զանզակները՝ շարւած իրենց երկար-բարտկ ցողունին. Ինչպէս շուշանը նազանքով շարժում էր կամաց իր քնքուշ ճերմակ վլուխը. Ինչ եռանդով պարում էին բոլորը. Կապուտիկ պատառուկը թփերի ու ոստերի վրա էր մազզել, որ տւելի լաւ տեսնի. Մինչ ցածում տեսակ-տե-

պտառուկ

ու առանձին կապուտիկ պատառուկ պատառուկ



Անոնքի

սակ խռուերն ու սէզերը ուրախութիւնից  
ծափ էին առլիս:

4.

Յանկարծ կտրւեց ծղբիդի նւազը  
քամին յագնած՝ թողեց ու քաշւեց, ու  
զարերը գաղարեցին:

Եւ հնչեց սոխակի  
քաղցր ու աննման եր-  
գը երգում էր մէկը:  
Երգում էր ու գո-

խում զարնան գովեր, սարերի թարմու-  
թիւնը, ծառ ու ծաղկի գեղեցկութիւնը:

Տաղիկներք յափշտակւած ականջ էին  
շնում անշարժ, անշունչ: Ականջ էր դը-  
ում ամբողջ անտառը, կարծես քարա-  
ցած:

Ահա լուսինը մտաւ  
հանգիստ ամպերի ետեր ու ծածկւեց. մութը  
պտաեց մարգագետինը, Բոլոր ծաղիկները  
կախեցին իրենց ծանրացած զլուխները, քա-  
կեցին իրենց յոգնած աշիկնե-  
րը ու քուն մտան:

Աստառի խօրբից լուսում  
է միայն, հեանւն, սոխակի  
մեղմ ու քնքուշ երգը. կար-  
ծես անուշ օրօք է տում...

Այսից ի՞նչ ռապիկներ գիտես, նրանք ի՞նչպէս նև  
արդարած եւ ինչ՝ են նման:

Չը թ նկալիս որոր ծաղիկները լուս էին սոխակի երգը եւ  
նորդու ցոն մտան:



Պուղու



Նորդի



Հանգակ

մարգագետին—դաշտ, հանդ:  
փարթամ—շքեղ, հարուսա:  
եռանդ—թափ, ուժ և աշխայժ ողիսրութիւն:  
զեփիւռ—բարակ քամի, հովիկ:  
շնորհալի—շնորհ, գեղեցկութիւն ունեցող:  
եայլի—կլոր պար, շուրջ պար:  
կենտա զար—մհնակ զար, մէկ հոգով:  
ցօղուն—խոտի կամ ծաղկի բունք:  
ինելառ—գիծ:  
պշրանք—զարդարանք:  
յուղւել—հոգով անհնգստանալ:

1. Կարմրաւուն, գեղնաւուն, կանաչաւուն—տան միւս  
գոյներն էլ այս ձեռվ: Աւուն մասնիկը Բնչ խմաստ է տալիս:

2. Հետեեալ բառերի արաւաները հանիք—մարգագետին  
եղածաղիկ. գեղնազլուխ, վոքրահասակ, անուշտհոտ, կտապու-  
տաչւի:

3. Նւազը կտրւեց. ցաւը կտրւեց—Բնչ մաքով է գործածւած  
կտրւեց. Բե՛ր ուրիշ օրինակներ:

## 72. Գիշեր

Ննջել են բոլոր ծաղկունքը մուշ-մուշ  
անքուն հովերի սըրինգովն անուշ,  
ննջել է արօտ, ննջել է նոճին,  
ոտնուծոց արել բլուրներն հեռուն.  
հանգիստ են հիմա հսկան ու ճըճին,  
երազում թաղւած խնդում է առուն:

1. Բնչպէս կասես ուրիշ կերպ ծաղկունք, ճըճի:  
2. Նոճի—էլի ուրիշ Բնչ աեսակ ծառեր զիտես, որ ամառ ձմեռ  
կանաչ են մոււմ:

3. Բնչ տեսակ պառկելուն են ասում ոտնուծոց անել:

## 73. Եղալ պապը

ա.

Մեծերը ճանապարհում էին սարը, չորս տարեկան Խիստին լսց եղաւ, պահանջեց, որ իրեն էլ տանեն իրենց հետ Հայրը կոպտութեամբ մերժեց.

—Ի՞նչ է, զլխներիս պատուհաս ենք տանում քեզ Էնտեղ? մինր պիտի, որ բան ու գործ թողած քեզ պահի:

Խիստին աննկարգրելի սուգ-շիւան բարձրացրեց.

—Ես էլ եմ գալիս սարը, ինձ էլ տարէք...

Ու զոյդ թաթիկներով պինդ կպաւ ջորու կապից.

Բարի հօրեղբայրը, որին Խիստին «մեծ հայրիկ» էր պառմ, զիջեց նրա թախանձին ու վերցրեց իր հետ, հարցնելով կատակով.

—Բան կանես Էնտեղ:

—Հա, —պատասխտնեց Խիստին:

—Ի՞նչ կանես:

—Մոտ կը հնձեմ:

—Ի՞նչով կը հնձես:

—Ճպոտով:

—Ճիպոտով խոտ հնձողը սարը կը գնայ բա. ճիպոտով շեն հնձում խոտը, ա խելքի բան, գերանդով են հնձում. ասա՝ գերանդով կը հնձեմ:

—Գերանդով կը հնձեմ, —թոթովեց Խիստին:

—Լաւ, ապրես, որ էտէնց դոչաղ ես: Էլ ի՞նչ կանես, ա տժգահա տղամարդ, մի ասա տեսնեմ:

—Էնա մեր խոտը կը հնձեմ էիր, —ասաց Խիստին ու վերսկը-սեց լոցը, կարծելով որ հօրեղբայրը մերժելու է վերջի վերջոյ.

Բայց նա չը մերժեց. նստեց ջորու փրա, Խիստին առաջին գրեց ու ճանապարհուեց, ուշ չը դարձնելով եղբօր հակառ-կութեանը:

Բ.

Սարում հէնց առաջին օրն էր: Իրենց խոռհարքից Խիս-տին հայեացը զարձրեց զէպի զիմացի ամենից բարձր գա-գաթը նայեց, նայեց վիթխարի սարին ու դառնալով հօրե-բօրը, հարցրեց.

—Մեծ հայրիկ, էն մվ է:

—Ո՞վ, մատաղ:

—Էն է, էն. հրէն է:

Հօրեղբայրը մնաց տարակուսած. կարծում էր, թէ նա մարդ է մատնանշում: Վերջապէս հասկացաւ մի կերպ, որ Խիստին Ելդաշ սարն է ցոյց տալիս:

—Հա, էն, պա, պա, պա, պա, բա զեռ գիտում չես էն ով է, —ասաւ հօրեղբայրը, —էն Ելդաշ պապն է, մատաղ, Ել-դաշ պապը:

—Ո՞ւժ պապն է:

—Սարերի պապն է, սարերի պապը:

—Բա մեր պապը չէ:

—Մեր պապն էլ է, բա, մեր Ելդաշ պապն է:

Խիստին հայեացը ուղղեց զէպի Ելդաշը ու դիտեց զար-մանալի պապին ոտից մինչև գլուխ. նայում էր ապշած, զարմացած անչափ:

Կրին գտոնալով հօրեղբօրն ասաց.

—Ելդաշ պապն էնտեղ ի՞նչ է անում, մեծ հայրիկ:

—Նստած է, մատաղ, հանգստանում է:

—Շատ է բան արել:

—Բա, ի՞նչը ան է բան արել խեղճ Ելդաշ պապը, ի՞նչը ան է սկի գիտում չես. էս խոտերն ու ծաղիկները ողջ նա է սեր-մել. էն արտերն էլ է նա սերմել, հրէն է, էն սիրուն արտե-րը. համ էլ ջրել է, ջրել զիշեր-ցերեկ ու էսենց բուսցրել...

Բա, լաւ, բարի պապէ Ելդաշ պապը. բան է արել, բան, յոզ-

ՆԵԼ է ու հիմի էլ նստել է հանգստանում.

— Գնում եմ Ելդաշ պապի կուշտ, — ասու յանկարծ Խիստին, լացի եղանակով.

Պարզ էր, որ եթէ չը տանէին նրան էն զարմանալի պապի կուշտը, լաց է լինելու:

Հօրեղբայրը, չուզենալով գործից ընկնել, չը լսելու դրաւ նրա պահանջը:

Բայց նա կրկնեց մի քանի անգամ, ձգելով հօրեղբօր փետք ու վերջն սկսեց բարձրաձայն լաց լինել.

— Գնում եմ Ելդաշ պապի կուշտր...

— Դէ գնանք, մատաղ, գնանք տեսնենք Ելդաշ պապին, — ասաւ հօրեղբայրը, վայր դրեց գերանզին ու, շալակելով Խիստիկին, ճանապարհեց դէպի Ելդաշի լանջերը:

— Լաւ խէր կը տաս մեզ, եթէ բան ու գործդ էտ շինես ասաւ նրա ետեկց եղբայրը, շորունակելով իր հունձը:

գ.

Խիստիկի տրամադրութիւնը զւարժացաւ իսկոյն.

— Մեծ հայրիկ, — ասում էր Խիստին, — Ելդաշ պապը ինձ բնչ պիտի տայ:

— Ծաղիկ, — պատասխանում էր հօրեղբայրը:

— Մին էլ բնչ:

— Սառը ջուր:

— Մին էլ բնչ:

— Բա, ծաղիկն ու սառը ջուրը քեզ հերիք չե՞ն:

— Մին էլ բնչ, — կրկնեց Խիստին իր հարցը:

— Հա, պահ, մտիցս ընկել էր. մին էլ մորի, կարմիք ու անուշ մորի.

— Մեր Լուսիկին էլ պիտի տմի:

— Հա:

— Մեր Մարգարիտին էր:

— Հա:

— Բա մեր նանին:

— Նանին էլ պիտի տալ:

— Բա մայրիկին:

— Մայրիկին էլ:

Խիստին թւում էր բոլոր անեցիներին, տան ծառաներին անգամ ու հարցնում՝ բոլորին էլ Ելդաշ պապը կարմիք անուշ մորի է տալու արդեօք:

Հասան Ելդաշի լանջերին: Հօրեղբայրը, վայր դնելով Խիստիկին շալակից, ասաւ:

— Դէ, էս էլ քեզ Ելդաշ պապը:

Նրանք երկուսով սկսեցին ծաղիկներ և մորի քաղեր Խիստիկին աւելի հետաքրքում էր քաղցր համեղ մորին. և Ելդաշ պապին այնչափ սիրեց, որ չէր ուզում իրենց խոտհարքը վերադառնալ: Վերջապէս հօրեղբայրը մի կերպ համոզեց նրան՝ չէ որ պէտք է բան անել այնտեղ խոտհարքում, պէտք է խոտ հնձել, որ ձմեռը գոմէշն ուտի ու կաթը, սեր ու մածուն տայ նրան, Լուսիկին էլ տայ, Մարգարիտին էլ Փառիկին էլ. բա, որ խոտ չըլի, գոմէշը սոված կը մնայ ու կը ցամաքի....

Խիստիկը շատ լուրջ կերպով լսեց այդ պատճառաբանութիւնը ու վերադարձաւ իրենց խոտհարքը հօրեղբօր շալակին՝ ծաղկի ու մորու փնջերը ձեռքին:

— Ելդաշ պապն է տւել է — ասաւ նա, ցոյց տալով փընջերը հօրը, որ մոայլ աշխատում էր:

— Աշքներս լոյս, որ դու էստեղ էտէնց պապ ես գտել քեզ համար, — ասաւ հայրը, չը նայելով Խիստիկի դէմքին:

Օրը շատ ուրախ անցաւ Խիստիկի համար:

Խաղում էր, խաղում ու յանկարծ կանգնում, ընեռում հայեացքը Ելդաշ պապի վրայ, նայում, նայում անշարժ, լուռ զարմանալի պապին ու դառնում հօրեղբօրը հարց ու փորձով: Հարցնում էր՝ Երբ է տեղից վեր կենում Ելդաշ պապը, Ի՞րը

Է քնում, Բնչ է ուտում, հրտեղ է Ելդաշ պապենց տռնը,  
և չի թակիլ իրեն, եթէ շատ մորի քաղի...

Հօրեղբայրը մի առ մի զատասխանում էր նրա հարցերին, շարունակելով հնձել խոտը:

Հետևեալ օրից նրա բանն ու գործը Խիստիկին Ելդաշ առնել բերելը գարձաւ:

Դ.

Երրորդ օրւայ երնկոն էր. Պատրաստւում էին ընթրելու ու պառկել քնելու, երբ Խիստին յանկարծ լրջացաւ ու լացի եղանակ տալով ձայնին ասաւ.

—Ելդաշ պապի ծոցումն եմ քուն ըլում:

—Ընդէ՛, էտ էր պակաս. դէ գնա, —ասաւ հայրը, դառնալով եղբօրը, որն այնպէր ձեացրեց, թէ չը լսեց Խիստիկին:

Նա կրկնեց իր ասածը ու տեսնելով, որ քառականջի են տալիս, սկսեց լաց լինել, ասելով.

—Ելդաշ պապի ծոցումն եմ քուն ըլում. ը՛, ը՛, ը՛, ը՛....

Հայրը բղաւեց վրան: Խիստիկը մտա. հօրեղբօր թեփ տակը ու շարունակեց իր լացը, պահանջելով որ Ելդաշ պապի ծոցը տանեն իրեն՝ այնտեղ քնելու:

Հարկանները լսեցին ու միջամտեցին.

—Որ Ելդաշն էտ մարդի համար պապ էք դարձրել, ինչ ուղում է՝ կատարեցէք, թողէք էտ երեխէն Ելդաշ պապից իր մուրազը առնի, Գնացէք նրա լանջեցին գիշերեցէք. հեռու չի հօ. Դրա խաթրին մենք էլ կը գնանք:

Լուսիկենք իրենց հարեաններով քոչեցին Ելդաշի լանջերը և գիշերեցին այնտեղ:

Խիստիկի քէֆին ք. Փ չէր հաս ում:

Երբ պառկեցին քնելու, կպաւ հօրեղբօր կրծքին, հարցնելով.

—Մեծ հայրիկ, Ելդաշ պապի ծոցումն եւք քուն ըլլում կմի:

—Հա, —պատասխանեց հօրեղբայրը

—Ելդաշ էլ պիտի էստեղ քուն ըլլինք:

—Հա:

—Ելդաշ պապը կուիւ չանիլ բամ:

—Զէ. քեզ հետնա հնց կուիւ կասի. նա քեզ շատ է սիրում:

—Մեր Լուսիկին էլ է սիրում, —հարցրեց, մտաբերելով իր քոյրիկիներին:

—Հա:

—Մեր Մարգարիտին էլ:

—Հա:

—Մեր Փառիկին էլ:

—Հա:

Խիստիկը էլ հարցեր չը աւեց:

Նրա մշոցը լսեց յանկարծ, քնի դիրկն ընկաւ Ելդաշ պապի ծոցում ու մինչեւ լուս մուշ-մուշ քնեց:

Մինչև սարից առևն քոչելն ստիպւած էին գիշերել Ելդաշի լանջերին:

Մի երեկոյ Խիստին հարցրեց.

—Բա Ելդաշ պապի մօրուքը մուր է.

—Ելդաշ պապի մօրուը էս խոտն է է, էս խոար, էս որ վրէս նստած ենք, —ասաւ հարեաններից մէկը. —ծաղիկներն ու մորին Ելդաշ պապի մրժիցն ես քաղում ամեն օր:

Շաբաթ օրը քոչեցին սարից: Կէսօրից յետոյ Խիստիկը վերջին անգամ այցելութեան գնաց Ելդաշ պապին, հօրեղբօր շալակն ելած: Նրանք մի սին ծաղիկներ քաղեցին, ամենից շատ եղած սղիկ. մոտի էլ քաղեցին: Փսջեր հիւսեցին՝ տան բոլոր փոքրիկների ու մեծերի համար, որոնց անունները մինմին թւում էր Խիստիկը ու պահանջում, որ իւրաքանչիւրի համար առանձին փունջ լինի, ամենից մեծն ու սիրունը մեծ նանի համար, որին Խիստիկն իր մայրիկից աւելի էր սիրում:

Եթ պատրաստում էին ճանապարհել Ելդաշի լանջերից, Խիստին գարձաւ հօրեղբօրն ասելով.

—Մեծ հայրիկ, Ելդաշ պապի մօրուքէն պաշեմ:

—Հա, մատաղ, պաշի, մի լաւ պաշի, —ասաւ հօրեղբայրը, —Է, մին էլ եկող տարւայ ամառը պիտի գանք Ելդաշ պապի կուշը: Իմ մտից ընկել էլ, թէ ասեմ պաշի, բա: Մեր Ելդաշ պապն է ախր. Էս սարերը պահի պիտի էստեզ:

Խիստիկը թեքւեց ու պաչպչորել սկազ Ելդաշի խոտերն ու ծողիկները:

Դրի՞ք՝ Ելդաշ պապը ի՞նչ գործեր է արել եւ բնչ տաւ Խիստիկն:

Դրի՞ք՝ ի՞նչպէս Խիստիկը վերջին օրը քաժանւեց Ելդաշ պապից:

Պատմիք ի՞նչպէս պատմեց այս ամենը Խիստիկը ինքը մի քանի տարի յետոյ դասարանում, երբ արդէն աշակերտ էր:

պատուհաս — պատիժ:

սուգ ու շիւան — լաց ու կոծ:

թախանձ — ինդրանք, ազաշանք:

պատճառաբառութիւն — բերւած պատճառեր:

բնեռել — մեխել, ցցել:

քառականջի տալ — խուլ-ականջ ձեանալ, սուտ խուլ ձեանալ:

մուրտղ — փափաղ, սրտի ցանկութիւնը:

խաթը (թուրք.) — սէր ու պտաիւ:

1. Մատնանշել — ասաւ աբմատները:

2. Ի՞նչ ասել է գործից ընկնել, հօրեղբայրը չը լսելու գըրաւ, գոմէշը ցամաքել է, բէֆին բէֆ չէր հասնում:

3. Սարի գագաթը, սարի լանջը, սարի ստորոտը (փէշը) մը մասերն են:

## 74. Դաշտ

Եյ, իմ գաշտ արձակ,  
արձակ-ընդարձակ,  
փուել ես, իմ դաշտ,

փուել տարածւել,  
փուել տարածւել,  
ոև ծովին հասել:

Ֆեղ հիւր եմ եկել,  
եկել եմ ոտով,  
մհնակ չեմ եկել,  
եկել գերանդով.  
Կէս օրւայ քամի  
փէիր իմ դէմքին,  
հնիվ արա, շարժիր  
դաշտը ահագին:

Զընգան, գերանդին,  
շողա ետ, առաջ,  
աղմկիր, պառկիր,  
այ, հնծած կանաչ,  
Ծուէք, ծաղիկն եր,  
կռացէք գետին,  
խոտի հետ ձեզ էլ  
կտրեց գերանդին:

## 75. Օրհնւի քո սարը

Սարի ստորատում աղբիւր էր բղխում:

Ռարաւ ճամփորդը խմեց աղբիւրից ու ասաւ.

— Օ սայ, սիրտս հովացաւ: Օրհնւի քո սարը...

Սարի լանջերը կանաչն էր ծածկել:

Աշխարի հօտը արածեց թաւիշ խոտը, նստեց որոճաց.

— Օխայ, կերանք, կշտացանք: Օրհնւի քո սարը:

Սարի փեշերին անտառ էր բուսեր:

Խղճուկ պառաւը ցախը հաւաքեց, կապեց ու ասաւ.

— Շէն մնաս, անտառ, Օրհնւի քո սարը...

Սարի կուրծքը լիքն էր հանքերով:

Բանւորը մուրճով բանդում էր հողը, հանքերը հանում ու տառւմ.

— Ի՞նչ հարստութիւն... Շէն մնաս, այ սար...

Սարի գագաթը երկինք էր հասել:

Արծիւր եկաւ, նստեց գագաթին, նայեց չորս կողմն ու տառւ.

— Ես բուն կը գնեմ բարձր գագաթիդ: Օրհնւես, այ սար:

Նկարագրի այս սարը:



## 76. Կեօրին

**Մեր** գիւղից վեր մինչն էսօր  
կայ ուենի մի սըգւոր:

**Մեծ** անտառից նա զատւած,  
մարդու կացնից ազատւած,  
կանզնած է զեռ ու շոգին  
հով է տալի մըշակին:

**Գիժ,** լեռնային մի վտակ  
խոխոջում է նրբա տակ,  
խաղում, կան չում մարգերին:

Պատմ' ի ը՝ զու ի՞նչպէս, որտեղ եւ ում հետեւ լողանում ա-  
մառք:

զատել—բաժանել, առանձնացնել:  
հեի-հե—հեալով, արագ շունչ քաշելով:

1. Լողանալ—լող տալ—ի՞նչ տարբերութիւն կայ:
2. Գոյն-գոյն, տեսակ-տեսակ, պէս-պէս—ի՞նչ ասել է:
3. Խաղ անել—խաղալ, պաչ անել—..., կատակ անել—...  
ծաղր անել..., բաց անել..., վար անել—..., բըշ անել—...
4. Թիթեռնիկ ոսկեթև—էլ ի՞նչ ահսակ թե ունեցող թիթեռ-  
նիկ:

## 77. Աղբիւրը

Սարի լանջին, ժայռի տակ,  
ջուր էր բըխում սառնորակ,  
ու ցրւելով խօտերում,  
ի զուր ճահիճ էր դառնում:

Նրա առջե մի խոր գուշ  
շինեց հովիւն ու անուշ  
խաղ ասելով նա տարաւ  
ջեց հօտը իր ծարաւ:

Պախրէն անցաւ էն սարից  
շոքից հանած չոր լեզուն.  
կուշտ-կուշտ խմեց աղբիւրից,  
ապա նայեց Աստըծուն:

Անցւորն եկաւ տօթակէզ,  
սառն աղբիւրին ոք հասաւ,  
գլխարկն առաւ ու շոքեց՝  
խմեց, սիրտը հովացաւ:

Ու աըւաւ իր օրհնանքը  
անցւոր մարդը էն բարի.  
«Քո շինողի օր-կեան ըը  
ջրի նըման երկարի...»:

սառնորակ—սառը:  
գուշ—մի կտոր փարած դաշտ:  
պախրա—եղնիկ:  
իեղդ-շոք—իեղդող շոք, տօթ:

## 78. Մոռ քաղելու

1.


Եղբայրներս իրենց ընկերների հետ խօսք էին կապել գնան մոռի: Այնքան արի, որ համաձայնեցին ինձ էլ հետները տանեն:

Յուլիսի կէսն էր: Մորին արդէն վերջացել էր. մոռն էլ դանւում էր միայն աւելի բարձր տեղերում:

Արել հազիւ էր գլուխը հանել զիմացի սարի ետևից, երբ մենք ամարանոցները թողինք: Շարունակ պիտի բարձրանայինք:

Շուտով հասանք վերի արտերին:

Այնտեղ հունձը գեռ նոր էին անում: Գիւղացիք կեռ ման-



գաղները ձեռներին, անընդհատ կռանում էին, հնձում, գրկի մէջ հաւաքում, ապա խուրձեր կապում ու ցից կանգնեցնում:

—Բարի աշողում, —ողջունեցինք մենք:

—Աստծու բարին, —պատասխանեցին հնձւորները միաձայն: Մէկը նրանցից բաժանւեց և մի մեծ խուրձ բարձր պահած՝ մօտեցաւ մեղ: «Փէշքէշ է», —կանչեց նա:

Եղբայրս սև փող տւաւ նրան, ու առաջ անցանք:

Շաւիղը աւելի սեպ էր դառնում և հետզիւտէ անյայտնում թուփերի մէջ:

Մէկ էլ ետ նայեցի:

Ցածում երեսում էին գիւղերը գետնափոր տներով. տեղ տեղ միայն կարմրին էին տալիս կղմինդրով ծածկւած տանիքները. Սայլի ճամփան ոլոր-մոլոր ձւում էր գիւղերի միջով. Դաշտերում և արաերում շարքերով բազսած էին խոռոշի գեղերն ու ցորենի կիտուկները. մէջէմէջ գորգերի նման, ուին էին տալիս նոր վարած ցելերը. Հեռում, դիմացի սարի անտառի միջից, մի ծուխ էր բարձրանում վեր. ածխարարները ածուխ էին այրում:

2.

Շաւիղը կորցրինք: Մազլցում էինք, թուփերից բռնում, իրար ձեռք տալիս, իրար վեր քաշում, ժայռից ժայռ բարձրանում. վերջապէս տեղ հասանք:

Ի՞նչքան մոռ կար: Թուփերը կարմրել էին. Խսկոյն ցրւեցինք և ազահութեամբ սկսեցինք ուտել հիւթալի պտուղները ու հաւաքել զամբիւղների մէջ: Իրար հրում էինք, ձգում էինք վշոտ ճիւղերի մէջ, ձեռներս չանգուում, շիծաղում, երգում, շւացնում:

Չը նկատեցինք էլ՝ թէ ինչպէս մեր զամբիւղները լցւեցին: Թարմ տեսներով ծածկեցինք ու ճամփայ ընկանք: Ուոշեցինք իջնել սարի միւս լանջով:

3.

Շառերը աւելի ու աւելի խտանում էին և վիթխարի դառնում: Աստանի գովութիւնը անչափ ախորժալի էր: Յանկարծերեաներիս դիպաւ ջրի խոնաւութիւնը: Ջրվէժի քաղցր շառաշը սկսեց խառնւել տերեաների սօսափիւնի ու թոշուների կանչերի հետ:


—Գետակը, գետակը... Տղերը, ապա տեսնենք՝ ով աւելի շուտ կը հասնի...

Բոլորս էլ սկսեցինք ցած վազել: Էջքը դժւար էր: Ոտնե-

բըս սոհում էին, ամուր բռնում էի ծառերի ընից ու թփերից,  
ոք չը լինի թէ թափեմ զամբիւղներս:

Քարքարոտ ձորի խորքում կայտառ թռչկոտամ էր լեռ-  
նային վտակը: Զամբիւղներս արեի շողից թաքցրի մի թփի  
տակ ու քարից բարցառկելով հասայ րնկերներիս: Շրջա-  
կայ քարերը շուտով ծածկւեցին մեռ գոյնզգոյն շապիներով,  
գուլպաներով, գլխարկներով: Գութէ միաժամանակ թափւե-  
ցինը ջուրը:

Ցրտից ճշացի: Գոռում գոչում էինք, իրար ջուրն էին  
կոխում, սրսկում, ջրի տակն էինք սուզում, սէջրի վրա  
ձգուում, դուրս վազում ափը, նորից վտակի մէջ թռչում,



անցնում ջրվէժի տակ ու փրփուրի մէջ պառկում: Մեծերը  
նկատեցին, որ ես ցայտերից շատ էի վախենում, բոլորն էլ  
ինձ վրա յարձակեցին ու ջաւր էին ածում ոչքերիս, բերտ-  
նիս, ականջներիս: Շնակտուր դուրս պրծայ Ջրի միջից, վա-  
զեցի հեռու, նստեցի մի մերկ քարի գլխի ու սկզբցի արեի  
տակ տաքանալ: Ցետոյ կամացուկ մօտնցայ, շորերս արտ  
հաւաքեցի ու փախայ լողացողների մօտից:


Այնպէս թեթև էի զգում ինձ լողանալուց յետոյ: Ախոր-  
ժակս բացւել էր: Շտապեցնում էի ընկերներիս, որ դուրս  
գան նստենք ճաշի:

Մեր բերած մթերքը շարեցինք կանոչ խառերի ու լոյն  
աերկների վրա, ծառերի խիտ սաղարթի տակ և ճաշ արինք:  
Մարտում էինք թէ չէ, վազ էինք տալիս ցած վտակի մօտ:  
այնտեղ քարի տակից բղխում էր մի սառնորակ աղբիւր:  
կունում էինք ու հէնց ճիշտ ակնից ջուր ծծում...

Ճաշից յետոյ, երբ բոլորը դէս ու դէն ցրւեցին, ես ձգւե-  
ցի մի հաստարմատ թիկու տակ կանաչ խոտի վրա: Անտա-  
ռը լցւած էր մեղմ ձայներով: Երբեմն հովը սրւսըւացնում  
էր տերեները: Խսկոյն ընեցի: առաւօտը շատ վազ էի զարթ-  
նել...

4.

—ՀԷյ, հԷյ, ժամանակ է, ժամանակ է,—կանչում էր մեր  
ուղեցոյցը:




Քնից վեր թռայ...

Արել արդէն իջել էր, երբ սկսեցինք մօտենալ մեր վե-  
ցին: Խընիթների բակերից բարձրանում էին ծխի սիւներ, քա-  
մին կալերից զարմանի փոշին տանում էր հեռոն: Նախի:  
ըը մանում էր գիւղը: Գիւղում աղմուկ էր: Հորթերը բառա-  
չում էին, շները հաշում, օդի մէջ զիլ ծղրտալով ծիծեռնակ-  
ների խմբերը սուր սլանում էին և պտոյտներ անում:

Մտանք գիւղը: Աղբիւրի մօտ հաւաքւել էին հարսների  
ու աղջիկները՝ սափորներով, կծերով:





## Յանկ

1. Ամենից լաւ տունը . . . . .	3
2. Առաջին դասը, ըստ Ամիշիսի . . . . .	5
3*. Վեր կաց, Դ. Մելոյեանի (կրճ.) . . . . .	7
4. Փոքրիկ ձիավար, Ռաֆֆիի . . . . .	7
5*. Այգեկութ . . . . .	9
6. Դեղձ . . . . .	10
7*. Գրւզացին ու ծառը . . . . .	11
8. Զախորդ Փանոսը . . . . .	12
9*. Տրեաթափ . . . . .	16
10. Կօչիկ սրբող Թռմասը . . . . .	17
11*. Աշուն, Պահարէի . . . . .	18
12. Հերոսը, ըստ Տագորի . . . . .	19
13*. Մայրը, ըստ Պլէշէնի, թարգ. Աթ. Խնկոյեանի . . . . .	22
14. Գգանքի կարօտ . . . . .	23
15. Պառաւի կատուն . . . . .	24
16*. Կոյրերի կործիքը . . . . .	26
17. Ռոբինզոն . . . . .	27
18*. Աղւէսը . . . . .	36
19. Վայրենին ու նամակը . . . . .	38
20*. Ժամանակը, Դ. Դեմիրճեանի . . . . .	40
21. Քարը . . . . .	40
22. Երկու հարուստ . . . . .	43
23*. Ծորնատէրն ու ջաղացպանը, Աթ. Խնկոյեանի . . . . .	44
24. Ամենալաւ վկայականը . . . . .	46

25*. Մկների ժողովը, Ա. Խնկոյեանի . . . . .	48
26. Քեռի Սիմօնի նտպառտակը . . . . .	50
27*. Ճ զուռն ու մրջիւնը, Ա. Խնկոյեանի . . . . .	54
28. Քաջ Նազարը . . . . .	55
29. Ասիւծի երազը . . . . .	64
30*. Երազ, Հ. Հայրապետեանի . . . . .	65
31. Կապիկը . . . . .	66
32*. Կռունկն ու սագը, Ա. Խնկոյեանի . . . . .	69
33. Բոբը . . . . .	70
34*. Դեղձանիկն ու տատրակիկը, Ա. Խնկոյեանի . . . . .	75
35. Աշերտ Օ անը . . . . .	75
36*. Գարոն, ամառ, Պահարէի . . . . .	78
37. Զնագնդի, Սիմակի . . . . .	79
38.* Պոչատ աղւէսը Ա. Խնկոյեանի . . . . .	82
39. Գրագը տղան, ըստ Ամիշիսի . . . . .	83
40*. Քուն, Դ. Դեմիրճեանի . . . . .	88
41. Արու Հասանի սաշիկները . . . . .	89
42*. Արուն ու աղւէսը, Ա. Խնկոյեանի . . . . .	94
43. Առաջին ձնծաղիկները . . . . .	95
44*. Ծիծեռակ, Գ. Քաթիպայի . . . . .	97
45. Հրաշալի հատիկը . . . . .	98
46*. Փոքրիկ երկրագործ, ժողով . . . . .	100
47. Իր զիսի տէր կատուն, ըստ Կիպրինկի . . . . .	101
48*. Փակւած ու ազատ, Լ. Մանէլեանի . . . . .	109
49. Արևի մօտ, Ա. Խահակեանի . . . . .	109
50*. Հսկան . . . . .	112
51. Ծիլն ու ապառաժը, ըստ Վ. Փափազեանի . . . . .	117
52*. Սունկի ծնունդը . . . . .	119
53. Զատիկ, ըստ Պ. Պոշեանի . . . . .	120
54*. Գարուն առաւօտ . . . . .	121
55. Մայրը . . . . .	123
56*. Գտան ու գայլը, Ա. Խնկոյեանի . . . . .	124

57. Սրտուտ աղան.	226
58*. Ճանձ, Ա. Խնկոյեանի	230
59. Թաւամազ մեզուն	130
60*. Մաի հարսնիքը, Դ. Դեմիրճեանի	134
61. Ալւանն ու Շրւանը, Սիմակի	135
62*. Գորտն ու կովը, ըստ Ա. Խնկոյեանի	137
✓63. Սուտլուկ որսկանը	138
64*. Գորտն ու աղուտը, Ա. Խնկոյեանի	140
65. Ազուաների յարձակումը, Շուշանիկ Տէր-Նիկողոսեանի (կրժ.)	140
66*. Մայիսը, Հ. Հայրապետեանի	143
67. Մեր կռունկը, Նւարդ Քի ըքճեանի (կրժ.)	144
✓68*. Ճնճղուկներ, ժողով.	146
69. Սկիւռը, թարգ. Ա. Խնկոյեանի	147
✓70*. Զարի վերջը	148
71. Մաղիկների երեկոյթը	154
72*. Գիշեր, Դ. Դեմիրճեանի	157
73. Ելդաշ պապը, Ստ. Տէր-Աւետիքեանի (կրժ.)	159
74*. Դաշտ. Կուցովի, թարգմ. Ա. Խնկոյեանի	164
75. Օրհնւի քո սարը, Ա. Խնկոյեանի	165
76*. Կէսօրին	165
77*. Ազբիւր	167
✓78. Մոռ քաղելու.	168
79*. Զանասէր հնձւորներ ժողով	173

Մեր հեղինակութիւնները, մեր կաղմած յօդւածները, մեր թարգմանութիւններն ու փոխադրութիւնները ստորագրութիւն չեն կրում.



2013  
3685



